452
=451=

[illegible] ՀՍԽՀ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԸ ԽՍՀՄ-Ի ԽԱՂԱՂ ԱՇԽԱ-
ՏԱՆՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԱՆՆ Է

№ 28

# ԲԱՆԱՁԵՎԵՐ
## ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ
## ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

«ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1930

ԱՍՖԽՀ ՅԵՎ ՀՍԽՀ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՋԸ ԱՎԻԱՔԻՄԸ ԽՍՀՄ-Ի ԽԱՂԱՂ ԱՇԽԱ-
ՏԱՆՔԻ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԱՆՆ Է

355 (062) (47-41)

№ 28

# ԲԱՆԱՁԵՎԵՐ
## ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ
## ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

«ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1930

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖ
Գրառեպվար 5194 բ.
Պատվ. № 2722
Տիրաժ 2000

ՀԱՄԱՐ
11-244529գ

# ԱՌԱՋԱԲԱՆ

Պաջը–Ավիաքիմի Կենտրոնական Խորհրդի նախագահության որոշման համաձայն, հրատարակության են տրվում Պաջը–Ավիաքիմի Համամիութենական յերկրորդ համագումարի որոշումները:

Պաջը–Ավիաքիմի յուրաքանչյուր կազմակերպություն, յուրաքանչյուր անդամ ուշադրությամբ պետք է ուսումնասիրի այդ որոշումները և կիրառի ամենօրյա աշխատանքների ասպարեզում:

Անհրաժեշտ է նաև լայն կերպով մասսայականացնել այս որոշումները խորհրդային ամբողջ աշխատավորության շարքերում:

Այս նպատակով Կենտրոնական Խորհուրդը ծրագրել է հրատարակել նաև մի հանրամատչելի բրոշյուր համագումարի արդյունքների մասին:

Ուսումնասիրենք և տարածենք համագումարի որոշումները:

Հիմնովին վերակառուցենք մեր աշխատանքի մեթոդները՝ ինքնաքննադատության, սոցմրցման և հարվածայնության հիմունքներով:

Բարձրացնենք աշխատանքի որակը և արագացնենք աշխատանքի տեմպը(թափը):

Այս է պահանջում մեզնից պատերազմի վտանգի սրվելը և յերկրի պաշտպանության ամրապնդման անհրաժեշտությունը, այս են պահանջում մեզնից սոցիալիստական շինարարության առաջ դրված խնդիրները:

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պաջըավիաքիմի յերկրորդ Համամիութենական համագումարը լսելով և քննարկելով ԽՍՀՄ Պաջըավիաքիմի Միության Կենտրոնական Խորհրդի հաշվետվությունը՝ հաստատում է վերջինս և ընդունում է, վոր ղեկավարության քաղաքական գիծը ճիշտ է, իսկ Կենտրոնական Խորհրդի աշխատանքը՝ բավարար:

## I ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎՏԱՆԳԸ ՅԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԽՍՀՄ Պաջըավիաքիմի II Համամիութենական համագումարը հաստատում է, վոր ԽՍՀՄ միջազգային դրության համար բնորոշ և պաշտպանության բնագավառում Ընկերության խնդիրները վորոշող է հանդիսանում իմպերիալիստների ագրեսիվ յելույթների ուժեղացումն ընդդեմ ԽՍՀ Միության՝ պրովոկացիան Չին-Արևելյան յերկաթուղու վրա, անդադար թշնամանքը Խորհրդային Միության դեմ բուրժուական մամուլի կողմից, վոր՝ ընդդեմ բայլշևիկների իր պաշտպանության տակն է առնում ասածուն, կուլակներին և կեղծ դրամ կարողներին, Ֆրանսական պարլամենտականների կողմից սպիտակ գվարդիականների յելույթին աջակցել և այլն:

Համաշխարհային կապիտալիզմի հակասություններն ավելի ու ավելի յեն խորանում, վորի ակնբախ արտահայտությունն է հանդիսանում Հ. Ա. Միացյալ Նահանգների կրիզիսը: Կապիտալիստական առանձին պետությունների միջև սրվում է շուկաների, կապիտալ արտահանելու ու կապիտալի գործադրման ազդեցության շրջանների համար մղվող անողոք պայքարը, ե՛լ ավելի ուժեղանում է իմպերիալիստական պատերազմների վտանգը: Ուժեղանում է բուրժուազիայի հարձակումը բանվոր դասակարգի վրա, աճում է գործազրկությունը:

Մյուս կողմից՝ ԽՍՀՄ ինդուստրիալիզացիայի հաջողությունները, կոլեկտիվացման հզոր ծավալումը, կուլակության, վորպես դասակարգ, վերջ տալու ուղղությամբ բռնած գծի կայուն ու հետևողական անցկացումը, սոցիալիստական շինարարության հաջողությունների հեղափոխիչ ազդեցությունը միջազգային պրոլետարիատի և գաղութային ճնշված ազգությունների վրա, —այս բոլորը իմպերիալիստների կատաղությունն է առաջ բերում ընդդեմ ԽՍՀՄ ու հենց դրանով ե՛լ ավելի ուժեղացնում, մոտեցնում է պատերազմի և Խորհուրդների յերկրի վրա հարձակվելու սպառնալիքը:



Պաջըավիաքիմի II համագումարը՝ ամբողջովին և լիովին հավանություն տալով խաղաղության այն կայուն հետևողական քաղաքականության, վոր տանում է խորհրդային կառավարությունը, և վորը ապահովում է Խորհրդային Միության անկախությունը՝ դիմում է կազմակերպության բոլոր անդամներին և խորհրդային ամբողջ հասարակայնության՝ կոչ անելով, վոր նրանք բոլոր ջանքերը գործադրեն ուժեղացնելու Խորհրդային Միության պաշտպանունակությունն ու բանվորագյուղացիական Կարմիր բանակի հզորությունը:

Խորհրդային Միության միջազգային և ներքին ամբողջ կացությունը Ընկերությանն առաջադրում է հետևյալ մարտական խնդիրները.

1. Աշխատավորների ռազմական նախապատրաստում:

2. Ընկերության անդամների ակտիվ մասնակցությունը յերկրի ինդուստրալիզացիայի և քիմիզացիայի գործին:

3. Ընկերության ամենակերպ մասնակցությունը գյուղատնտեսության կոլեկտիվացման և կուլակության, վորպես դասակարգ, վերջ տալու խնդիրների հաջող իրագործման աշխատանքին:

4. Ընկերության մասնակցությունը սոցիալիզմ կառուցողների նոր կադրեր նախապատրաստելու գործին:

## II ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Արդյունաբերության հզոր աճումն ապահովում է ռազմական տեխնիկայի հետագա զարգացումը: Մասնավորապես բանակի մեխանիզացիան ու մոտորիզացիան աշխատավորների ռազմական նախապատրաստման բնագավառում առաջ են քաշում մասնագիտական ու տեխնիկական ճյուղերի վճռական ծավալման անհրաժեշտությունը:

Հավանություն տալով ռազմական գիտելիքների խմբակներում ուսուցման ժամանակավոր վարժա-շարքային միավորների ձևերին անցնելուն և աշխատավորների մի քանի կատեգորիաների պարտադիր զինվորական վարժեցման պրակտիկային, վոր կատարվում է ռազմական նախապատրաստության շրջանում տարվող հիմնական մասսայական կա-
նախապատրաստության շրջանում տարվող հիմնական մասսայական կա-
ռազմական նախապատրաստման առանձին տեսակների կամավորության սկզբունքների աղավաղման և զինվորական մշտական միավորներ ստեղծելու փորձերը, վոր տեղի յեն ունեցել մի շարք կազմակերպությունների մեջ:

Դրա հետ միասին աշխատավորների զինվորական նախապատրաստման խնդիրները հրաձգային աշխատանքի հետևողական ռազմականա-

ցում, այլ և սպորտի տարբեր տեսակների ռազմականացում են պահանջում։

Ռազմական աշխատանքի զարգացումը պահանջում է, որ Ընկերությունն ուժեղացնի իր ուշադրությունը ռազմածովային մասսայական աշխատանքի և ծովափնյա ու գետափնյա կետերում այդ աշխատանքի ծավալման ուղղությամբ, այլ և հեծելային գործի զարգացման և որբանապրոռում գծային աշխատանքի հետագա զարգացման ուղղությամբ՝ Պաջրավլիաքիմի գավառական և վերադաս կազմակերպությունների ընդհանուր ղեկավարությամբ։

Համագումարը նշում է, որ ռազմական նախապատրաստման մասսայական աշխատանքն աշխուժացնելու նպատակներով անհրաժեշտ է դրա մեջ մտցնել սպորտացման տարրեր և մրցակցության մեթոդներն ուժեղացնել՝ ուսուցման ծրագրերը սովորողների համար աշխատանքի առավել հետաքրքիր լրացուցիչ ձևերի հետ կապակցելով։

Համագումարն առանձնապես ընդգծում է, որ կարևոր է աշխատավորներին թիկունքի օդա-քիմիական պաշտպանության համար նախապատրաստել, մի գործ, որ մինչև այժմ միանգամայն անբավարար տեղ է բռնել ինչպես Ընկերության գործունեության, նույնպես և հատկապես պետական և հասարակական համապատասխան կազմակերպությունների աշխատանքի ընթացքում։ Համագումարը, հաշվի առնելով ռազմաքիմիական հարձակման լուրջ վտանգը, անհրաժեշտ է համարում ամենակարճ ժամանակամիջոցում այդ բնագավառում բեկում առաջ բերել։ Համագումարը առաջադրում է բոլոր արդյունաբերական կենտրոններում ու առաջին հերթին սահմանամերձ գոտում աշխատավորների միջև օդա-քիմիական պաշտպանության նախապատրաստման աշխատանքն ամենալայն ծավալելու խնդիրը՝ առանձին ուշադրություն դարձնելով կանանց ուսուցման կազմակերպությանը, որոնք թիկունքի պաշտպանության հիմնական կադրերից մեկն են հանդիսանում։ Այս խնդրի լուծմանը պետք է այժմվանից լայնորեն ներգրավվեն անհամեմատ ավելի մեծ չափերով, բոլոր պետական, տնտեսական և արհեստակցական կազմակերպությունները։ Համագումարն առաջարկում է Կ. Խ., որ նա բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնի բնակչությանը մասսայական եժան քաղաքացիական հակագազով ապահովելու համար։

Հաշվի առնելով, որ գիտության և տեխնիկայի դերն ավելացել է յերկրի պաշտպանության գործում, Համագումարը հատուկ ուշադրություն է դարձնում գիտական-հետազոտական աշխատանքի կազմակերպման վրա և առաջարկում է Կ. Խ. և տեղական կազմակերպություններին, որ նրանք բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնեն գիտական-հետազոտական սեկցիաների աշխատանքն ամրապնդելու, այդ աշխատանքին մասսայական բնույթ տալու, համապատասխան կադրեր ընտրելու և պաշտպանության հարցերի վերաբերմամբ չուտափույթ կերպով կենտրոնական գիտական-հետազոտական ինստիտուտ ստեղծելու ուղղությամբ։



2. ԽՍՀՄ ինդուստրիալիզացիայի խնդիրները, ինդուստրիալիզացիայի արագ տեմպերի ապահովման գործում Ընկերության աջակցության պահանջը, —Պաջրավաքիմին միանգամայն կոնկրետ խնդիրներ են առաջադրում ԽՍՀՄ ավիացիոն և քիմիական շինարարությանն աջակցելու ուղղությամբ գործունեությունն ընդարձակելու բնագավառում, այլ և մոտորիզացիայի ուղղությամբ աշխատանքը զարգացնելու բնագավառում։

Պաշտպանության բնագավառում Պաջրավլիաքիմի վրա դրված բոլոր խնդիրները կատարելով՝ Ընկերությունը պետք է անմասն չմնա այն հիմնական ձեռնարկումներին ու կամպանիաներին, որ անցկացնում են կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը, այլ պետք է դրանցում առավելագույն նախաձեռնություն և ինքնագործունեություն յերևան բերի։

Մատնանշելով, թե Ընկերությունը անհրաժեշտորեն պետք է ակտիվ աջակցի քաղաքացիական ուժեղ ավիացիայի զարգացման և Պաջրավլիաքիմի ներսում ավիացիոն կադրերի մասսայական նախապատրաստում կազմակերպելու գործին՝ պլաներիզմը ծավալելու, թեթև մոտորային և տեղական ավիացիայի կազմակերպման, դպրոցական և աերոակմբային շինարարության ծավալման միջոցով՝ Համագումարն անհրաժեշտ է համարում խորհրդային դիրիժաբլներ կառուցելու գործի կազմակերպումն ուժեղացնել։

Համագումարն ընդգծում է թեթև մոտորի և թեթևամոտոր ինքնաթիռների սեփական արտադրության հատուկ կարևորության խնդիրները, այս խնդրի լուծումն Ընկերության ավիաաշխատանքի մասսայական հաջողության հիմնական պայմանը համարելով։

Համագումարն առաջարկում է ԿԽ, որ նա բոլոր միջոցները ձեռք առնի այդ խնդիրը արագությամբ իրագործելու համար։ Միևնույն ժամանակ համագումարը պարտադրում է տեղական կազմակերպություններին, որ նրանք ապահովեն ավիաշինարարության այս ճյուղի նյութական աջակցությունն ու հայտաբերեն տեղերում յեղած ավիագույքի պահանջը։

Ընկերության կոնկրետ խնդիրները ԽՍՀՄ քիմիզացիայի աջակցելու գործում պահանջում են, որ Ընկերության ներսում քիմիական աշխատանքի տեսակարար կշիռը վճռականապես փոխվի։ Նշելով, որ վերջին ժամանակներս աշխատանքի այս տեսակը յետ է մնում՝ համա-

գումարն առաջարկում է ԿԽ ու բոլոր կազմակերպություններին, որ նրանք նորից իրենց ուշադրությունը կենտրոնացնեն հետևյալ խնդիրների լուծման վրա.— աշխատավորների քիմիական անգրագիտության լիկվիդացիա, քիմիական պարարտանյութեր և գյուղատնտեսական վնասատուների դեմ քիմիական միջոցներ, առաջին հերթին՝ համայնացված հատվածի սահմաններում, գործադրելու պրոպագանդ և աշխատանք: Ընկերությունը պետք է խորհրդային ամբողջ հասարակայնության ուշադրությունը մոբիլիզացիայի յենթարկի և գործնական աշխատանք ծավալի քիմիական արդյունաբերության հետագա ճյուղերին օգնելու կոնկրետ խնդիրների շուրջը (գիտական, հետազոտական աշխատանք քիմիական արդյունաբերությանն աջակցելու համար, հումքի ռեսուրսների հետախուզումներին մասնակցություն, աջակցություն քիմիական արդյունաբերության մեջ գյուտերի կիրառման, քիմիական արդյունաբերության համար բանվորների և միջին տեխնիկական պերսոնալի որակյալ կադրերի նախապատրաստում):

Ընկերության ամբողջ մասսայական աշխատանքը պետք է ամբողջ բնակչության ուշադրությունն ու ակտիվությունը մոբիլիզացիա անի խորհրդային քիմիական արդյունաբերության խնդիրների զարգացման ու ամրապնդման և այդ արդյունաբերության հնգամյա պլանը լրիվ իրագործելու խնդիրների շուրջը:

3. Կոլտնտեսական շարժման հաջողությունները, ամբողջ շրջանների ու գավառների համատարած կոլեկտիվացմանն անցնելը, կուլակության որպես դասակարգի լիկվիդացիան,—այդ բոլորը փոխում են Ընկերության աշխատանքի պայմանները գյուղում՝ նրա համար անհամեմատ ավելի լայն բազա ստեղծելով: Պաշըավիաքիմը պետք է ամենակարճ ժամանակամիջոցում իրագործի բոլոր խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններում բջիջներ ստեղծելու խնդիրը՝ ձգտելով խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների բանվորներին առավելագույն չափով լայն ընդգրկման՝ խորհրդային տնտեսությունների և խոշոր կոլտնտեսությունների մեջ աշխատանքի այնպիսի ձևեր և տեսակներ մտցնելով, որ մինչև այժմ կարելի յեր կիրառել միայն քաղաքում:

Ընկերության գյուղական գործունեությունը պետք է ոչ միայն ռազմական նախապատրաստումն ու պրոպագանդն ընդգրկի, այլ և պետք է խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների տնտեսական ամրապնդմանը կոնկրետ կերպով օգնի՝ բերքատվության բարձրացման, գյուղատնտեսության մեքենայացման և քիմիացման ուղղությամբ միջոցներ կիրառելով:

Խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններում Պաշըավիաքիմի բջիջները գյուղի պաշըավիաքիմիական ամբողջ գործի հենակետերը



դարձնելով, դրանց միջոցով դեպի կոլեկտիվ տնտեսությունների մեջ չներգրավված չքավոր-միջակ մասսաների ընդգրկմանը ձգտելով և իր անդամներին դաստիարակելով կուսակցության և խորհրդային իշխանության քաղաքական խնդիրների հասկացման ոգով,— Պաշըավիաքիմը պիտի օգնի կուսակցության և խորհուրդներին կուլակին, որպես դասակարգ, վերջ տալու, չքավոր-միջակ մասսաներին կոլտնտեսությունների մեջ ամբողջովին ներգրավելու համար մղած պայքարի ընթացքում և պիտի ապահովի, որ իր գյուղական կազմակերպությունները իրենց գործունեության ընթացքում և դասակարգային ճշտորոշ գիծ տանեն: Դրա հետ միասին անհրաժեշտ է ամենայն վճռականությամբ ձգտել, որ Պաշըավիաքիմի խոշոր արտադրական բջիջները լայն չափերով վերցնեն խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների բջիջների շեֆությունը:

Համագումարը նշում է, որ խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններում Պաշըավիաքիմի բջիջների կազմակերպողներն առաջին հերթին պիտի հանդիսանան զորացրված կարմիր բանակային-կոլտնտեսականները և կուսակցության ու արհմիությունների կողմից կոլտնտեսություններն ուղարկված այն բանվորները, որոնք պետք է ամրացնեն Պաշըավիաքիմի գյուղական կազմակերպությունների հիմնական կորիզները:

4. Կադրերի պրոբլեմը, որ սոցիալիստական շինարարության ու պաշտպանության խնդիրների իրագործման մեջ վճռական ողակի բնույթ է ստացել, կազմում է Ընկերության կարևորագույն խնդիրը: Հարյուր հազարավոր ակտիվիստ-պաշըավիաքիմականների յերևան բերման, ընտրության և նախապատրաստման վրա ուժեր կենտրոնացնելը պետք է կազմի Ընկերության բոլոր կազմակերպությունների ուշադրության կենտրոնը, որպես աշխատանքի հաջողության հիմնական պայման: Դրա հետ միասին Պաշըավիաքիմը պետք է սիստեմատիկաբար դաստիարակի և աստիճանաբար կուսակցությանը, արհմիություններին և խորհրդային մարմիններին տա Ընկերության կողմից պատրաստված ակտիվի կադրերին:

5. Համագումարն անհրաժեշտ է համարում աշխատանքն ուժեղացնել կանանց միջև՝ նրանց առավելագույն չափով ընդգրկելով Ընկերության աշխատանքի բոլոր ճյուղերի և տեսակների մեջ: Դրա հետ միասին համագումարն ընդգծում է, որ անհրաժեշտ է Ընկերության ազգային կազմակերպությունների աշխատանքի առավել հաջող ծավալումն ապահովել, այլ և զգալի չափով ավելի ուշադրություն դարձնել ու աշխատանքը բարելավել Ընկերության սահմանամերձ գոտու կազմակերպություններում:

## III ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

6. Պաջըավխաքիմը, վորպես խորհրդային պրոլետարական հասարակայնության խոշորագույն կազմակերպություններից մեկը, պետք է իր բոլոր կազմակերպությունների ղեկավարության և աշխատանքի ընթացքում ապահովի իր կամքի դասակարգային կայունությունն ու դասակարգային գծի ճշտորոշությունը: Պետք է վճռական հարված հասցնել դասակարգային գծի խախտումներին և դասակարգայնորեն խորթ տարրերի ազդեցության արտահայտություններին (Բաշկիրիա, Արեվմտյան մարզ, Ուկրաինա և մի շարք ուրիշները): Դրա համար էլ, կազմակերպություններին, վորպես կարեվորագույն խնդրի, համագումարն առաջադրում է, վոր նրանք իրենց շարքերը սրբեն և խորթ ու կազմալուծված տարրերից մաքրեն, կուսակցության գլխավոր գծից գործնականում նկատված շեղումների դեմ անողոք պայքար մղեն, այլ և ղեկավարությանն ավելի մեծ չափով պատասխանատու դարձնեն Ընկերության գործունեության ուղղության և դրության վերաբերմամբ:

Համագումարն ամենայն վճռականությամբ հաստատում է, վոր Ընկերությունը կարող է իրեն առաջադրված մարտական խնդիրները հաջողությամբ լուծել այն դեպքում միայն յեթե Ընկերության բոլոր օղակներում աշխատանքի ձեվերն ու մեթոդները արմատապես վերակառուցվեն: Վերակառուցման ժամանակ գլխավոր ուշադրությունն անհրաժեշտ է դարձնել բանվորական իսկական հասարակայնության և կամավորության զարգացման վրա Պաջըավխաքիմի բոլոր աշխատանքներում՝ ինքնաքննադատության, սոցիալիստական մրցության և հարվածայնության ընթացքում: Պետք է վճռականապես յերեվան հանել Ընկերության աշխատանքի թերություններն ու գործնական պայքար մղել ինչպես ղեկավարության կազմում, նույնպես և Ընկերության անդամների շարքերում նկատված պաշտոնական բարեհոգության, մարդկանց աչքին թոզ փչելու ձգտման, պրոժեկտյորության և իներտության դեմ:

Ընկերության ղեկավարությունը վերից վար պիտի ազատվի այնպիսի մարդկանցից, վորոնք ձեվականորեն են մոտենում իրենց պարտականություններին ու գործնական մասնակցություն չեն ցույց տալիս Ընկերության աշխատանքին: Ընկերության ղեկավարությունը դրանց փոխարեն պիտի նոր կադրերով թարմացվի բանվորական ստորին աճող ակտիվից:

Պետք է լիակատար կարգավորումն ու հաջորդականությունն ապահովել ընկերության բջիջների, նախագահությունների, խորհուրդների և սեկցիաների աշխատանքի ընթացքում, վորոնց կազմը պետք է վճռականորեն մաքրվի դերասանչական, ձեվական ներկայացուցչությունից: Ընկերության մարմինների պատասխանատու կազմը պետք է ընտրովի դառնա և ամրապնդվի առաջ քաշված բանվորներով:

Համագումարը հանձնարարում է ԿԽ, վոր նա վճռական միջոցներ ձեռք առնի կազմակերպչական ստրուկտուրան պարզացնելու, աշխատանքի առանձին շրջանների վերաբերմամբ ավելի մեծ չափով ճշտորոշություն և պատասխանատվություն կիրառելու, լայն չափերով կամավոր հրահանգիչներ գործնական աշխատանքի ներգրավելու և կազմակերպությունների ընդհանուր նախահաշվում վարչական կարիքների համար արվելիք ծախքերի մասը վճռականապես կրճատելու ուղղությամբ:

Դրա հետ միասին համագումարը հանձնարարում է Կենտխորհրդին, վոր վերջինս մի ամսվա ընթացքում մշակի ընկերության կազմակերպությունների, համատարած կոլեկտիվացման շրջաններում և արդյունաբերական խոշոր ձեռնարկներում յեղած օղակների ամրապնդման միջոցների հարցը:

Նշելով, վոր ընկերության ներսում դիսցիպլինան դեռ բավարար վիճակի մեջ չէ, համագումարն առաջարկում է տեղական բոլոր կազմակերպություններին, վոր դրանք մի շարք միջոցներ ձեռք առնեն դիսցիպլինան ամրապնդելու և ՊԱՋԸ–Ավխաքիմի յուրաքանչյուր անդամի պատասխանատվությունը Ընկերության կանոնադրության կատարման վերաբերմամբ բարձրացնելու ուղղությամբ:

7. Հայաստանի հնգամյա պլանի հիմնական դրությունները, վոր աշխատանքի ավելի բարձր աստիճանին անցնել է նշանակում, համագումարը դիմում է Ընկերության բոլոր անդամներին՝ կոչ անելով, վոր նրանք ամեն միջոց ձեռք առնեն ապահովելու ՊԱՋԸ–Ավխաքիմի հնգամյակի հաջող իրագործումը նշանակված ժամկետներին:

8. Յելնելով ՊԱՋԸ–Ավխաքիմի առաջադրված հսկայական խնդիրներից, համագումարն ընդունում է, վոր չափազանց կարեվոր է Ընկերության նյութական բազայի ամրապնդումը և ՊԱՋԸ–Ավխաքիմին անհրաժեշտ պիտույքների մատակարարումն ապահովելը:

Նշելով, վոր Ընկերության խնդիրների և դրանց նյութական ապահովության մեջ և «մկրատ» գոյություն ունի և հաշվի առնելով Ընկերության ֆինանսական ամուր բազա ստեղծելու ամբողջ կարեվորությունը՝ համագումարն անհրաժեշտ է համարում առաջին հերթին ապահովել ամենախիստ ֆինանսական դիսցիպլինան, լիակատար չափով հավաքել անդամավճարները, վերջիններս ավելացնել, այլ և ռազմական պրոպագանդի և նախապատրաստման կարիքների համար կատարվող մասհանումների նորման ավելացնել ի հաշիվ արհմիությունների կուլտֆոնդերի, ամեն տարի վիճակախաղեր կազմակերպել, Ընկերության մասսայական աշխատանքի ֆոնդի համար միջոցներ հավաքել ամեն տա–

րի կազմակերպվող «Պաշտպանության շաբաթների» միջոցով, նույնպես և վճռականորեն ավելացնել տնտեսական և կառավարական այն կազմակերպություններից ներգրավված նյութական միջոցների չափերը, վորոնք շահագրգռված են Ընկերության աշխատանքով:

Դրա հետ միասին համագումարն անհրաժեշտ է համարում մասհանումների սկալան վերաբաշխել՝ բջիջի մասհանումները նվազագնելով ու միջին և բարձրագույն օղակների մասհանումներն ավելացնելով, վորպեսզի վերջիններիս աշխատանքն ամրապնդվի: Այդ արվում է, վորովհետև աշխատանքի զգալի մասը բջիջի գործունեության սահմաններից դուրս է յեկել, իսկ բջիջի նյութական հենարանը դարձել է կողմնակի աղբյուրներից ստացված միջոցների ավելացումը:

9· Համագումարը հանձնարարում է ԿԽ մոտակա ժամանակում հաշվառման և հաշվետվության նոր սիստեմ մշակել՝ հաշվառման նոր սիստեմի միջոցով ապահովել Ընկերության հնգամյա պլանի յուրաժամանակ կատարումն ու դրա լրիվ կոնտրոլը:

## IV. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ, ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10· Պաշավիաքիմի աշխատանքը, վորը կառուցված է ըստ արտադրական և տերիտորյալ նշանի և վորն ընդգրկում է արհմիությունների անդամների միլիոնավոր մասսաներին, —միանգամայն անիմաստ է առանց արհմիությունների և Ընկերության միջև ամենասերտ կապի, առանց արհմիությունների ակտիվ մասնակցության Ընկերության ղեկավարությանը և գործունեությանը, առանց արհմիությունների աջակցության և նյութական օգնության:

Սակայն մինչև այժմ, չնայած Ընկերության և արհմիությունների փոխադարձ հարաբերության ասպարեզում նկատված վորոշ հառաջադիմությանը, Ընկերության գործունեության ղեկավարության մեջ արհմիությունների կողմից վերոհիշյալ սկզբունքների վրա հիմնված՝ մասնակցության մեջ բեկում չի առաջացել նորմալ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ:

Համագումարը գտնում է, վոր՝ 1) արհմիութենական կազմակերպությունները թերագնահատում են Պաշավիաքիմի, վորպես պաշտպանությունն ամրապնդող կարևորագույն հասարակական կազմակերպության, դերն ու նշանակությունը· 2) արհմիությունները մշտական ուշադրություն չեն դարձնում Ընկերության աշխատանքի ղեկավարությանն ու ամբողջ աշխատանքի և ռազմական պրոպագանդի և ռազմական նախապատրաստման աշխատանքի դրության ամբողջ պատասխանատվությունը գցում են միայն Պաշավիաքիմի կազմակերպությունների վրա· 3) արհմիությունները թույլ մասնակցություն են ցույց տալիս ընտրովի ղեկավար մարմիններ կազմելիս· 4) արհմիությունների կուլտաշխատանքի պլաններում ժամանակ և տեղ չի հատկացվում ակումբներում, անկյուններում և ձեռնարկություններում Պաշավիաքիմի աշխատանք կատարելուն· 5) կուլտ-ֆոնդից հատուկ միջոցներ չեն հատկացվում ռազմական պրոպագանդի և ռազմական նախապատրաստական աշխատանքի համար:

Միևնույն ժամանակ համագումարը նշում է, վոր Պաշավիաքիմի մի շարք կազմակերպություններ արհմիութենական կազմակերպությունների հետ օրգանական բավարար կապ չեն ստեղծում ու դրանց վրա չեն հենվում, մինչդեռ դրանք բանվոր դասակարգի ամենախոշոր կազմակերպությունն են հանդիսանում: Համագումարն առաջարկում է Ընկերության և արհմիության միատեղ աշխատանքի այժմյան վիճակի մեջ վճռական բեկում առաջ բերել:

11· Հաստատելով, վոր Ընկերության աշխատանքին կոմյերիտմիությունն անբավարար չափով է մասնակցում՝ միանալով ՀամԼԿՅԵՄ ԿԿ դեկտեմբերյան պլենումի կողմից այդ հարցի առթիվ կայացրած վորոշումներին՝ համագումարը կոմյերիտական պաշավիաքիմական կազմակերպություններին հետևյալ խնդիրներն է առաջադրում· ա) պետք է իրականացվի կոմյերիտմիության վորոշումը Պաշավիաքիմի շարքերը 100%-ով մտնելու մասին· բ) կոմյերիտմիության, վորպես կազմակերպչական կորիզներից մեկի, դերը պիտի բարձրանա, գ) կոմյերիտմիության պարտադիր ռազմական ուսուցման բնագավառում, վոր կատարում է Պաշավիաքիմը, այդ աշխատանքի դրության և հաջողության պատասխանատվությունը Պաշավիաքիմի հետ միասին ընկնում է նաև կոմյերիտմիության մարմինների վրա, դ) Պաշավիաքիմը կոմյերիտմիության հետ միասին պետք է ֆիզկուլտուրայի մեջ վճռական բեկում առաջ բերի, ծառայեցնելով այն մարտիկի նախապատրաստման նպատակին, այլ և դրանք պետք է բոլոր միջոցները ձեռք առնեն պիոներական շարքերում և դպրոցներում ռազմական աշխատանքն ուժեղացնելու և աշխուժացնելու ուղղությամբ՝ դրավիչ, թեթև, կենդանի ձևեր կիրառելով՝ պիոներին մատչելի ծավալով, առանց այնպիսի զբաղմունքներով ծանրաբեռնելու, վոր վեր են մանկական հասակի ուժերից:

12· Համագումարը անհրաժեշտ է համարում Ընկերության կազմակերպություններից վոմանց վարմունքը, վորոնք միայն մատնանշում են թե իրենց գործունեությունը թերագնահատում և բավարար ուշադրություն չեն դարձնում դրա վրա տեղական կուսակցական, արհմիութենական և կոմյերիտական կազմակերպությունները, բայց վճռական միջոցներ ձեռք չեն առնում իրենց աշխատանքի մակարդակը բարձրացնելու, Ընկերության խնդիրների շուրջը մասսաներին մոբիլիզացիա անելու

ուղղությամբ իրենց աշխատանքի որակը բարձրացնելու միջոցով իրենց վրա չեն դարձնում վերոհիշյալ մարմինների ուշադրությունը. այնպես չեն անում, վոր վերջիններս աջակցեն Պաշքավիաքիմի աշխատանքին:

Համագումարը կոչ է անում Պաշքավիաքիմի բոլոր կազմակերպություններին և բոլոր անդամներին, վոր նրանք տասնապատկեն իրենց աշխատանքը, վճռականապես վերակառուցեն այն՝ սոցիալիստական շինարարության խնդիրներին համապատասխան և ԽՍՀՄ վրա պատերազմական հարձակման վտանգի մոտեցման կապակցությամբ:



## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

1. Աշխարհի մեջ առաջին բանվորական պետության դեմ իմպերիալիստական պետությունների կողմից ռազմական վտանգի աճումը և աշխատավոր մասսաների նախաձեռնության և ակտիվության վրա հենվող սոցիալիստական շինարարության հսկայական խնդիրները բացառիկ կարևորություն են տալիս սոցիալիստական հասարակայնության կազմակերպման, վորն ապահովում է աշխատավոր մասսաների լայն մասնակցությունը սոցիալիզմի կառուցման գործում: Այդ կապակցությամբ զգալի չափով աճում է խորհրդային հասարակայնության կարևորագույն ջոկատներից մեկի՝ Պաշքավիաքիմի դերը, թե սոցիալիստական շինարարության, և թե առանձնապես յերկրի պաշտպանության գործում:

2. Պաշտպանության ամրապնդմանն ու սոցիալիստական շինարարության ծավալմանն ուղղված ջանքերի ու աշխատանքների ընդհանուր գումարում Պաշքավիաքիմի դերի զգալի բարձրացումը պահանջում է վո՛չ միայն Ընկերության աշխատանքը վերակառուցել, վո՛չ միայն ինքնաքննադատությունը, սոցիալիստական մրցումն ու հարվածայնությունը զգալի ծավալել. և ղեկավարության ու բանաշխատանքի մեջ դասակարգային կայուն դերը լրիվ ապահովել, —այլ և Ընկերության աշխատանքի ամբողջ սիստեմի մեջ առավելագույն պլանայնություն մտցնել՝ այդ պլանայնությունը Լենինյան գլխավոր գծին յենթարկելու, սոցիալիստական շինարարության հնգամյակի և յերկրի պաշտպանության պլանի հետ կապակցելու հիմունքով:

3. Ընդունելով, վոր Կենտրոնական Խորհրդի մշակված և Համագումարին ներկայացված Ընկերության աշխատանքների հնգամյա պլանի նախագիծը համապատասխանում է այդ պահանջներին, Համագումարը վորոշում է ներկայացված նախագիծը հիմնականում ընդունել՝ նրա մշակումն ու նրա իրագործմանն անցնելը ընկերության զգալի նվաճումը համարելով:

4. Համագումարն ընդգծում է հնգամյակի իրագործման և պլանայնացման մեջ ճշտորոշ դասակարգային գծի պահպանման ապահովումը, նրա համապատասխանումը սոցիալիստական շինարարության ընդհանուր տեմպերին և խնդիրներին, այլ և պաշտպանության այն մասի պահանջների առավելագույն բավարարումը, վոր կարող է իր վրա առնել Պաշքավիաքիմի միջոցով կազմակերպված խորհրդային հասարակայնությունը:

5. Հնգամյակը չի ընդգրկում և չի ել կարող ընդգրկել Ընկերության հիմնական խնդիրների ամբողջ գումարը, այլ նա միայն վորոշում

է Ընկերության պրակտիկ գործունեության զանազան շրջաններում կատարելիք աշխատանքի հիմնական գծերը, ձևերը և քանակական ցուցանիշները:

Պաշօավիաքիմի այն խնդիրները, վորոնք բղխում են նրա, վորպես կուսակցության ոժանդակող ողակի, վորպես հասարակայնության դպրոցի, դերից (քաղաքական հիմնական կամպանիաներին մասնակցությունը, ակտիվի դաստիարակությունը և այլն), նմանապես չեն կարող ներառվել պլանի շրջանակների մեջ, թեպետ և դրանք առաջնակարգ ու հիմնական նշանակություն ունեն:

Միևնույն ժամանակ հնգամյակը չի կարող նախատեսել նաև Ընկերության աշխատանքի այն տեսակները, վորոնք ընդգրկում են աշխատավորների բազմամիլիոն մասսաները, բայց մասսաների նախաձեռնության անումից առաջ գալով՝ չեն կարող տեղավորվել Պաշօավիաքիմի գործնական կազմակերպությունների պլանայնացման և ռեգուլյար աշխատանքի շրջանակներում:

Համագումարը նշում է Պաշօավիաքիմի գործունեության այս յերկու կողմերի բացառիկ կարևորությունը, վորպեսզի դրանք ղեկավար հանդիսանան հնգամյակի իրագործման ընթացքում:

6. Համագումարը հիմնականում հաստատում է Ընկերության աճման նախագծած որիենտիրները հնգամյակի վերջին մինչև 17 միլիոն անդամ և անդամների սոցիալական կազմի կարգավորումը, ըստ վորի միութենական առումով պետք ապահովվի, վոր Ընկերության անդամների 41%-ը լինեն բանվորներ, 35%-ը՝ գյուղացիներ, 11,5%-ը՝ դպրոցականներ, 9%-ը՝ ծառայողներ և 3,5%-ը՝ բանվորների ընտանիքի անդամներ, տնայնագործներ և այլն: Ընդվորում Համագումարն ընդգծում է բանվորական հիմնական բոլոր մասսաների ավելի լրիվ ընդգրկման ու դրա արագացման խնդիրը, նաև այն, վոր Ընկերության շարքերում պետք է ապահովվի նաև գյուղացիության աճումը՝ հիմնականում ի հաշիվ գյուղի սոցիալիստական հատվածի:

7. Համագումարը հաստատում է գործնական աշխատանքների պլանի հիմքում դրված ուղղությունը, վոր յելնում է առաջին հերթին կադրերի պրոբլեմը լուծելն ապահովելուց, մի պրոբլեմ, վոր վճռական ողակի բնույթ է ստացել ինչպես սոցիալիստական շինարարության բնագավառում, այնպես և պաշտպանությունն ամրացնելու գործում: Այս հայացքներով Համագումարը հավանություն է տալիս այն ձգտման, ըստ վորի ուշադրության, ուժերի և միջոցների կենտրոնացումն առաջին հերթին պետք ուղղված լինի աշխատանքի վեց առանցքային ճյուղերին՝ ագիտպրոպաշխատանքին, ռազմական և հրաձգային նախապատրաստ-



ման, ավիոաշխատանքին, ռազքիմիական պաշտպանության, քիմիզացիային և գյուղատնտեսությանն աջակցելուն, այլ և գիտական-հետազոտական աշխատանքին:

8. Հաշվի առնելով նախագծված պլանում Ընկերության շարքերի և գործնական կազմակերպությունների հսկայական աճումը և նկատի առնելով յերկրի ներսում դասակարգային պայքարի սրումն ու Ընկերության մի քանի կազմակերպությունների աշխատանքի ընթացքում դասակարգային գծի խախտման փաստերը՝ Համագումարն ընդգծում է Պաշօավիաքիմի ղեկավարության ու ամբողջ աշխատանքի դասակարգային կայուն գծի ապահովման խնդիրը և Ընկերության ամբողջ գործունեության մեջ, հատկապես գյուղում, պրոլետարիատի ղեկավար ազդեցության զգալի չափով ուժեղացման անհրաժեշտությունը: Համագումարն ընդգծում է, վոր աշխատանքները գյուղում ծավալելիս անհրաժեշտ է հիմնական ուժերն ու միջոցները կենտրոնացնել սոցիալիստական հատվածի սահմաններում:

9. Ընկերության բոլոր կազմակերպություններում աշխատանքի վորակը բարձրացնելու բացառիկ կարևորությունը հաշվի առնելով և նկատի ունենալով, վոր Ընկերության պատասխանատվության աստիճանը բարձրացել է իր պրակտիկ գործունեության հետևանքի վերաբերմամբ՝ Համագումարը ընդգծում է, վոր հատկապես կարևոր է ապահովել աշխատանքի վորակական ցուցանիշները, վորպեսզի իրոք ապահովվի կոնտրոլ թվերով արտահայտվող սոցիալիստական շինարարության գործի մեջ ընկերության ներդրման ռեալ լինելը:

10. Ի նկատի ունենալով Ընկերության գործունեության մեջ հասարակական-կամավոր աշխատանքի կապակցումն աշխատանքի մի քանի պարտադիր ձևերի հետ, հատկապես ռազմական նախապատրաստման և ՈՒԶՊ-յան բնագավառներում, նկատի առնելով նաև դրանց ընդլայնացումը՝ Համագումարն անհրաժեշտ է համարում աշխատավոր մասսաների հասարակական գիտակցությունն այն չափով բարձրացնել և կամավոր աշխատանքի վորակն այն աստիճան բարձրացնել, վոր հետագայում հնարավոր լինի հաջորդաբար պարտադիր կարգի խնդիրների մի մասը աշխատանքի կամավոր տեսակներ դարձնել: Այդ ուղին կապահովի հասարակական սկզբունքների պահպանումը Ընկերության ամբողջ աշխատանքում:

11. Աշխատանքի հնգամյա պլանի առկայությունը պահանջում է, վոր Ընկերությունը շատ ավելի մեծ չափերով մասնակցի շինարարության համապետական, տնտեսական և կուլտուրական այն պլանի կազմելու աշխատանքին, վորոնք մշակվում և իրագործվում են պետական

կազմակերպությունների կողմից տեղերում, ինչպես նաև սոցիալիստական քաղաքների շինարարության բնագավառում: Այդ կապակցությամբ Համագումարն Ընկերության յուրաքանչյուր կազմակերպությանն առաջարկում է, վոր նրանք, հատկապես պաշտպանության բնագավառում և համապետական ու տեղական պետական աշխատանքների պլանում ապահովեն Պաշտավիաքիմի հնգամյակի անդրադարձումը, այլ և լայն պրոպագանդ մղել մեծ աշխատանքի հնգամյա պլանի այն նշանակության մասին, վոր ունի նա յերկրի պաշտպանության համար:

12. Համագումարը գտնում է, վոր Ընկերության պրակտիկ գործունեությունը մի շարք ճյուղերում, ինչպես պաշտպանության, նույնպես և խաղաղ շինարարության բնագավառում, վորոնցում շահագրգռված են կառավարական, տնտեսական և այլ կազմակերպությունները, վո՛չ միայն արժեքավոր արդյունքներ կապահովի, այլ և զգալի խնայողություն կտա այն ծախքերի համեմատությամբ, վոր աշխատանքի նույն տեսակների վրա կարվեր, յեթե դրանք կատարվեին պետության ձեռքով: Դա հատկապես վերաբերում է գյուղատնտեսական աշխատանքին, ռազմական նախապատրաստման, ռազքիմիական պաշտպանության և ավիոշինարարության: Դրա համապատասխան, այլ և այն հանգամանքի կապակցությամբ, վոր Ընկերությունը հավաքում և պետությանն է հանձնում բազմամիլիոն գումարներ, Համագումարն անհրաժեշտ է համարում, հնգամյակի բյուջեյի դեֆիցիտն ի նկատի ունենալով, ծածկել և այդ դեֆիցիտը՝ կառավարական, տնտեսական և այլ կազմակերպություններին Ընկերության զանազան գործնական ձեռնարկումների ֆինանսավորմանը մասնակից դարձնելով:

13. Վորպես հիմք ընդունած Պաշտ-Ավիաքիմի հնգամյա պլանը վերջնականապես մշակելիս և կենսագործելիս, Համագումարը կոչ է անում Ընկերության բոլոր կազմակերպություններին կենսագործել այն սոցիալիստական մրցման հիմունքով ու այն բոլոր պատասխանատու խնդիրների ակտիվ լուծման վոգով, վորոնք առաջադրում են Պաշտավիաքիմին ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության և պաշտպանության գործում: Ըստ վորում բոլոր կազմակերպությունների խնդիրը հանդիսանում է ստորին կազմակերպություններին արված առաջադրանքները այնպես մշակել, ճշգրտել և պլանայնացնել, վոր հաշվի առնվեն տեղական պայմանները, մանավորապես սահմանամերձ շրջանների և ազգային ռայոնների բոլոր առանձնահատկությունները, վորպեսզի Ընկերության տեղական կազմակերպությունների հնգամյակների աշխատանքների մի շարք ճյուղերում ապահովվեն յուրաքանչյուր շրջանի համար կարևոր նշանակություն ունեցող բնագավառներում՝ որիենտիրները գերա-



զանցելու հնարավորությունները, այլ և աշխատանքի լրացուցիչ տեսակների զարգացումը:

14. Յելնելով ագիտպրոպաշխատանքի ամենակերպ ամրացման և ծավալման ու Ընկերության հրահանգչական և կազմակերպչական կմախքի ամրապնդման խնդիրներից, հատկապես ռայոնական օղակում՝ Համագումարն անհրաժեշտ է համարում նախատեսել այս խնդիրների իրագործման ապահովումը վո՛չ միայն պլանի ընդհանուր հարվածներով, այլ և ըստ աշխատանքի յուրաքանչյուր տեսակի, եդրան համապատասխան ավելացնել կազմակերչական-օպերատիվ ծախքերը:

15. Դրա հետ միասին Համագումարն անհրաժեշտ է համարում. կրճատել հրաձգային գործի շտատային հրահանգիչների կազմը, վո՛չ պակաս քան յերկու անգամ ավելացնել վնասատուների դեմ կռվող ջոկատների թիվը և ավելացնել ռազմա-ծովային, այլև ավիացիոն գործի աշխատանքն ու ծախքերը՝ ի հաշիվ ռազմական նախապատրաստման:

16. Հիմնականում հավանություն տալով յեկամուտների նախագծված սիստեմին և յելքի հոդվածների փոխադարձ հարաբերության, ճիշտ համարելով բջիջային գումարներից 50%, իսկ բոլոր մնացածներից 10% վորպես ռեզերվ թողնելը, Համագումարն անհրաժեշտ է համարում՝ ի նկատի ունենալով, վոր ընկերության գործնական աշխատանքի զգալի մասը բջիջի սահմաններից դուրս է գալիս, կանոնադրությամբ նախատեսված մասհանումների նորմաները փոփոխել՝ բոլոր միջին ու վերադաս կազմակերպությունների յեկամուտների ավելացման: Համագումարն անհրաժեշտ է համարում նաև վիճակախաղերի տիրաժն զգալի չափով բարձրացնել, նախագծում կարգված համեմատությամբ:

Դրա հետ միասին Համագումարը միանգամայն պարտադիր է համարում, վոր արհմիությունները անպայման կատարեն իրենց վրա առած պարտականությունը՝ ռազմական պրոպագանդն ու նախապատրաստումը ֆինանսավորելու վերաբերմամբ: Այլ և Համագումարը առաջ է քաշում դրսից ամեն կերպ միջոցներ ներգրավելու հարցը, վոր պետք է զգալի չափով դյուրանա աշխատանքների հնգամյա կոնկրետ պլանի իրագործման հետևանքով:

7. Աշխատանքների հնգամյա պլանի իրագործումը պահանջում է շուտափույթ կազմել Պաշտ-Ավիաքիմի մատակարարման բաժնի հնգամյակը, վորով նախատեսվում է աշխատանքների պլանի ապահովման խնդիրը: Դրա հետ միասին Համագումարն ընդունում է, վոր անմիտ է կարծել, թե հնգամյակը կարելի կլինի կատարել առանց ռազմական գերատեսչության աջակցության՝ մասնագիտական գույքով և զենքով

ոգտվելու շրջանում, և առանց բոլոր հիմնական հրատարակչությունների կողմից անհրաժեշտ գրականության ապահովման:

18. Ի վերջո՝ Համագումարը նշում է, վոր հնգամյակով ծրագրված աշխատանքի լայնարձակ պլանի իրագործումը հնարավոր է ո՛չ միայն Ընկերության աշխատանքների արմատական վերակառուցման, այլ և սոցիալիստական շինարարության ու պաշտպանության ընդհանուր սիստեմում Պաջը-Ավիաքիմի դերի ու տեղի վերաբերմամբ յեղած հայացքների վճռական փոփոխության դեպքերում, համապատասխան նաև այն դեպքում, յերբ Ընկերության աշխատանքի մեջ բոլոր կուսակցական, խորհրդային և հասարակական կազմակերպությունները ու առաջին հերթին արհմիությունները ու կոմյերիտմիությունը անհամեմատ ավելի մեծ չափով կմասնակցեն և աջակցություն ցույց կտան:

19. Համագումարը վորոշում է, վոր կենտրոնական խորհրդի պլենումը հնգամյա պլանի վերջնական խմբագրությունը, տեղերում այն մշակման յենթարկվելուց հետո, հաստատի ո՛չ ուշ, քան 1930 թվի մայիս ամիսը:

---



# ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Միջազգային կացության հիմնական գիծը հանդիսանում է պատերազմի վտանգի աճումը և սոցիալիզմ կառուցող յերկրի վրա իմպերիալիստական պետությունների անմիջական ռազմական հարձակման վտանգը, վորի մասին վկայում է զինաթափման վերաբերմամբ խորհրդային առաջարկների մերժումը, կապիտալիստական յերկրների ու նրանց վասալների սպառազինումների և ռազմական տեխնիկայի տենդային աճումը, վոր ամբողջովին ուղղված է Խորհրդային Միության դեմ, վերջին դեպքերը խորհրդային-չինական սահմանում, պրովոկացիայի և կեղծ թղթադրամների պրակտիկան, դրսից վնասարարություններին աջակցելը, խորհրդային եքսպորտի դեմ պայքարելը, «խաչակրաց արշավանքը», կապիտալիզմի համաշխարհային տնտեսական կրիզիսի ուժեղացումն ու խորացումը, արտասահմանում հեղափոխական շարժման նոր վերելքն ու աճումը: Խորհրդային Միության տնտեսական հզորության հսկայական աճումը, գյուղի կոլեկտիվացման և կուլակին վորպես դասակարգ լուծարքի յենթարկելու շարժման հզոր զարգացումը,—այդ բոլորը սրում է իմպերիալիստների ատելությունը պրոլետարական հաղթական դիկտատուրայի յերկրի վերաբերմամբ և ե՛լ ավելի ուժեղացնում ու մոտեցնում է պատերազմի սպառնալիքը՝ իմպերիալիստական պետությունների և ԽՍՀՄ միջև:

Ապագա պատերազմի հեղափոխական դասակարգային բնույթը, այլ և ռազմական տեխնիկայի մասսայականությունն ու աճող նշանակությունը (ներքին այրման շարժիչ, քիմիա, ավիացիա)՝ ճակատի և թիկունքի միջև յեղած սահմանները վերացնելով, պատերազմի անմիջական հարվածներին յենթակա յե դարձնում խաղաղ բնակչության լայն մասսաներին ու դրանով հենց անհրաժեշտ է դարձնում, վոր խորհրդային հասարակայնությունը վաղորոք ու մանրակրկիտ կերպով նախա-

պատրաստվի այդ պատերազմին և լայն չափերով մասնակցի ռազմականորեն վարժված ռեզերվներ պատրաստելու և այն ավելի ու ավելի մեծացնելու գործին:

II. Համագումարը գտնում է, վոր աշխատավոր մասսաների ուշադրության մոբիլիզացիան ռազմական վտանգի հարցերի վերաբերմամբ և միության պաշտպանունակության կոնկրետ ամրապնդումը հիմնական խնդիրն են հանդիսանում պրոլետարական հասարակայնության առաջավոր ջոկատի՝ Պաշը—Ավիաքիմի, վորն այդ աշխատանքը հմտությամբ կապակցում է սոցիալիստական շինարարության աջակցելու գործի հետ:

Դրանով վորոշվում է յերկրի պաշտպանության համար կենդանի ուժեր նախապատրաստելու հսկայական ծավալն ու նշանակությունը և ռազմական աշխատանքի, վորպես Պաշըավիաքիմի գործունեության հիմնական առանցքի, նշանակությունը, վորի վրա համագումարը պահանջում է կենտրոնացնել գլխավոր ուժերն ու միջոցները:

## ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԻՃԱԿԸ. ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

III. Ռազմական աշխատանքը իր զարգացման ընթացքում (I համագումարից սկսած) միանգամայն ճիշտ ու հետևողական կերպով մասսայական ռազմական պրոպագանդի ձևերից անցավ աշխատավորների ռազմական նախապատրաստման գործնական խորացված աշխատանքի ձևերին՝ վարժական—շարքային միավորների սիստեմի միջոցով՝ մասսայականության, վորակի, դիսցիպլինայի, հաշվառման, պատասխանատվության և հրահանգման հիմունքով:

Համագումարը գոհունակությամբ արձանագրում է, վոր տվյալ մոմենտին ռազմական գործը բռնել է այն խնդիրների լայն և գործնական կատարման ճիշտ ուղին, վորոնք վերաբերում են ռազմականապես վարժված ռեզերվների նախապատրաստմանն ու դրանց ինչպես վորակական, նույնպես և քանակական ապահովմանը՝ հաշվետու շրջանում հետևյալ կարևոր հաջողություններին հասնելով:

1. Աշխատավորների ռազմական նախապատրաստման ընդգրկումն զգալի չափով ընդլայնվել է, յերեք անգամ ավելացել է վերապատրաստվող հրամկազմի թիվը, ծավալվել է հատուկ ՌԳԽ ցանցը (գնդացրային, հրետանային, կապի, ծովային, հեծելազորային և այլն):

2. Վերամշակված ու կազմված են ծրագրեր, ինչպես բոլոր մասնագիտությունների խմբակների համար, նույնպես և բոլոր տեսակի զորքերի պահեստի կրտսեր ու միջին հրամկազմի վերապատրաստման կուրսերի համար:



3. Անցում է կատարված դեպի ռազմական նախապատրաստման նոր մեթոդներն ու ձևերը (ժամանակավոր վարժական-շարքային ստորաբաժանումներ), վոր նպաստում է ռազմական նախապատրաստման հաջողությանն ու նրա արդյունաբերությանը:

4. Աշխատավորների ռազմական ուսուցման վորակն է բարձրացել, վորի ցուցանիշն է հանդիսանում այն, վոր զինվորական գերատեսչության ֆունկցիաներից մի քանիսը փոխանցված է Պաշը—Ավիաքիմին՝ զինապարտների վորոշ կոնտինգենտների վերապատրաստման վերաբերմամբ:

5. Ուժեղացել են պլանայնության տարրերը ռազմական աշխատանքի ծավալման գործում ու ձեռնարկված է հրահանգչական ցանցի ամրապնդմանն ու ուժեղացմանը:

6. Հասարակական կարծիքի փոփոխություն է ձեռք բերվել հօգուտ Պաշը—Ավիաքիմի միջոցով կատարվող ռազմական նախապատրաստման կարևորությունը խոստովանելուն և աշխատավորների միջև կատարվող ռազմական աշխատանքը կենտրոնացվել է Պաշը—Ավիաքիմում (ՀամԱրհմխորհի № 131 դիրեկտիվը և ՀամԼԿՅԵՄ VI պլենումի բանաձևը):

7. Վորոշ հաջողություններ են ձեռք բերված դաշտ դուրս գալու և արշավների ավելացման շրջանում՝ գործնական արդյունքներ ստացվելու իմաստով:

Ավելացել է լայն մասսաների ընդգրկումը՝ դեկուցումներով, մրցություններով, եքսկուրսիաներով և այլն:

8. Գործադրվել ու ամրապնդվել են մասսայական ռազմական աշխատանքի նոր ձևեր՝ ճամբարներ և ռազմա—տուրիստական արշավներ:

## ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

IV. Ձեռք բերված հաջողությունները, վոր անցյալի համեմատությամբ խոշոր առաջադիմություն են հանդիսանում, դեռ հեռու յեն բավական լինելուց ու դեռ լիովին չեն համապատասխանում ստեղծված կացության աճած պահանջներին, վորի պատճառով և համագումարը հետևյալ հիմնական թերություններն ու դժվարություններն է նշում ռազմական աշխատանքի ասպարեզում:

1. Մի քանի կազմակերպությունների մեջ աշխատավորների ռազմական պատրաստության սեկցիաների բացակայությունը (մասնավորապես, ռայոնական խորհուրդներին կից), դրանց ինքնամփոփվածու-

թյունը, սարքին, հատկապես բանվորական ակտիվի և պահեստի հրամկազմի բացակայությունը, սեկցիաներին հաճախ չոր գերատեսչական բնույթ է տվել ու չի ապահովել ռազմական գործի պատշաճ ղեկավարությունը:

2. Հրահանգիչների վորակյալ կադրի բացակայությունը՝ ինչպես կենտրոնում, նույնպես և տեղերում, կենդանի ղեկավարության, հրահանգման, հաշվառման և աշխատանքի կոնտրոլի թուլությունը:

3. Ակտիվի փոքրաթիվ լինելն ու թուլությունը, նրա հոսունությունը, աշխատանքի ազդակի բացակայությունը (արտոնություններ, բեռնավորումից ազատել, խրախուսում և այլն) և հասարակական դիսցիպլինայի թուլությունը:

4. Տարբեր ծրագրերով ուսուցում կատարելը, վոր Կենտրոնական Խորհրդի կողմից իր ժամանակին ծրագրեր չուղարկելու հետևանքն է ինչպես նաև՝ այն բանի, վոր մի քանի կազմակերպություններ շեղվում են ԿԽ ցուցումներից:

5. Համ. ԼԿԵՄ անդամների ռազմական ուսուցման վո՛չ բավարար չափով ընտենախվությունը: Մի քանի դեպքերում մինչև անգամ վիժել է այդ աշխատանքը, վորովհետև ՀամԼԿԵՄ տեղական կոմիտեները պասսիվ վերաբերմունք են ցույց տվել ռազմական նախապատրաստման խնդիրներին: Դեռ չեն վերացված կոմյերիտական կազմակերպությունների տենդենցները՝ ռազմական աշխատանքում Պաշքավիաքիմից մեկուսանալու վերաբերմամբ:

6. ԲՈՒՀ-երի, ԲՏՈՒՀ-երի, բանֆակների, տեխնիկումների, II աստիճանի դպրոցների և լուսաշխատավորների ռազմական աշխատանքին անբավարար ղեկավարություն և ուշադրություն է նվիրվում:

7. Պիոներների միջև ռազմական գործնական աշխատանքի թուլությունը:

8. Ռազմա-ծովային աշխատանքի թույլ ծավալումը ծովափնյա և գետափնյա բնակչության միջև և ջրային տրանսպորտի ռազմականացման աշխատանքի բացակայությունը:

9. Ռազմական տարրերի անբավարար արմատավորումը հասարակական այլ կազմակերպությունների մեջ՝ Ավտոդոր, Ֆիզկուլտի Խորհուրդ, Կարմիր Խաչ և այլն:

10. Զենքի պահպանման, խնայման և խնամքի անբավարար վիճակը:

11. Ռազմական ամբողջ աշխատանքի ֆինանսական-նյութական անբավարար ապահովությունը (վարժակայանների և ռազմական աշխատանքի շենքերի բացակայություն, դրանց խիստ անբավարար սար-



քավորումը, վարժական պիտույքների և գործիքների, զենքի, պահեստի մասերի, լողալու միջոցների, ռազմական գրականության, հատկապես ազգային լեզուներով, և վարժական այլ գույքի ծայրահեղ պակաս):

12. Արհմիութենական և խորհրդային կազմակերպությունների դարձյալ ծայր աստիճան թույլ մասնակցությունը ռազմական աշխատանքին աջակցելու գործում (մասնավորապես, ռազմական աշխատանքի համար անհրաժեշտ շենքեր, ժամանակ և միջոցներ տրամադրելու մերժում, արհմիութենական և այլ կազմակերպություններից վոմանց փորձերը տեղերում՝ ռազմական ամբողջ աշխատանքը Պաշքավիքիմի ձեռքում կենտրոնացնելուց հետո՝ իրենց ազատ համարել աշխատավորների ռազմական նախա-պատրաստման գործին գործնական աջակցություն ցույց տալու պարտականությունից):

13. Ռազմական գերատեսչությունը ժամանակին ու լրիվ չի կատարում իր պարտականությունները՝ պարտադիր ռազմական ուսուցման վերաբերմամբ (նյութական ապահովություն, հրահանգչական կազմի լրացում և այլն):

14. Ռազմական ուսուցման գործում սոցիալիստական մրցման մեթոդների թույլ կիրառում:

## ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

V. Համագումարը հավանություն է տալիս ռազմական նախապատրաստման մշակված հնգամյա ծրագրի հետևյալ ընդհանուր ուղղությանը.

1. Ծավալված ռազմական նախապատրաստման մեջ պլանայնացում մտցնել, հաշվի առնելով այդ աշխատանքի աճման անհրաժեշտությունը՝ յերկրի պաշտպանության պահանջներին համապատասխան:

2. Ռազմական ուսուցման մասնագիտական տեսակների (դնդացրային, հրետանային, սակրավոր, ծովային, հեծելազորային և կապի) ընդլայնման տեմպն ընդարձակել ու ավելացնել, և հատուկ ուշադրություն դարձնել տանկիստներ ու տրակտորիստներ պատրաստելու գործի վրա:

3. Ե՛լ ավելի խորացնել ռազմական գիտելիքները և ուժեղացնել հրահանգչական կադրը:

4. Ռայոններում պարտադիր ռազմական նախապատրաստման պլան կազմել՝ նախապատրաստվողների թվի և մասնագիտությունների նկատմամբ՝ ռազմական վարժություն ունեցող ռեզերվներ կուտակելու պլանին համապատասխան:

Դրա հետ միասին համագումարն անհրաժեշտ է համարում ընդգծել, թե.—

1. Ռազմական աշխատանքի հիմնական ձևը հանդիսանում են ուսուցման կամավոր տեսակները՝ բացառիկ ուշադրություն դարձնելով և պատասխանատվություն ունենալով աշխատանքի նոր տեսակի՝ ռազմական պարտադիր ուսուցման՝ վերաբերմամբ: Համագումարը վճռականապես դատապարտում է մի քանի կազմակերպությունների ունեցած տենդենցները՝ կամավոր ուսուցման նշանակությունը նվազեցնելու վերաբերմամբ:

2. Վճռական միջոցներ ձեռք առնել աշխատանքի որակը բարձրացնելու ուղղությամբ՝—մարտական նախապատրաստության բնագավառի, հատկապես վարժական-մեթոդական մասի ժամանակակից պրոբլեմներին համապատասխան՝ վճռականապես վերջ տալով ուսուցման այն հին մեթոդներին, որոնք չեն կարող հետաքրքրել սովորողներին:

3. Հրատարակված ծրագրերով տարվող ռեգուլյար ուսուցումն ապահովել, այն պայմանով, որ դաշտային պարապմունքներ հաճախակի լինեն և հրահանգչական կազմը նախապես մանրակրկիտ պատրաստվի և ուսուցվի:

4. Ընդունելով, որ պահեստի հրամկազմի հեռակա ուսուցման սիստեմը միանգամայն նպատակահարմար է և հետագա զարգացում է պահանջում, տարածել այն նաև ավագ ու բարձրագույն հրամկազմի վրա:

5. Ամրապնդել ուսուցման կազմակերպչական այն ձևերը (վարժական-շարքային ստորաբաժանումներ), որոնք նպաստում են ուսուցման ավելի կատարելագործված մեթոդներին և ճշտորոշ դեկավարության իրագործման:

6. ՀամԼԿՅԵՄ ԿԿ հետ միասին վճռական բեկում առաջ բերել կոմյերիտմիության ռազմական պարտադիր ուսուցման գործում, խստիվ իրագործելով ԿԽ և ԿԿ 1929 թվի հոկտեմբերի 4-ի № 634/գ դիրեկտիվը և ՀամԼԿՅԵՄ VI պլենումի բանաձևը:

7. ԲՈՒՀ-երում, ԲՏՈՒՀ-երում, բանֆակներում, տեխնիկումներում և II աստիճանի դպրոցներում ավելի ընդլայնել ռազմական աշխատանքը՝ նպաստելով պարտադիր կարգով տարվող ռազմականացմանը՝ ռազմղեկների հետ համաձայնության գալով: Այդ տիպի դպրոցներում սովորողների ռազմական նախապատրաստումը տանել հասարակական կարգով՝ ռազմական գիտելիքների զանազան խմբակների



ծրագրերը կիրառելով և լուսբաժնի կողմից աջակցությունն ապահովելու միջոցով:

8. Պիոներների միջև աշխատանքն ուժեղացնել, յելնելով ոչ թե բուն ռազմական հիմնական նպատակից, այլ պիոներական աշխատանքի ամբողջ սիստեմում ռազմականացման մի քանի տարրերը միայն գործադրելով՝ հերոսական պայքարի պատմության, Կարմիր Բանակի և Նավատորմի առօրյա կյանքի և կենցաղի հետ ծանոթացում, ռազմական և ֆիզկուլտուր սովորույթների պատվաստում՝ որպես աշխատանքի ձևերից մեկը, պիոներների ռազմական խաղերն օգտագործելով:

9. Որպես սովորողների կարգապահությունն ապահովող միջոց գործադրել հանդիսավոր խոստումները՝ իրենց վրա առած պարտականությունների կատարման վերաբերմամբ: Դրա հետ միասին խրախուսման միջոցներին վերաբերող հարցերի մշակումն շտապեցնել և աշխատել, որ Պաշըավիքիմի կազմակերպություններում ռազմական նախապատրաստություն ստացածներին ավելի լայն արտոնություններ տրվեն ռազմական գերատեսչության գծով:

10. Վարժակայանների ցանցը ծավալել, որի կարիքն զգացվում է աշխատանքի որակի բարձրացման անհրաժեշտության, անընդհատին անցնելու և հերթերով աշխատելու հետևանքով: Ցանցի ծավալումը կատարել սակավազոր ռազմական անկյունների գույքի կենտրոնացման, նպատակային նշանակումների համար միջոցներ հավաքելու, տեղական մարմիններից օգնություն ստանալու միջոցով: Վերջինս պիտի կատարվի անվճար շենքեր տրամադրելու, դրանց սարքավորման և պահպանման համար միջոցներ բաց թողնելու և բոլոր կազմակերպությունների բյուջեներով արված հատկացումներն ավելացնելու ձևով:

11. Ֆիզիքական նախապատրաստմանը վերաբերող աշխատանքը ծավալել՝ ռազմական և ֆիզիքական նախապատրաստման կոմպլեկտավորման, զբաղմունքների ծրագրերում որոշ ժամանակ ֆիզիքական նախապատրաստման հատկացնելու, հրահանգիչների և ակտիվիստների համար սեմինարներ և կարճատև դասընթացքներ կազմակերպելու, այլ և Պաշըավիքիմի բոլոր դասընթացներում և դպրոցներում ֆիզիքական նախապատրաստման պարտադիր դասընթացներ մտցնելու միջոցներով: Աշխատանքի աշխուժացման նպատակով լայն չափերով օգտագործել ֆիզկուլտուրայի և սպորտի տարրերը՝ ռազմականացված տարրերով նրա ուսումնական և մասսայական աշխատանքը բազմակողմանի դարձնելով: Առանձին ուշադրություն պիտի դարձվի մրցության մեթոդի լայն օգտագործման վրա: Գործնական կոնտակտ հաստատել ֆիզ-

կուլտուրայի խորհուրդների հետ՝ սպորտի ռազմականացման ղեկավարությունն հանձն առնելով:

12. Ընկերության կազմակերպությունները ապահովել հրահանգչական կազմով՝ պահեստի լավագույն հասարակական ջիգ ունեցող հրամանատարներին ներգրավելու և առավելագույն չափով օգտագործելու միջոցով: Նպաստել, որ նրանց գիտելիքներն ու սովորույթները ժամանակակից պահանջների բարձրության վրա պահվեն: Հրահանգչական շտատային կազմի, մասնավորապես ռազմղեկների պարտականությունները ու իրավունքները ճշտորոշ կարգավորել: Ռազմղեկների և հրահանգիչների անհրաժեշտ կվալիֆիկացիան պահպանելու համար՝ ռազմական գերատեսչության հետ համաձայնության գալով՝ նրանց մասնակից դարձնել զինվորական խաղերին, դաշտային ելքերին, մանյովրերին և ԲԳԿԲ հրամկազմի հավաքույթներին՝ կատարելագործման դասընթացներ անցնելու, զորքերի մեջ ստաժ ձեռք բերելու միջոցով, այլ և հանրապետական, յերկրային (մարզային) խորհուրդներին կից հատուկ կարճատև կուրսերի դասընթացներն անցնելու միջոցով:

13. Տերիտորյալ զորամասերի կոմպլեկտավորման շրջաններում ուժեղացնել միջհավաքույթային աշխատանքը բարձր տիպի խմբակների միջոցով՝ հրամանատարության և քաղմարմինների հետ համաձայնեցնելով:

14. Լայնորեն ծավալել ճամբարային ռազմական աշխատանքը, որով Ընկերության անդամների ամառային գործնական նախապատրաստությունը կապակցվում է արձակուրդի և աշխատանքների ընդարձակման ժամանակամիջոցների խելացի հանգստի հետ: Միջհավաքային ճամբարային աշխատանքն ավելի լրիվ չափով կազմակերպչորեն ու նյութապես ապահովելու համար, ավելի սերտ կապել այն Սոցապի, արհմիությունների, լուսժողկոմատի և այլ կազմակերպությունների հետ, որպեսզի հիշյալ կազմակերպությունները աշխատանքի այդ տեսակին գործնական և դրական օգնություն ու միջոցներ տրամադրելու կոչվեն:

15. ԲԳԿԲ մանյովրերին մասնակցելը կատարվում է զորամասերի մեջ Պաշրավիաքիմի պատրաստված վարժա–շարքային ստորաբաժանումներ, ո՛չ ավելի քան մի գումարտակ, խառնելով: Այդ աշխատանքի մեջ պետք է հավասար չափով մասնակցեն նաև մասնագիտական խմբակները՝ գործադրելով ժամանակակից տեխնիկան՝ ավտո, տրակտոր, ինքնաթիռ, ռադիո, որպես ավտոմոտորացված և այլ զորամասեր, որոնք կազմվում են համապատասխան կազմակերպություններին՝ Ավտոդոր, Ռադիո Սիրողների Ընկ., ՑԿԽ, Կարմիր Խաչ, այս զոր–



ծին մասնակցելու կոչելով: Պաշրավիքիմի ինքնուրույն, զինվորական մասերից կտրված և վարժական տեսակետից աննպատակահարմար յերկարատև մանյովրեր, որպես կանոն, չկազմակերպել՝ սահմանափակվելով վարժա–շարքային ստորաբաժանումները կարճ ժամանակով դուրս հանելով և գործողությունների սահմանափակ շրջանով:

Կանանց մասնակցությունը մանյովրերին պետք է ընթանա առավելապես օժանդակ սպասարկության գծով՝ որպես սանիտարուհիներ, տելեֆոնիստներ, նրանց օգտագործելու գծով:

16. Վճռական միջոցներ ձեռք առնել Պաշրավիքիմի աշխատանքը ԲԳԿԲ մասերում ծավալելու ուղղությամբ՝ քաղմարմինների հետ այդ խնդրի շուրջը լիակատար համաձայնության գալով ու այն նպատակներին ձգտելով, որ բերված են Պաշրավիքիմի ԿԽ նախագահության թեզիսներում—«Պաշրավիաքիմի ԲԳԿԲ մեջ կատարելիք աշխատանքի մասին» (տ. հավելված առաջին):

17. Հաշվի առնելով գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման արագ աճումը ու դրա հետևանքով քաղաքական կացության փոփոխությունը գյուղում, հետագայում ռազմական աշխատանքը գյուղում ծավալել սոցիալիստական հատվածի կուլտուր–կրթական բազաների, խորհրդային խոշոր տնտեսությունների և կոլտնտեսությունների շուրջը (առաջին հերթին տերիտորիալ զորամասերի ռայոններում), դրանցում վարժակայաններ, ռազմական անկյուններ կազմակերպելով և վարժական–շարքային ստորաբաժանումների սկզբունքը կիրառելով:

Գյուղացիներին ռազմական աշխատանքով ընդգրկման ավելացումը պետք է առաջին հերթին ընթանա չքավորական և միջակ յերիտասարդության միջից փոփոխիկ արտադրայինների, այնուհետև միայն բնակչության մյուս մասի ընդգրկման ուղիով՝ դասակարգային խիստ ընտրության պահպանմամբ:

Գյուղում ակտիվ ու ղեկավարություն ընտրելիս, գլխավոր ուշադրությունը պետք է դարձնել զորացրված կարմիր բանակայիններին և գյուղի կուլտուր՝ հասարակական ուժերի ներգրավմանը:

Սահմանամերձ ռայոններում ռազմական աշխատանքը պետք է կառուցվի սահմանամերձ շրջանի առանձնահատկությունները հաշվի առնելով՝ հետապնդելով ինչպես բնակչության ինքնապաշտպանության համար նախապատրաստելու, այնպես և ապագա պատերազմում, դրան գործնականորեն նախապատրաստվելու ու Կարմիր Բանակին աջակցելու բնագավառներում բնակչության առաջադրված խնդիրները պար–

պարանելու նպատակներին: Ռազմական գործն աշխուժացնելու համար, կիրառել քաղաքային բջիջների կողմից գյուղական բջիջների շեֆության վերցնելու սիստեմը: Իսկ ավելի հետամնաց շրջանների համար կիրառել շրջիկ դպրոցների սիստեմը՝ խմբակային աշխատանք տանելու և ակտիվից ռազմական աշխատանքի հրահանգիչներ նախապատրաստելու համար:

18. Վճռականապես ամրապնդել ռազմական սեկցիաները և ավելի ուշադրություն դարձնել հեծելային աշխատանքին, առանձնապես ընտելացնելով աշխատավորներին մասնագիտական հեծելազորային նախապատրաստմամբ ընդգրկելու աշխատանքը:

19. Ծովափնյա և գետափնյա շրջաններում ապահովել ռազմածովային աշխատանքի հետագա զարգացումը: Հաշվի առնելով տեխնիկայի աճումը, ռազմածովային գործի բարդությունը՝ հատուկ ուշադրություն դարձնել ռազմածովային կադրեր պատրաստելու վրա:

20. Հաստատել ռազմական գործի նյութական ապահովման կայուն նորմաներ, ապահովման տաբել, ու ըստ դրանց բոլոր անհրաժեշտ նյութերի և սարքավորումների պլանային մթերումներ կատարել (ռազմամթերք, ճամբարային գույք, մանեժներ, ռազմածովային կայաններ և այլն):

Ռազմական աշխատանքի այն պարտադիր տեսակների վերաբերմամբ, վորոնք ապահեվվելու յեն ռազմական գերատեսչության կողմից,—ունենալ ԽՍՀՄ ՌՀԽ կողմից հաստատված նորմաներով հարկ յեղած բոլոր տեսակի գույք, այլ և ռազմական գերատեսչությունից աջակցություն ստանալ մասնագիտական ուսուցում անցկացնելու համար: Այդ աջակցությունը պիտի արտահայտվի նյութական մասի, սարքավորված դասարաններ և վարժակայաններ տրամադրելով:

21. Մասսայական ռազմական պրոպագանդն ուժեղացնել և ակտիվացնել՝ աշխատավորության լայն մասսաների ուշադրությունը պաշտպանության հարցերի վրա դարձնելով, դեպի զինվորական մասերի զորանոցները, ճամբարները, մանյովրերը և այլն եքսկուրսիա կազմակերպելով:

VI. Դրա հետ միասին համագումարը գտնում է, վոր ռազմական նախապատրաստության հնգամյա պլանի, ու դրա կողմից դրված խնդիրների հաջող իրագործումն այն դեպքումն է միայն հնարավոր, յեթե ռազմական գերատեսչությունը լրիվ ու բազմակողմանի ոգնություն ցույց տա և յեթե կոմյերիտմիությունն ու պրոֆմիությունները տարվող աշխատանքին ակտիվ մասնակցեն ու աջակցեն:



# ՔԻՄԻԱՑԻԱՆ ՅԵՎ ԽՍՀՄ ՈԴԱՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## I

Քիմիզացիայի և քիմիական տեխնիկայի հաջողությունները, հատկապես վերջին տասնամյակում, խոշորագույն կապիտալիստական յերկրներում տարան վո՛չ միայն դեպի տնտեսության զանազան ճյուղերի լայն քիմիզացիան, այլ և, միաժամանակ ավիացիայի զարգացման հետ միանալով՝ ապահովեցին նրանց բանակները բացառիկ ու չտեսնված ուժի քիմիական հարձակման միջոցներով:

ԽՍՀՄ ժողովրդատնտեսության քիմիզացիայի պրոբլեմը տեխնիկական տեսակետով խոշոր նյութական նախադրյալներ է ստեղծում քաղաքի և գյուղի սոցիալիստական շինարարության քիմիական հարձակման բոլոր ձևերի դեմ յերկրի քիմիական պաշտպանության համար:

## II

Պաշտավիաքիմի յերկրորդ համագումարը գտնում է, վոր ԽՍՀՄ քիմիզացիայի տեմպը չափազանց անբավարար է և անհրաժեշտ է համարում:

1. Ուժեղացնել պրոպագանդը հանքային պարարտանյութեր գործադրելու ուղղությամբ, առաջին հերթին՝ գյուղի սոցիալիստական հատվածում:

Առանձին ուշադրություն դարձնել տեղական պարարտանյութերի և շատ գործնական նյութերի ավելի լրիվ և կուլտուրական ոգտագործման անհրաժեշտության վրա, վորի համար Կոլտնտեսկենտրոնին, Խլեբոցենտրին և Զերնոտրեստին ու գյուղատնտեսական աշխատանքով զբաղվող այլ կազմակերպություններին առաջադրել պարարտանյութերի լայն գործադրման պրոբլեմը, այդ նպատակով ուժեղացնելով փորձնական-ցուցադրական աշխատանքը և նպաստելով ֆոսֆորիտի, կրի և այլն տնայնագործական արտադրությանը:

2. Ընկերության և համապատասխան կազմակերպությունների գործունեությունն ավելի լայն ծավալել բերքատվության բարձրացման համար պայքարելու շրջանում՝ վնասատուների դեմ կռվելու աշխատանքների մասսայական կազմակերպությունը ծավալելու միջոցով: Ընկե-

ության գործունեության մեջ դաշտի, այգու, բանջարանոցի, շտեմարանի և տան վնասատուների դեմ պայքարին առաջնակարգ տեղերից մեկը հատկացնել: Դրա համար գյուղատնտեսության վնասատուների դեմ կռվող ջոկատներն ամրապնդել և ուժեղացնել ու նորերը կազմակերպել, դրանց վրա դնելով գյուղատնտեսության վնասատուների և բնակարանային պարազիտների դեմ պայքարելու ձեռնարկումների մըշտական գործադրման ու օրինաչափ ղեկավարման պարտականությունը: Խնդրել կառավարության, վոր նա այդ աշխատանքն հանձնի Պաշրավիաքիմին: Պաշրավիաքիմի ԿԽ կից մի կոմիտե կազմակերպել գյուղատնտեսության վնասատուների և տնային պարազիտների դեմ մղվող պայքարի աշխատանքը ղեկավարելու համար, այդ մարմնում միացնելով դերատիզացիայի, դեզինսեկցիայի և դեզինֆեկցիայի ամբողջ գործի ղեկավարությունը:

Վորպես հիմնական խնդիր դնել պարտադիր համատարած դերատիզացիայի գործադրումը: Ամեն տարի վնասատուների դեմ պայքարելու շաբաթներ կազմակերպելը սիստեմ դարձնել:

3. Խորհրդային տնտեսությունների և կոլտնտեսությունների Պաշրավիաքիմի բջիջներին առաջադրել վո՛չ միայն ագրոմինիմումը գործնականորեն իրագործելու խնդիրը, այլ և քիմիական միջոցների հիմունքով դրա առավելագույն ընդարձակումը՝ վնասատուների դեմ կռվելով և հանքային պարարտանյութեր գործադրելով: Այս բազայի վրա հիմնվելով պետք է ձգտել քիմիական անգրագիտության վերացման՝ աշխատավոր մասսաներին ամենալայն չափերով քիմիական խմբակները, գյուղատնտեսական խմբակները, կարճատեվ դասընթացները, դըպրոցները և այլն ներգրավելով:

4. Պաշրավիաքիմի կազմակերպություններն անհրաժեշտ է աշխատեն, վոր գյուղի սոցիալիստական հատվածի օժանդակ այն արտադրությունները (կաշեգործական, անտառաքիմիական և այլն), վոր կան խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններում, քիմիացվեն:

5. Քանի վոր յերկրի առաջ դրված է մի խնդիր՝ կարճ ժամանակամիջոցում սոցիալիստական հիմունքներով վերակառուցել գյուղը և կոլեկտիվացնել գյուղատնտեսությունը՝ ապա այդ աշխատանքը Պաշրավիաքիմում ուժեղացնելու համար համագումարն անհրաժեշտ է համարում ամենուրեք Պաշրավիաքիմի խորհուրդներին կից ինքնուրույն գյուղատնտեսական սեկցիաներ հիմնել:

## III

1. Քիմիական արդյունաբերության հնգամյա պլանի վերաքննությունն անհրաժեշտ համարել ամենից առաջ այն արտադրությունների ավելացման ուղղությամբ, վորոնք սնում են գյուղատնտեսությանն ու պաշտպանությանը: Այս ուղղությամբ Պաշրավիաքիմի ԿԽ պետք է կա-



ռավարության առաջ բարձրացնի քիմիական արդյունաբերության տեսակարար կշիռը ժողովրդատնտեսության սիստեմի մեջ 9—10%-ից, վոր նախատեսված եր հին հնգամյակով, 12—13% բարձրացնելու հարցը:

2. Հնգամյա պլանն իրագործելու պրոցեսում ձգտել, վոր գյուղի սոցիալիստական հատվածը ապահովվի հանքային պարարտանյութերով և վնասատուների դեմ կռվելու քիմիական նյութերով: Ամենալայն չափով օգտագործել Խիբինայի ապատիտների և Ուրալի կալիոնի հանքերը: Հնգամյակի վերջին պարարտանյութերի արտադրությունը ու գործադրումը առավելագույն չափերի հասցնել: Առավելագույն արագությամբ զարգացնել քիմիական արդյունաբերության այն ճյուղերը, վորոնք ապահովում են մասնանշված արտադրությունները գյուղատնտեսության համար այն հաշվով, վոր հնգամյակի վերջին կարելի լինի հետեվյալ նյութերի արտադրության անհրաժեշտ չափերին հասնել՝ կապված ազոտի, ծծմբաթթվի, քլորի, մկնդեղի և այլն հետ:

3. Ապահովել անտառա-քիմիական անիլո-ներկերի և քիմիական թեթեվ արդյունաբերության այլ, ինդուստրիայի համար անհրաժեշտ, տեսակների զարգացումը:

4. Հատուկ ուշադրություն դարձնել բարձրորակ ակտիվացված ածուխի լայն արտադրության կազմակերպման վրա, վոր կարեվորագույն դեր է խաղում յերկրի պաշտպանության գործում:

5. ԽՍՀՄ քիմիական արդյունաբերությունն ապահովել անհրաժեշտ քիմիական մեքենաշինությամբ և թթվա-դիմացկուն ձուլվածքների արտադրությամբ:

6. Պաշրավիաքիմի հանրապետական և մարզային կազմակերպությունները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն:—

ա) Լենինգրադի և Հյուսիսային մարզերում՝ խիբայի ապատիտների, թերթաքարերի, կավի և անտառաքիմիական արդյունաբերության վրա:

բ) Վոլոժեյի շրջանում՝ պարարտանյութերի արդյունաբերության և թերթաքարերի վրա:

գ) Ուրալում՝ կալիոնի հանքերի օգտագործման և կոմբինացված քիմիական արդյունաբերության վրա:

դ) Սիբիրում՝ քարածուխի ու դրա հետ կապված արդյունաբերության, ամիակի սինթեզի և անտառաքիմիական արդյունաբերության զարգացման վրա:

յե) Կենտրոնական-Արդյունաբերական շրջանում՝ խոշոր կոմբինատների զարգացման, անիլո-ներկային, լաքի և ներկի, յուղերի ար—

դյունաբերության կենտրոնացման և քարածխային արդյունաբերության խոշոր քիմիական կոմբինատների զարգացման վրա:

գ) Կովկասում՝ ազոտի սինթեզի, պարարտանյութային արդյունաբերության և նավթի հետ կապված ֆարմացեվտիք արտադրության վրա։

ե) Միջին Ասիայում՝ կաուչուկային բույսերի մշակման, կաուչուկ ու դրա հետ կապված քիմիական և պարարտանյութային արդյունաբերության զարգացման վրա:

Պաշըավիաքիմի բոլոր կազմակերպությունները պետք է ուշադրություն դարձնեն արտադրության մնացորդների օգտագործման և ազոտային նյութերի, ֆոսֆորիտների, քլորի արտադրության, ծծումբի հանքերի, մկնդեղի, կոքսո-բենզոլային և անիլո—ներկային արդյունաբերությունների վրա:

IV.

1. Պաշըավիաքիմի յերկրորդ համագումարն առաջարկում է Ընկերության բոլոր կազմակերպություններին, վոր նրանք ամենալայն աշխատանք ծավալեն աշխատավոր մասսաների մեջ քիմիական պրոպագանդ անելու բնագավառում և անհրաժեշտ համարեն Ընկերության ներսում քիմիական աշխատանքի տեսակարար կշիռը վճռականապես փոխել, վորը վերջին ժամանակներս զգալի չափով հետ է մնում այն խնդիրներից, վորոնք այդ բնագավառում առաջադրվում են Ընկերության ու յերկրին:

2. Պաշըավիաքիմի համագումարը, ինչպես գյուղի սոցիալիստական հատվածի, նույնպես և ֆաբրիկագործարանային ձեռնարկությունների բոլոր սատրին կազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, վոր անհրաժեշտ է մշտական ու համառ պայքար մղել իրենց ձեռնարկության և տնտեսության քիմիզացիայի համար՝ այս նպատակով օգտագործելով սոցիալիստական մրցման զանազան ձևերը, արտադրական խորհրդակցությունները, հարվածայնությունը և այլն:

3. ԲՈՒՀ-երում, ԲՏՈՒՀ-երում, տեխնիկումներում, գիտական հաստատություններում և գիտական-հետազոտական այլ հիմնարկություններում Պաշըավիաքիմի բոլոր կազմակերպությունների ուշադրությունը համագումարը դարձնում է այն հանգամանքի վրա, վոր անհրաժեշտ է գիտական հետազոտական աշխատանքը խթանել քիմիական լաբորատորիաներում վերոհիշյալ ուղղություններով, ինչպես յերկրի քիմիզացիայի, նույնպես և քիմիական պաշտպանության կազմակերպման համար՝ ամենաբարձր գիտության և տեխնիկայի հիմունքներով՝ այդ աշխատանքի ղեկավարությունը, կոնտրոլն ու պլանայնացումը Պաշըավիաքիմի քիմիական-արդյունաբերական գիտական սեկցիայի մեջ կենտրոնացնելով:



4. Յերկրի քիմիացման գործում լայն ստեղծագործական միտք ներգրավելու համար համագումարն անհրաժեշտ է համարում ամեն կերպ աջակցել քիմիական գյուտարարության՝ լաբորատորիաներ, կոնսուլտացիաներ կազմակերպելով, գրականություն մատակարարելով և այլն:

Քիմիական մտքի հզոր, կազմակերպող գիտական-կուլտուրական կենտրոն և քիմիական գրականության ու քիմիական գիտելիքների պրոպագանդայի օջախ ստեղծելու նպատակով, համագումարն անհրաժեշտ է համարում Մոսկվայում յերկրային և մարզային կենտրոններում քիմիայի տներ հիմնել:

5. Համագումարը Պաշըավիաքիմի բոլոր կազմակերպությունների ուշադրությունն է դարձնում այն հանգամանքի վրա, վոր յերկրաբանական-արդյունաբերական հետախուզությունների միջոցով հումքի զանազան տեսակների վորոնումներին անհրաժեշտ է ամենալայն աջակցություն ցույց տալ:

Մեր յերկրի հարստություններն առավել արագությամբ և լրիվ չափով հայտաբերելու նպատակով, համագումարն առաջարկում է Պաշըավիաքիմի տեղական կազմակերպություններին, վոր նրանք վերոհիշյալ հետախուզություններին գործոն մասնակցություն ցույց տան:

6. Համագումարն անհրաժեշտ է համարում ամենավճռական միջոցներ ձեռք առնել գյուղատնտեսության և արդյունաբերության մեջ չուտափույթ կերպով քիմիկոսների կադրեր ստեղծելու ուղղությամբ: Այս նպատակով Համագումարն առաջարկում է Պաշըավիաքիմի կազմակերպություններին յերեկոյան համալսարաններ, տեխնիկումներ, հրահանգիչներ պատրաստելու կուրսեր և այլն կազմակերպել ու դրանով նպաստել յերկրի տնտեսության վերակառուցման ու ինդուստրիալիզացիայի գործին:

7. Համագումարը Լուսժողկոմատի ուշադրությունն է դարձնում դպրոցներում, բանֆակներում, տեխնիկումներում, և առանձնապես ԲՈւՀ-երում ու ԲՏՈւՀ-երում քիմիական գիտություններ դասավանդելու նշանակության վրա, և վո՛չ մի կերպ թույլատրելի չի համարում, վոր այդ գիտությունների դասընթացները կրճատվեն կամ դրանք կուրսից դուրս հանվեն:

8. Համագումարն անհրաժեշտ է համարում գիտական հանրամատչելի և տեղեկատու բնույթ կրող քիմիական գրականության հրատարակման և տարածման գործի մեջ լայն մասնակցություն ունենալ, այլ և Պաշըավիաքիմի սեկցիաներին մասնակից դարձնել քիմիզացիայի Կոմիտեյի կազմակերպած համամիութենական կոնֆերենցիաների աշխատանքներին: Միջոցներ ձեռք առնել, վոր քիմիական մասսայական գրականությունն էժանացվի և ազգային լեզուներով հրատարակվի:

9. Համագումարն առաջարկում է Պաշտավիաքիմի ԿԽ, որ 2 ամսվա ընթացքում գյուղատնտեսական սեկցիաների նոր կանոնադրությունը մշակված ու կազմակերպչապես չապահովված աշխատանքին բացառիկ ռայոնը ներառյալ:

V

1. Համագումարն ընդունում է, որ թիկունքի օդաքիմիական պաշտպանության նախապատրաստումը միանգամայն անբավարար տեղ է բռնում Ընկերության գործունեության մեջ, համեմատած այն կոնկրետ խնդիրների հետ, որ առաջադրվում են նրան թիկունքն ամրացնելու վերաբերմամբ: Պետք է ի նկատի ունենալ նաև, որ թիկունքի օդաքիմիական պաշտպանության նախապատրաստումը խորհրդային ամբողջ հասարակայնության, տնտեսական, արհմիութենական և պետական մարմինների կողմից չի ապահովված պատշաճ ուշադրությամբ և միջոցներով:

Ներկա վիճակի համեմատությամբ, թիկունքի օդաքիմիական պաշտպանության նախապատրաստման ուղղությամբ Ընկերության տարած աշխատանքին պետք է առաջնակարգ տեղ տրվի, հատկապես այժմ, երբ Միության տերիտորիային սպառնում է օդաքիմիական վտանգը: Այդ աշխատանքը պետք է տասնյակ անգամ ավելի զարգանա, որպեսզի հնարավոր լինի միլիոնավոր աշխատավորներին մասսայականորեն ընդգրկել ու նրանց օդաքիմիական պաշտպանության գործին սովորեցնել:

2. Օդաքիմիական հարձակումների հնարավորությունները և թունավորող նյութերից պաշտպանվելու գործի առանձնահատկությունները ի նկատի ունենալով՝ Համագումարը գտնում է, որ օդաքիմիական պաշտպանության գործում գլխավոր խնդիրը պետք է հանդիսանա հակաքիմիական պաշտպանության աշխատանքը և առաջարկում է այդ քիչ մշակված ու կազմակերպչապես չապահովված աշխատանքին բացառիկ ուշադրություն նվիրել այն հաշվով, որ պատերազմի դեպքում աշխատավորության լայն խավերը և քաղաքացիական հիմնարկությունները միանգամայն պատրաստված լինեն այդ բնագավառում:

քիմիական ծխման կամերաներով, պատսպարաններով և այլն:

3. Համագումարը գտնում է, որ օդաքիմիական պաշտպանության սեկցիաների պարտականությունների մեջ պետք է մտնի հետևյալը.—

ա) Պաշտավիաքիմի օդաքիմիական պաշտպանության ամբողջ աշխատանքի դիրեկտիվային ղեկավարությունը:

բ) Ջոկատների, խմբակների, վարժակայանների օդային դիտողության, հաղորդման և կապի (ВНОС) պոստերի նախապատրաստման ծավալման խնդիրների կազմակերպչական և ֆինանսական պլանավորումը, աշխատանքի այդ տեսակների ապահովումը հրահանգչական կադրով,



գ) ՕՔՊ (օդաքիմիական պաշտպանության) գործնական աշխատանքի մեթոդական հրահանգումը և ստուգումը, թե ինչ չափով են կատարել ստորին կազմակերպությունները տարեկան պլանները:

դ) ՕՔՊ վերաբերմամբ մասսայական աշխատանքի կազմակերպումը և անցկացումը՝ ագիտացիայի և պրոպագանդի բոլոր ձևերն օգտագործելով:

յե) ՕՔՊ հարվածային բրիգադների կազմակերպումը և սոցիալիստական մրցությունների ղեկավարությունը:

Յերկրի Օդային Պաշտպանության (ПВО) մարմինների գործունեության հետ ավելի սերտ կապ ստեղծելու և աշխատանքները համաձայնեցնելու նպատակով, Համագումարն անհրաժեշտ է համարում հասարակական կարգով ՕՔՊ սեկցիաների կազմի մեջ օդային պաշտպանության մարմինների աշխատավորների ներգրավումն ուժեղացնել:

4. Նշելով, որ ՕՔՊ գծով աշխատելու համար պատրաստված կադրերի հարցը առանձնապես ծանր վիճակումն է գտնվում և որ այդ կադրերը օդային պաշտպանության մարմիններից կամ ԲԳԿԲ մասերից լրացնելու և մասամբ օգտագործելու հնարավորությունները չափազանց սահմանափակ են՝ Համագումարն առաջարկում է ՕՔՊ հրահանգիչների պատրաստման և վերապատրաստման կուրսերի աշխատանքն ավելի լայն ծավալել՝ Ընկերության հնգամյա պլանի աշխատանքների նշած տեմպին համապատասխան:

5. Հակաքիմիական պաշտպանության հիմնական միջոցը ТТ-3 տիպի հակագազը մշակելու և դրա արդյունաբերական մասսայական պատրաստման նվաճումը նշելով՝ Համագումարն իր անբավականությունն է հայտնում, որ այդ արտադրության ծավալումը դանդաղ տեմպով է ընթանում, գինը բարձր է ու կոնստրուկտիվ ու տեխնիկական որոշ չափով ցածր հատկություններ ունի, և առաջարկում է ամենակարճ ժամանակամիջոցում վերացնել այդ թերությունները:

Համագումարը Խորհրդային Միության և ԽՍՀՄ ԳԺՏԽ ուշադրությունն է դարձնում այն հանգամանքի վրա, որ անհրաժեշտ է ուժեղ կերպով ծավալել հումույթային բազան, հատկապես ակտիվացված ածուխի արտադրությունը և արդյունաբերության այն բոլոր ճյուղերը, որոնք պետք է բավարարեն աշխատավոր բնակչության հակաքիմիական պաշտպանության միջոցների պահանջը:

6. Համագումարը գտնում է, որ օդային պաշտպանության մարմինները, տնտեսական և գիտական-հետազոտական կազմակերպությունները անթույլատրելի անտարբերությամբ են վերաբերվում կոլեկտիվ պաշտպանության հարցերին ու դրանց մշակման, առանձնապես նոր կառուցվող և արդեն կառուցված բնակելի շենքերում կիսանախա-

պաշտպանական ապաստարանի հարմարություններ՝ հակաքիմիական պաշտպանության միջոցներով սարքավորված՝ կառուցելու գործին։

Համագումարը խորհրդային ամբողջ հասարակայնության ուշադրությունն է դարձնում այն հանգամանքի վրա, որ քաղաքացիական կառուցումների ուրբանիզացիությունն անհրաժեշտ է լրացնել այնպիսի պահանջներով և տեխնիկական նորմաներով, վորոնցով ապահովվեն ողաքիմիական հարձակումներից կոլեկտիվ պաշտպանության ձեռնարկումները։

Համագումարը Միության կառավարության ուշադրությունն է դարձնում այն հանգամանքի վրա, վոր քաղաքացիական կառուցումների ուրբանիզացիությունն անհրաժեշտ է լրացնել այնպիսի պահանջներով և տեխնիկական նորմաներով, վորոնցով ապահովվեն ողաքիմիական հարձակումներից կոլեկտիվ պաշտպանության ձեռնարկումները։

7. Համագումարն առաջարկում է Պաջրավխաքիմի ԿԽ աշխատել ավելացնելու ՈՔՊ հարցերին նվիրված մասսայական գրականության, զննական պլակատների, կինոֆիլմերի և այլն արտադրությունը՝ համապատասխան ուշադրություն դարձնելով ազգային լեզուներով գրականություն հրատարակելուն։

8. Ամբողջ աշխատանքին ավելի հարմարավետ բնույթ, կազմակերպվածություն և համաձայնեցվածություն տալու համար համագումարն անհրաժեշտ է համարում ՈՔՊ եռդային պաշտպանության ղեկավարության և պլանայնացման ամբողջ գործը համամիութենական մասշտաբով կենտրոնացնել հատուկ մարմնի մեջ՝ կառավարական կենտրոնական հեղինակավոր հիմնարկության կից։

9. Գոհունակություն հայտնելով, վոր թիկունքի ՈՔՊ նախապատրաստման գործի մեջ ներգրավված են Բնակարանային Կոոպերացիայի, Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի կազմակերպությունները՝ համագումարն առաջարկում է Պաջրավխաքիմի ԿԽ ե՛լ ավելի համաձայնեցվածություն և փոխադրեցություն հաստատել ՈՔՊ աշխատանքի մեջ և հանձնարարում է Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի հետ միասին ժամանակցել քաղաքացիական բնակչությանը քիմիական հարձակման վտանգից պաշտպանելու Մոսկվայի Կարմիր Խաչի եքսպերտների հանձնաժողովին։

10. Թիկունքի ՈՔՊ նախապատրաստման գործին աշխատավոր կանանց և հատկապես բանվորուհիներին ներգրավելու հարցին բացառիկ նշանակություն տալով, քանի վոր նրանք պատերազմի օրերին մասսայականորեն թիկունքում մնալով, հանդիսանում են ողաքիմիական հարձակումներից պաշտպանելու հիմնական կադրերից մեկը՝ համագումարն անհրաժեշտ է համարում այդ աշխատանքում կանանց մասնակցության աստիճանը բարձրացնել՝ նրանց ղեկավար և հրահանգչական աշխատանքի վճռականապես առաջ քաշելով։

11. Թիկունքի ՈՔՊ նախապատրաստման գործում միասնություն և նպատակահարմարություն մտցնելու համար, Համագումարը առաջարկում է, կամավորության և պարտադրության միջև ճիշտ հարաբերություն պահպանելով՝ ՈՔՊ սեկցիաների աշխատանքներում կարգապահությունն ու պատասխանատվությունն ուժեղացնել։

12. Համագումարն աննպատակահարմար է համարում ՈՔՊ սեկցիաներն ոդային պաշտպանության (ПВО) սեկցիաներ վերանվանել և գտնում է, վոր անհրաժեշտ է պահել նրանց նախկին անունը («ողայինքիմիական պաշտպանության սեկցիաներ»)։

# ԱՎԻԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Օդային նավատորմը մեր լայնարձակ ԽՍՀ Միության համար հըսկայական ռազմական և կուլտուր-տնտեսական նշանակություն ունի թե՛ վորպես պաշտպանության, թե՛ վորպես հաղորդակցության, կապի և ցանքերի ու անտառների վնասատուների դեմ կռվելու և այլն միջոց։

Նշելով, վոր աշխատավորների ակտիվությունը և ուշադրությունը օդային նավատորմի շինարարության վերաբերմամբ զգալի չափով ավելացել է՝ Համագումարը գոհունակությամբ նշում է Ընկերության հետեվյալ գլխավոր նվաճումները։—

1. Օդային նավատորմի և ավիոարդյունաբերության համար ավիացիոն-տեխնիկական կադրեր պատրաստելու խնդրում ուշադրության սրում ու մոբիլիզացիա է յերևան բերել,—վոր արտահայտվել է համամիութենական խորհրդակցություն գումարելով, քաղաքացիական ավիացիայի Խորհրդին կից Կոմիտե ստեղծելով, ԲՏՈՒՀ-ի ավիոբաժինների ու ֆակուլտետների ծավալման ու կազմակերպման աջակցելով և ուսանողներին կոնտրակտացիայով լայն ընդգրկելով։

2. Ընկերությունը ստեղծել է կուրսերի և դպրոցների ցանց ավիամոտորիստներ, ավիոտեխնիկներ և օդաչուներ նախապատրաստելու համար, այլ և կուրսեր (խմբակներ) է կազմակերպել, վոր աշխատավոր յերիտասարդության ընտրի և օդային նավատորմի դպրոցներն ընդունվելու համար նախապատրաստի։

3. Կազմակերպել ու կատարել է թեթև ինքնաթիռների մի շարք կոնստրուկցիաների համամիութենական եքսպլոատացիոն փորձեր, վորոշելու համար, թե վո՛րքան նրանք պետքական են մասսայական արտադրության և բնակչության միջև տարածելու համար։

4. Նախաձեռնություն է յերևան բերել և նյութապես աջակցել է խորհրդային առաջին բազմամոտոր մարդատար ինքնաթիռ (АНТ-9) կառուցելու գործին, վորով հնարավոր է յեղել մեր քաղաքացիական ավիացիան ինքնաթիռների վերաբերմամբ արտասահմանից միանգամայն ազատելու հարցի լուծմանը ձեռնարկել և օդային հաղորդակցությունների մեր գծերի վրա շարժման կանոնավորությունն ու վստահելիությունը ավելացնել։



5. Լայն տարածել է մոդելիզմն ու պլաներիզմը, այդ ճյուղերում բարելավել է աշխատանքի վորակը, վորով ապահովել է համամիութենական մի շարք նոր ռեկորդների հնարավորությունը՝ վերջին պլաներային մրցություններին։

6. Մի շարք փայլուն թռիչքներ է կատարել (Շեստակովի, Գրոմովի, Զուխնովսկու, Բաբուշկինի, աստղային և այլն), վոր խոշոր քաղաքական դեր են կատարել ու մտել են խորհրդային և համաշխարհային ավիացիայի պատմության մեջ, վորպես ռեկորդներ և օրինակներ։

7. Ավիացիոն «Самолет» ամսագրի հրատարակությունն է նպաստել՝ աշխատավորների լայն մասսաների միջև ավիացիոն տեխնիկական գիտելիքներ տարածելու, Ընկերության գործնական աշխատանքի հրահանգչական մեթոդական ղեկավարության ու տեղական կազմակերպությունների կողմից ավիացիոն աշխատանքի ասպարեզում ձեռք բերած փորձերն ու նվաճումներն իրար հետ ամսագրի եջերում փոխանակելու համար։

8. Ընկերության Կենտրոնական Խորհրդին կից օդաչուության Կոմիտե յե ստեղծել, վորի հիմնական նպատակն է մասսաների ուշադրությունը, ուժերը և միջոցները մոբիլիզացիա անել՝ դիրիժաբլների շինարարության զարգացման համար։

Նշված նվաճումների հետ միասին Համագումարը նշում է ավիացիոն շինարարության բնագավառի հետեվյալ թերություններն ու դըժվարությունները։

1. Բացակայում է սակավազոր մոտորների ինքնաթիռների մասսայական հայրենի արտադրությունը, վորպեսզի հնարավոր լինի դրանց լայն տարածել և գործադրել ավիոաշխատանքի բոլոր բնագավառներում։ Արտադրության այդ բացակայությունը տեղի յե ունենում այն պատճառով, վորովհետև ավիոարդյունաբերությունը չափազանց թույլ ուշադրություն է դարձնում այս պրոբլեմի գործնական լուծմանը։ Այս հանգամանքը պահանջում է ամբողջ Ընկերությունից և նրա Կենտրոնական Խորհրդից, վոր դրանք ավելի սրեն սակավազոր մոտորների արտադրության հարցը ու առավելագույն հաստատակամություն հայտաբերեն այս խնդիրը դրական կերպով լուծելու համար։

Համագումարը ընդգծում է, վոր սակավազոր մոտորների և ինքնաթիռների մասսայական արտադրության բացակայությունը հիմնական արգելքն է հանդիսանում յերկրի ավիացման տեմպերի ուժեղացման և մասսայականացման մաշտաբն ընդլայնելու, նորանոր ավիացիոն կադրեր պատրաստելու, թռնողների կադրի և օդային նավատորմի ռեզերվ պահելու խնդիրների հաջող լուծման հարցում։

2. Ընկերության մի շարք կազմակերպություններ բավականաչափ ակտիվություն յերևան չեն բերում օդային տրանսպորտի, ժողովրդա-

տնտեսության մի շարք ճյուղերում ավիացիան գործադրելու խնդրում, այլ և նրանք թույլ են վերաբերվում տեղական համապատասխան կազմակերպություններից միջոցներ ներգրավելու և օդային հաղորդակցության Ընկերության ակցիոներական կապիտալն ուժեղացնելու գործում։

3. Ընկերության կենտրոնական և տեղական կազմակերպությունների միջև ավիոաշխատանքի վերաբերմամբ կապը, հատկապես կենդանի կապը, թույլ է, և Կենտրոնական, Հանրապետական, յերկրային և մարզային սեկցիաները անբավարար ղեկավարություն են ցույց տալիս տեղական ավիացիոն աշխատանքին։ Պաշտավիաքիմի ԿԽ կից ավիացիոն աշխատանքի հրահանգչական շտատային կազմը անբավարար է ու դա միանգամայն բացակայում է յերկրային և հանրապետական խորհուրդներում։

4. Տեղական կազմակերպությունները (հատկապես դպրոցներն ու խմբակները) բավարար չափով չեն մատակարարվում ավիացիոն շինարարական, վառելու և յուղելու նյութերով, վորովհետև կազմակերպություններին այդ նյութերով կենտրոնացված պլանային մատակարարումը բացակայում է։

5. Բացակայում է ստանդարտ ուսուցողական պլանների գործարանային սերիային արտադրությունը, վորպիսի հանգամանքը թույլ տըրվեց բավարար չափով ծավալել պլաներային կայանների ցանցն ու նրանց աշխատանքը։

6. Մոդելիզմը թույլ է զարգացած, նրա ղեկավարությունն անբավարար է և յերիտասարդության մեջ աշխատանքի այդ տեսակը հարկ յեղած ուշադրությունը չի գրավում։

7. Պլաներիզմի և հատկապես մոդելիզմի վերաբերմամբ հրահանգիչների խիստ պակաս է զգացվում։

8. Զարգացման անբավարար տեմպ ունին ավիոակումբների, դըպրոցների և ավտոմոտորիստներ ու ավիատեխնիկներ նախապատրաստելու կուրսերի ցանցը, ինչպես նաև օդային նավատորմի ռազմական դըպրոցների համար թեկնածուներ պատրաստելու կուրսերի ցանցը։

Պաշտավիաքիմի յերկրորդ համագումարը Ընկերության ԿԽ և տեղական կազմակերպություններին ապագայի համար առաջադրում է հետևյալ ձեռնարկումները՝ ավիացիոն շինարարության ասպարեզում։

1. Աշխատել, վոր վոչ ուշ քան 1930—31 թիվը կառուցվի ավիոարդյունաբերական մի գործարան՝ սակավազոր մոտորների և ինքնաթիռների մասսայական արտադրության համար, ամեն կերպ աջակցել նյութական միջոցներով այս խնդիրների լուծմանը, նպատակային հանգանակություն կազմակերպել և նյութական միջոցների այլ աղբյուրներ փնտրել ու դրանից գոյացած գումարները գործարանի կառուցմանն ու



սարքավորմանը հատկացնել։ Այս աշխատանքի ընթացքում Պաշտավիաքիմը պետք է հենվի բանվորական լայն հասարակայնության և արհմիությունների վրա։

2. Ավիոակումբների լայն ցանցի զարգացման տեմպն ուժեղացնել, դրանց մեջ կենտրոնացնելով տեղական կազմակերպությունների ամբողջ գործնական աշխատանքը՝ ավիացիոն աշխատանքի և օդագնացության վերաբերմամբ։

3. Ծավալել խմբակների, կուրսերի և դպրոցների ցանցը ավիամոտորիստներ, ավիատեխնիկներ և ավիացիայի ու օդագնացության այլ մասնագետներ, հատկապես թռչողներ և օդագնացներ այն չափով պատրաստելու համար, վոր լրիվին բավարարի օդային նավատորմի պահանջները։

4. Դրա հետ միասին Ընկերության կազմակերպությունները՝ պրոֆմիությունների աջակցությամբ՝ պետք է իր ժամանակին միջոցներ ձեռք առնեն բանվորների վորակյալ կադրեր պատրաստելու և սակավազոր մոտորների և ինքնաթիռների գործարանին (վոր կազմակերպելու յե Ընկերությունը) նրանց ամրացնելու ուղղությամբ։

5. Ավելի լայն չափերով ծավալել օդային նավատորմի զինվորական դպրոցներին թեկնածուներ պատրաստելու խմբակներն ու կուրսերը։

6. Հատուկ ուշադրություն դարձնել Ընկերության ակտիվիստներից բանվորական յերիտասարդություն ընտրելու և նախապատրաստելու վրա՝ նրանց ԲՏՈՒՀ-երի ավիաֆակուլտետներն ուղարկելու համար։

7. Ամբողջ յերիտասարդության և հատկապես կոմյերիտների ուշադրությունը գրավել դեպի պլաներիզմը, ուժեղացնել պլաներների և պլաներային կայանների շինարարությունը և աշխատել, վոր ստանդարտ տիպի ուսուցողական պլաներների մասսայական արտադրություն կազմակերպվի։

8. Դպրոցական հասակի յերեխաների, հատկապես պիոներների և Պաշտավիաքիմի պատանի բարեկամների ուշադրությունը դարձնել դեպի մոդելիզմը և մոդելային գործի հրահանգիչների կարճատև կուրսեր կազմակերպել։

9. Աշխատել, վոր օդային նավատորմիղի և ավիաարդյունաբերության բոլոր աշխատավորները ներգրավվեն Ընկերության գործնական աշխատանքը։

10. ԿԽ և տեղական կազմակերպությունները պետք է ավելի ուժեղ ուշադրություն դարձնեն և ավելի մեծ միջոցներ տրամադրեն հատուկ ռեկորդային ինքնաթիռներ և մոտորներ կառուցելուն աջակցելուն, նոր սկզբունքներով ավիացիոն շարժիչներ և օդային հաղորդակցության միջոցներ հորինելու և կառուցելու գիտական-հետազոտական և եքսպերիմենտալ աշխատանքներին։

11. Ամեն կերպ պետք է աջակցել քաղաքացիական ավիացիայի զարգացմանը՝ պլանների և կոնտրոլ թվերի քննությանը մասնակցելով և օդային հաղորդակցության Ընկերության ակցիոներական կապիտալն ուժեղացնելով՝ տեղական խորհրդային մարմիններից և հասարակական կազմակերպություններից միջոցներ ներգրավելու միջոցով:

12. Ամեն կերպ աջակցել դիրիժաբլների ու դրանց մոտորների շինարարությանը, նպատակ դնելով հնգամյակի վերջին խորհրդային կոնստրուկցիայի և արտադրության դիրիժաբլներ ու մոտորներ գործածելը:

13. Հատուկ ուշադրություն դարձնել և ամեն կերպ աջակցել տեղական (գործկոմների, սպորտիվ-ընկերությունների և այլն) ավիացիայի զարգացմանը, այլ և աշխատել, որ օդանավերը մեծ չափով օգտագործվեն ժողովրդատնտեսության այլ ճյուղերում ևս, մանավորապես խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների սպասարկման գործում:

14. Ամենակարճ ժամանակամիջոցում տեղական կազմակերպություններին նյութական մասեր, վառելու, յուղելու և ավիացիոն հատուկ շինանյութեր մատակարարելու կենտրոնացված պլանային հայթայթում կազմակերպել:

15. Հատուկ ուշադրություն դարձնել օդային նավատորմի ռազմական դպրոցի թեկնածուների վորակական ընտրության և նախապատրաստման սոցիալական, ընդհանուր զարգացման և ընդհանուր մասնագիտական կրթության վրա, այդ նպատակով թեկնածուների նախնական ընտրություն կատարելով ընդունելությունից 6—12 ամիս առաջ և ընտրվածների նախապատրաստումը կազմակերպելով:

16. Կենտրոնական, հանրապետական և մարզային խորհուրդների կողմից հրահանգման և ղեկավարման կապն ուժեղացնել տեղական կազմակերպությունների աշխատանքների վերաբերմամբ՝ ավիացիոն աշխատանքի բնագավառում:

17. Բնակչության մեջն լայն ծավալել մասնագիտական ավիացիոն տեխնիկական գիտելիքների պրոպագանդը՝ ավիացիոն գրականություն հրատարակելով, ակումբներում, ֆաբրիկներում և գործարաններում զեկուցումներ կազմակերպելով ռադիոյի և «Самолет» և «Авиация и Химия» ամսագրերը տարածելով:

18. ԿԽ կից օդային իրավունքի սեկցիային պարտադրել, որ նա հետագա աշխատանքի ընթացքում ավելի մեծ ուշադրություն դարձնի օդային տրանսպորտի էկոնոմիկայի հարցերի մշակմանը, ու այդ կապակցությամբ նրան վերանվանել «օդային տեղափոխությունների էկոնոմիկայի և իրավունքի» սեկցիա:



# ԱԳԻՏ ՊՐՈՊԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

## I ԱԳԻՏ ՊՐՈՊԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԸ ՊԱՇՏ·ԱՎԻԱՔԻՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋ ՍԻՍՏԵՄՈՒՄ

1. Պաշտավիաքիմի գործունեության հիմնական ճյուղերի շարքում նոր պատերազմների և ԽՍՀՄ վրա համաշխարհային իմպերիալիզմի անմիջական հարձակման սպառնալիքի շուրջը ու այստեղից բխող հսկայական խնդիրների՝ Խորհրդային Միության բազմակողմանի ամրացման, ավիացիոն և քիմիական շինարարության, այլ և Պաշտավիաքիմի դերի և անելիքների շուրջը տարվելիք ագիտացիոն պրոպագանդիստական և դաստիարակչական աշխատանքը,—սոցիալիստական շինարարության հսկայական տեմպերի, ԽՍՀՄ միջազգային ժամանակակից դրության և դասակարգային կռվի սրման պայմաններում,—բացառիկ կարևորություն է ձեռք բերում: Դա ընկերության աշխատանքի ամբողջ սիստեմում, վերից վար, պետք է հիմնական տեղերից մեկը բռնի և Պաշտավիաքիմի գործնական ամբողջ աշխատանքի ծավալման բազան դառնա:

Մինչդեռ ագիտպրոպաշխատանքի այժմյան վիճակը իր թափով և վորակով, սակավաթիվ բացառությամբ, շատ հեռու յե ընկերության առաջադրված խնդիրներին համապատասխան լինելուց ու բացահայտ անբավարար դրության մեջ է գտնվում: Յեթե Պաշտավիաքիմի կազմակերպման սկզբնական ժամանակաշրջանում, այլ և ԽՍՀՄ միջազգային դրության խիստ վատթարացման առանձին մոմենտներում, ագիտպրոպաշխատանքն Ընկերության գործունեության մեջ իշխող դիրք է գրավում և հսկայական դեր է խաղում աշխատավորների լայն մասսաների ուշադրությունը պատերազմական վտանգի և յերկրի պաշտպանության ամրապնդման շուրջը մոբիլիզացիա անելու գործում,—ապա ներկա մոմենտում, հատկապես վերջին տարում, ագիտպրոպաշխատանքն սկսել է խիստ կերպով հետ մնալ Ընկերության գործունեության այլ բնագավառներից, և Պաշտավիաքիմի գործնական աշխատանքների մյուս տեսակներին աջ ու ձախ կուլ է գնում: Այստեղից բխում է, որ ստիպողական անհրաժեշտությամբ պետք է ընկերության բոլոր կազմակերպու-

թյունների ուշադրությունը սրել այն ուղղությամբ, թե Պաջավլիաքեմի գործունեության ամբողջ սիստեմում պետք է ագիտպրոպաշխատանքի դերն ու նշանակությունը առավելագույն չափով ուժեղացնել ու աշխատանքի այս տեսակը պետք է միանգամայն համապատասխան դարձնել մասսաների աճած պահանջներին և աշխատանքի այն տեմպերին, վոր վորոշվում են Ընկերության հնգամյակով:

## II ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԳԻՏՊՐՈՊ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԻՃԱԿԸ

1. Ընկերության ագիտպրոպաշխատանքի ժամանակակից դրության վերլուծության հիմունքով անհրաժեշտ է հետևյալ հիմնական դրությունը մատնանշել:—

ա) Թերագնահատվել է ագիտպրոպաշխատանքի դերն ու նշանակությունը և բազմաթիվ դեպքերում կազմակերպությունների մեծ մասը և Ընկերության առանձին աշխատավորները բավարար չափով չեն հասկացել այս աշխատանքի եյությունն ու խնդիրը:

բ) Ագիտպրոպաշխատանքի ընթացքում կամպանիաներով գործ դըլուխ բերելու մոմենտը ավելի մեծ տեղ է բռնել, քան պլանային աշխատանքը:

գ) Ագիտպրոպաշխատանքը սահմանափակվել է Պաջավլիաքեմի շըրջանակներով ու բավարար չափով լայն չի տարածվել Ընկերությունից դուրս:

դ) Ագիտպրոպաշխատանքների մեթոդներն ու ձևերը զգալի չափով հետ են մնացել ժամանակակից պահանջներից և Պաջավլիաքեմի ընդարձակման խնդիրներից:

ե) Ընկերության ագիտպրոպակտիվը չափազանց աննշան է քանակով և շատ թույլ է վորակով:

զ) Ագիտպրոպաշխատանքի ձևերն ու մեթոդները թույլ են հարմարեցված աշխատավորների տարբեր կատեգորիաների և խմբավորումների սպասարկմանը:

է) Մամուլը, ռադիոն, այլ և ագիտացիայի ու պրոպագանդի դեղարվեստական ձևերը թույլ են ոգտագործվել:

ը) Ագիտպրոպաշխատանքի մեջ քանակական և առանձնապես վորակական հաշվառման ու կոնտրոլի աշխատանքը անբավարար հիմքերի վրա յե դրված ու կատարված:

թ) Ագիտպրոպաշխատանքի ֆինանսական ծախքերը Ընկերության ամբողջ բյուջեյի վերաբերմամբ միանգամայն անբավարար են:

ժ) Ագիտպրոպաշխատանքը բավարար չափով չի ղեկավարվել ինչպես Կ.Խ., նույնպես և մարզային, գավառական և ստորադաս կազմակերպությունների կողմից, վորոնց ագիտպրոպ սեկցիաները մեծ մասամբ շատ թույլ են աշխատել և ել ավելի հաճախ փոխարինվում են ապարատի ղեկավարությամբ:



2. Ագիտպրոպաշխատանքն առանձնապես կաղում է Ընկերության ստորին ցանցում՝ ռայոններում և բջիջներում: Դեռ մինչև այժմ ռայոնական խորհուրդների մեծ մասում ագիտպրոպ սեկցիաներ չկան, իսկ բջիջների ճնշող մեծամասնությունը զուրկ է ագիտպրոպ կազմակերպիչներից, այլ և խմբական ագիտատորների ինստիտուտից:

## III ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ԱԳԻՏՊՐՈՊ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

3. Դասակարգային կռվի սրումը յերկրում, առանձնապես գյուղում և դասակարգայնորեն ոտար տարրերի կատաղի դիմադրությունը մեր սոցիալիստական հաջող հարձակմանը պահանջում են, վոր դասակարգային ճշտորոշ գիծն ապահովվի Ընկերության ամբողջ ագիտպրոպաշխատանքի բովանդակության և սիստեմի մեջ:

Համագումարն առանձնապես ընդգծում է, վոր անհրաժեշտ է ագիտպրոպաշխատանքը կենտրոնացնել՝ Պաջավլիաքեմի շարքերում դասակարգային ճշտորոշ գիծ տանելու համար պայքարելու խնդիրների վրա, դասակարգային գծի աղավաղումների դեմ պայքարելու վրա, և աջ ոպորտունիզմի և անսկզբունք գործարարության այն արտահայտությունների վրա, վոր կան ընկերության մի շարք կազմակերպությունների մեջ:

4. Ագիտպրոպաշխատանքի հիմնական բովանդակությունը պետք է հանդիսանա՝ պատերազմի վտանգի և Խորհրդային Իշխանության կողմից խաղաղության համար մղած պայքարի հարցերի պրոպագանդայից զատ՝ պաշտպանության ամրապնդման, սոցիալիստական շինարարության 5-ամյա պլանի, կոլտնտեսական շարժման խնդիրները և կուլակին վորպես դասակարգ, վերջ տալու խնդիրը: Ագիտպրոպաշխատանքի կարևորագույն խնդիրը պիտի լինի Ընկերության հնգամյա պլանը լայն շրջաններում լուսաբանելը, Պաջավլիաքեմի անդամների մասսային դրա հետ ծանոթացնելն ու սրա իրագործման ուղղությամբ գործնական ձեռնարկումներին դիմելը:

Դրա հետ միասին Ընկերության ագիտպրոպաշխատանքը պետք է Ընկերության ուշադրությունը մոբիլիզացիա անի Պաջավլիաքեմի շարքերում մասսայականության, վորակի, կարգապահության և պատասխանատվության բարձրացման խնդիրների շուրջը:

5. Սոցիալիստական շինարարության և կոլտնտեսական շարժման վիթխարի խնդիրները ստիպողաբար պահանջում են, վոր Պաջավլիաքեմի խաղաղ գործունեությունը ուժեղացվի: Դրա հետևանքով բացառիկ կարևորություն է ձեռք բերում այն խնդիրը, թե վո՛րքան վարպետությամբ կկապվեն սոցիալիստական շինարարության և պաշտպանության ամրապնդման խնդիրների շուրջ տարվելիք պրոպագանդի և ագիտացիայի մոմենտները՝ գլխավոր ուշադրությունը պաշտպանության խնդիրների պրոպագանդին նվիրելով:

6. Պաշտավիաքիմի ամբողջ ագիտպրոպաշխատանքի ծանրության կենտրոնը պիտի տեղափոխվի — այդ աշխատանքը ձեռնարկությունների և գյուղի սոցիալիստական հատվածում ծավալելու ուղղությամբ: Ըստ վորում խոշոր ձեռնարկությունները և խոշոր խորհրդային տնտեսությունները և կոլտնտեսությունները պետք է հիմնական հենակետները հանդիսանան Ընկերության ագիտպրոպաշխատանքը ծավալելու համար:

7. Ամբողջ Ընկերության ուշադրությունը դարձնելով այն հանգամանքի վրա, վոր Պաշտավիաքիմի շարքերը կոմյերիտականները թույլ են ներգրավվում և նրանք թույլ մասնակցություն են ցույց տալիս Ընկերության աշխատանքներին՝ Համագումարն ընդգծում է, վոր ստիպողական անհրաժեշտություն է գյուղի և քաղաքի կոմյերիտականներին և յերիտասարդ աշխատավորներին ագիտպրոպաշխատանքով ընդգրկելը, ինչպես և անհրաժեշտ է Ընկերության ուշադրությունը մոբիլիզացիա անել կոմյերիտականների մեջ աշխատելու և նրանց Պաշտավիաքիմի պրակտիկ գործունեության մեջ քաշելու խնդիրների շուրջը:

8. Ագիտպրոպաշխատանքի մեջ մեծ տեղ պիտի գրավի Պաշտավիաքիմի անդամների և բոլոր աշխատավորների ուշադրությունը գյուղի և քաղաքի աշխատավոր կանանց պաշտպանության ամրապնդման ակտիվ աշխատանքին ներգրավելու խնդիրների շուրջը մոբիլիզացիա անելը: Այս կապակցությամբ ամբողջ Ընկերության չափազանց լուրջ խնդիրը պիտի հանդիսանա լայն չափերով պարզաբանել, թե Ընկերությունը պատասխանատու յե աշխատավոր կանանց պաշտպանության գործին նախապատրաստելու համար: Այլ և Ընկերությունը պիտի պայքարի այն թերագնահատումների դեմ, վոր կան աշխատավոր կանանց դերի վերաբերմամբ՝ Խորհրդային Միության պաշտպանունակությունը ամրապնդելու գործում:

9. Քանի վոր Ընկերության կարեվորագույն խնդիրներից մեկը հանդիսանում է ԲԳԿԲ մարտունակությունը բազմակողմանիորեն ամրապնդելու խնդիրը, Համագումարն անհրաժեշտ է համարում զգալի չափով ուժեղացնել ԲԳԿԲ ռազմական անցյալի, կենցաղի, կյանքի և մարտական ուսուցման պրոպագանդը: Այս պրոպագանդը պիտի սիստեմատիկ բնույթ կրի և տարվի բավականաչափ կենդանի ու գրավիչ ձևերով և մեթոդներով: Դրա հետ միասին Պաշտավիաքիմի կազմակերպությունները պետք է զգալի չափով ուժեղացնեն իրենց ուշադրությունը բանվորական կազմակերպությունների կողմից Կարմիր բանակի մասերի վերցրած շեֆությունը բարելավելու ուղղությամբ:

10. Ընկերության ագիտպրոպաշխատանքի կարեվոր կողմերից մեկը հանդիսանում է Ընկերության անդամների լայն խավերում Պաշտավիաքիմի պարբերականները տարածելու խնդիրների շուրջը լայն դաստիա–



րակիչ աշխատանք տանելը: Դրա հետ միասին շատ լուրջ նշանակություն է ստանում Պաշտավիաքիմի վիճակախաղերի տոմսերը տարածելու շուրջը տարվող դաստիարակչական-ագիտացիոն աշխատանքը: Այդ տոմսերի տարածումը պիտի համարել պաշտպանության ամրապնդման աշխատանքին աշխատավորների լայն մասսաների մասնակցության ձևերից մեկը: Համագումարը նշում է, վոր անհրաժեշտ է լայն կամպանիա ծավալել հասարակական միջոցների ծախսման մեջ վատնումների և անպատասխանատվության դեմ պայքարելու և Ընկերության ֆինանսական դիսցիպլինան ամրապնդելու շուրջը:

## I ԱԳԻՏՊՐՈՊ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԻՍՏԵՄԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

1. Ձեռնարկություններում անընդհատ, հերթականության և բրիգադային աշխատանքի անցնելու հետեվանքով Ընկերության ագիտպրոպաշխատանքի ամբողջ սիստեմը պետք է արմատապես վերակառուցվի հարմարեցվի աշխատավորների և Պաշտավիաքիմի լայն մասսաների սպասարկման՝ աշխատանքի նոր պայմաններում: Կոլտնտեսական շարժման վիթխարի աճումը հենց այժմյանից հնարավորություն է ստեղծում գյուղի սոցիալիստական հատված տեղափոխելու ագիտպրոպաշխատանքի մի շարք այնպիսի ձևեր և մեթոդներ, վոր առաջ կարելի յեր միայն քաղաքում կիրառել: Դրա համար էլ սոցիալիստական հատվածում ագիտպրոպաշխատանքի ուժեղացման, ամրապնդման և վերակառուցման խնդիրը լուրջ նշանակություն է ստանում :

2. Վերոհիշյալից բղխում է ցեխերում և հերթերում ագիտպրոպաշխատանքը բազմակողմանի կերպով ամրապնդելու խնդիրը, այլ և միջռայոնական ակումբում, պաշտպանության տներում, վարժակայաններում, հանրակացարաններում, զորանոցներում և այլն ագիտպրոպաշխատանքի մի շարք հարցեր արծարծելու և առավելագույն չափով օգտագործելու խնդիրը: Բացի այդ, ձեռնարկություններում ճաշի կարճատեվ ընդհատումների լայն օգտագործման անհրաժեշտությունն է առաջանում՝ ագիտացիոն պրոպագանդիստական բնույթի այս կամ այն մասսայական աշխատանք (զրույցներ, միտինգներ, ռադիո, կարճ զեկուցումներ և այլն) տանելու համար: Գյուղի սոցիալիստական հատվածում աշխատանքը պետք է կառուցվի աշխատանքների ամառային ու ձմեռային հերթականության պայմաններին համապատասխան՝ դաշտային աշխատանքների, հանգստի և այլն ժամանակ) կոլտնտեսականներից և խորհտնտեսությունների աշխատավորների առանձին խմբերին սպասարկելու ուղղությամբ՝ շրջիկ ագիտբրիգադներ ստեղծելու, ագիտսայլեր կազմակերպելու և շրջիկ ագիտատորների ինստիտուտ հաստատելու

միջոցով՝ ըստ առանձին էկոնոմիաների, խորհր. տնտեսությունների և ըստ առանձին գյուղերի: Դա պետք արվի համատարած կոլեկտիվացման շրջաններում ու այն վայրերում, ուր նախապատրաստություն է տեսնվում համատարած կոլեկտիվացման համար:

3. Ընդունելով, որ Ընկերության մեջ պաշտպանության տներ, որպես ագիտպրոպաշխատանքի և Պաշրավիաքիմի գործունեության այլ ճյուղերի ծավալման հենակետային-ցուցադրական կետեր, ստեղծելու պրակտիկան միանգամայն իրեն արդարացրել է, համագումարը Ընկերության բոլոր կազմակերպություններին հանձնարարում է, որ նրանք ամեն կերպ նպաստեն պաշտպանության տների շինարարությանը մարզային, գավառական, ռայոնական կենտրոնում, այլ և խոշոր կոլտնտեսություններում և խորհրդային տնտեսություններում՝ ագիտպրոպաշխատանքի հնգամյա պլանին համապատասխան: Ըստ որում պաշտպանումը պետք է ընթանա կայուն պլանով: Պաշտպանության տների աշխատանքի որակը բազմակողմանիորեն բարելավելու համար պետք է խորհրդային, արհեստակցական և այլ կազմակերպություններից միջոցներ ներգրավել: Համագումարը հանձնարարում է Ընկերության ԿԽ, որ նա տարբեր կատեգորիայի պաշտպանության տների համար տիպական բյուջեներ և սարքավորման նորմաներ մշակի:

4. Պաշտպանության տների ծավալման հետ միաժամանակ, Ընկերությանն առաջարկվում է խոշոր խնդիր՝ արհմիութենական ակումբներում, կուլտուրայի տներում, լուսավորության տներում, Կարմիր բանակի տներում, գյուղացու տներում, խրճիթ-ընթերցարաններում և այլն օրինակելի-ցուցադրական կաբինետների և անկյունների ցանց ստեղծելու ուղղությամբ: Պետք է ամրապնդել աշխատանքի այս բնագավառի աշխատանքը՝ Պաշրավիաքիմի կազմակերպության ուշադրությունը այդ աշխատանքի վրա դարձնելով և վերոհիշյալ օրինակելի հիմնարկություններին, արհմիությունների ղեկավար մարմիններին և քաղլուսավորական հիմնարկներին շինարարության գործի մեջ ներգրավելով: Միաժամանակ՝ կուսաշխատանքի, արհմիութենական աշխատանքի, քաղլուսավորական աշխատանքի և այլն կից պետք կազմակերպել ռազմական մասեր: Ընկերությունը պետք է հատուկ ուշադրություն դարձնի գործարաններին, ֆաբրիկաներին և հիմնարկներին կից կարմիր անկյունների ռազմական աշխատանքի և ռազմական անկյունի ամրապնդմանը: Պաշրավիաքիմը պետք իր աշխատանքների ընթացքում ջանք թափի, ակումբների վարչություններից և կարմիր անկյունների խորհուրդներից ամեն տեսակի օգնություն և աջակցություն ստանալու ուղղությամբ: Դրա հետ միասին Ընկերությունը պետք տարեձանաբար



անցնի ռայոնական խորհուրդներին կից օրինակելի կաբինետներ ստեղծելուն, որոնք ուսուցողական-մեթոդական կետեր կդառնան Ընկերության ակտիվի և ստորին ագիտպրոպաշխատավորների համար: Միևնույն ժամանակ համագումարը հանձնարարում է ԿԽ՝ մոտակա ժամանակում համապատասխան կանոնադրություն և տաբելներ մշակել Պաշրավիաքիմի տարբեր տիպի անկյունների և կաբինետների համար:

5. Ընդունելով, որ արհմիութենական և այլ ակումբներում ռազմական պրոպագանդի այժմյան վիճակը միանգամայն անբավարար է,— որ առաջ է գալիս ո՛չ միայն արհմիությունների կողմից ռազմական գործին անբավարար ուշադրության և Պաշրավիաքիմի ու արհմիությունների միջև յեղած փոխհարաբերությունների չկարգավորված լինելու, այլ և այն պատճառով, որ Պաշրավիաքիմի կազմակերպությունները չեն կարողանում կարգի դնել ռազմական աշխատանքը և ռազմական պրոպագանդը արհմիութենական և այլ ակումբներում,—համագումարն առաջարկում է Ընկերության բոլոր կազմակերպություններին միանգամայն վերջ տալ այս անթույլատրելի յերևույթին և արհմիութենական ու այլ ակումբներում ամեն կերպ ուժեղ ազդեցություն նվաճել ու գործնական աշխատանք ծավալել, աշխատելով, որ ակումբների վարչությունների մեջ Պաշրավիաքիմի տեղական կազմակերպության անդամներ ընտրվեն:

6. Վճռականապես ընդգծելով Պաշրավիաքիմի պարտականությունները ԲԳԿԲ մարտական հզորությունը ամրապնդելու և պաշտպանության խնդիրների պրոպագանդի բնագավառում՝ համագումարը դրա հետ միասին անհրաժեշտ է համարում Ընկերության բոլոր կազմակերպությունների ուշադրությունը դարձնել այն հանգամանքի վրա, որ նրանք պարտավոր են ռազմական պրոպագանդի և Պաշրավիաքիմի խնդիրների լուսաբանության մոմենտներն արմատավորել ու մտցնել կուսակցական, կոմյերիտական, պրոֆմիութենական և այլ կազմակերպությունների ագիտացիոն-պրոպագանդիստական ընդհանուր աշխատանքի մեջ:

Ընկերության ագիտպրոպաշխատանքի խոշորագույն թերություններից մեկը հանդիսանում է կուսակցական, կոմյերիտական, արհմիութենական, քաղլուսավորական և այլ կազմակերպությունների ագիտպրոպաշխատանքի փորձի անբավարար օգտագործումը: Իր գործնական ագիտպրոպաշխատանքի ընթացքում Պաշրավիաքիմը պարտավոր է հաշվի առնել վերոհիշյալ կազմակերպությունների ագիտպրոպաշխատանքի լավագույն օրինակներն ու օգտագործել վերջիններս ագիտպրոպաշխատանքի համար՝ Պաշրավիաքիմի գծով: Այս խնդրի վրա դարձնելով Ընկերության լուրջ ուշադրությունը՝ համագումարն առաջարկում է կարգավորել վերոհիշյալ կազմակերպությունների, ինչպես և այլ կամավոր

ընկերությունների փորձերն ուսումնասիրելու և փորձերով փոխանակվելու գործը:

8. Համագումարը նշում է ագիտպրոպսեկցիաների ճնշող մեծամասնության աշխատանքի թույլ լինելու փաստը և առաջարկում է Ընկերության ամեն կերպ ամրացնել և ուժեղացնել ագիտպրոպսեկցիաների աշխատանքի վրա՝ ագիտպրոպսեկցիաները վորակյալ ագիտպրոպաշխատավորների ղեկավար միջուկով ուժեղացնելու և ագիտպրոպսեկցիաների հասարակայնություն, նախաձեռնություն ու պատասխանատվություն՝ ագիտպրոպաշխատանքի գործը դնելու և դրա վիճակի վերաբերմամբ՝ ամեն կերպ ուժեղացնելու միջոցով՝ վճռական պայքար մղելով հասարակայնությունը ապարատով փոխարինելու ձգտումների դեմ: Դրա հետ միասին համագումարը վճռականապես դեմ է արտահայտվում Պաշքավիաքիմի այլ սեկցիաներում ագիտպրոպ. յենթասեկցիաներ ստեղծելուն, քանի վոր ագիտպրոպսեկցիայի մեջ անհրաժեշտ է կենտրոնացնել Ընկերության ագիտացիոն-պրոպագանդիստական ամբողջ աշխատանքը, ինչպես և Պաշքավիաքիմի աշխատանքի բոլոր առանձին ճյուղերի ընդհանուր և կարևորագույն խնդիրների պարզաբանումը. Բացի այդ, անհրաժեշտ է վճռականապես բարելավել ագիտպրոպսեկցիաների աշխատանքի ղեկավարությունն ու կոնտրոլը՝ Ընկերության համապատասխան խորհուրդների և նախագահությունների կողմից:

9. Ագիտպրոպաշխատանքին պետք է զարկ տալ հատկապես ձեռնարկությունների, կոլտնտեսությունների, խորհրդ. տնտեսությունների և այլն առաջին բջիջներում: Դա պարտավորեցնում է, վոր ամեն կերպ ուժեղացվի և ամրապնդվի ագիտպրոպաշխատանքի առաջին սխեմը (խմբակային ագիտացիա, ռազմաքաղաքական և Պաշքավիաքիմի գրագիտության մասսայական տարածում, պատի մամուլ և այլն): Իրենց հանձնարարված աշխատանքի վերաբերմամբ առաջին ագիտպրոպաշխատավորների պատասխանատվությունն ամեն կերպ ուժեղացնելն ու այդ աշխատավորների ղեկավարությունն ուժեղացնելը—հանդիսանում է Ընկերության բոլոր ագիտպրոպսեկցիաների անհետաձգելի խնդիրը, ու գործի այդ կողմի վրա պետք է ամենալուրջ ուշադրություն դարձվի:

10. Համագումարը հարկ համարում, վոր Ընկերության համապատասխան խորհուրդները և ագիտպրոպսեկցիաները ամեն կերպ ուժեղացնեն ագիտպրոպաշխատանքի և ագիտպրոպակտիվի կենդանի ղեկավարությունը՝, պարբերաբար մարզային կոնֆերենցիաներ, խորհրդակցություններ, կուրսեր-կոնֆերենցիաներ և այլն կազմակերպելու միջոցով:

11. Ագիտպրոպաշխատանքի ծավալման անհրաժեշտությունն ու այդ բնագավառում բարձր պահանջների առաջադրումն անհրաժեշտ են դարձ-



նում, վոր Պաշքավիաքիմը համատարած կոլեկտիվացման շրջանները ներկայումս մասսայական քանակով ուղարկվող բանվորական բրիգադներին ոգտագործի ագիտպրոպաշխատանքը ամրապնդելու և ընդլայնելու նպատակով գյուղի սոցիալիստական հատվածում Պաշքավիաքիմի աշխատանքն ամրապնդելու համար: Այս նպատակով պետք է ոգտագործվեն նաև ամենատեսակ կուրսերը, կոնֆերենցիաները, սեմինարները և այլն (գյուղատնտեսների, ուսուցիչների, բժիշկների և այլն), վոր կազմակերպվում են զանազան կազմակերպությունների և հիմնարկությունների կողմից:

Համագումարը հանձնարարում է Պաշքավիաքիմի բոլոր կազմակերպություններին, մինչև գյուղական և քաղաքային ռայոնական խորհուրդները ներառյալ, վոր նրանք մոտակա ժամանակաշրջանում մասնաշված կազմակերպությունների շտատների մեջ հատուկ այնպիսի աշխատավորներ մտցնեն, վորոնք լավ ծանոթ են ագիտպրոպաշխատանքի ձևերին ու մեթոդներին և վորոնք միաժամանակ կարողանան կատարել և՛ կազմակերպչական և՛ ագիտպրոպաշխատանք՝ զուգավորության սկզբունքով, այն հաշվով, վոր Պաշքավիաքիմի ֆինանսական բազայի հետագա ամրապնդման ընթացքում ագիտպրոպաշխատանքի հատուկ աշխատավորներ պահվեն:

13. Այն հսկայական խնդիրները, վորոնք առաջադրվում են Պաշքավիաքիմի կազմակերպություններին ագիտպրոպաշխատանքի բնագավառում, պահանջում են, վոր ագիտպրոպաշխատանքի ֆինանսական բազան ուժեղացվի: Մի անգամ ևս ընդգծելով այն, վոր տեղական կազմակերպություններն անբավարար չափով միջոցներ են բաց թողնում ագիտպրոպաշխատանքի համար՝ համագումարն առաջարկում է Ընկերության բոլոր կազմակերպություններին, վոր նրանք այսուհետև ագիտպրոպաշխատանքի ֆինանսավորումը դնեն պլանային ամուր սկզբունքների վրա՝ յուրաքանչյուր կազմակերպության բյուջեյից 10%-ից վո՛չ պակաս այդ նպատակին տրամադրելով: Բացի այդ, Պաշքավիաքիմի բոլոր կազմակերպությունները պետք է ամեն կերպ աշխատեն, վոր ագիտպրոպաշխատանքի համար միջոցներ տրամադրվեն այլ կազմակերպությունների կողմից (արհմիություններ, խորհրդային մարմիններ, քաղլուսավորական կազմակերպություններ և այլն):

## V ԱԳԻՏՊՐՈՊ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԴՐԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Վճռականապես ընդգծելով, վոր Պաշքավիաքիմի գծով ագիտպրոպաշխատավորներ նախապատրաստելու բնագավառում դրությունը բացառիկ չափով աննորմալ է (այդ աշխատավորների հսկայական պա-

կասը, ցածր վորակը, նոր կադրերի թույլ առաջքաշումը), —համագումարը ամբողջ Ընկերության բացառիկ խնդիրն է համարում դանազան կվալիֆիկացիայի և մասնագիտությունների ագիտպրոպաշխատավորների նախապատրաստման, առաջքաշման և կուսկազմակերպությունների միջոցով դրանց վորոշ ժամանակամիջոցով Ընկերությանն ամրացնելու բնագավառում վճռական բեկում առաջ բերելը: Այս աշխատանքը պետք է տարվի սիստեմատիկաբար, պլանաչափ, ագիտպրոպաշխատանքի ծավալման հնգամյակին համապատասխան:

2: Ագիտպրոպակտիվ նախապատրաստելու գործնական ձեռնարկումները հետևյալները պիտի լինեն.—գաղգյանից և շարքային կոլտնտեսականներից վճռականապես և լայն չափերով բանվորներ առաջքաշել ստորին ագիտպրոպաշխատանքի՝ հետագայում այդ բնագավառում նրանց ավելի պատասխանատու աշխատանքների առաջ քաշելով. կուրսերի լայն ցանց ստեղծել տարբեր կվալիֆիկացիայի ու մասնագիտության ագիտպրոպակտիվ պատրաստելու համար (ագիտատորներ, պրոպագանդիստներ, կազմակերպիչներ). պահեստ արձակված կարմիր բանակայիններին լայն չափով ագիտպրոպաշխատավորական նախապատրաստություն տալ Պաշքիմի գծով. տարբեր հիմնարկությունների և կազմակերպությունների կողմից կազմակերպված կուրսերի, սեմինարների ծրագրի մեջ մտցնել Պաշքիմի ագիտպրոպաշխատանքի մոմենտներ՝ այստեղ սովորողներից Պաշքիմ ագիտպրոպաշխատավորների կադրեր պատրաստելու նպատակով. նույն կուրսերին և սեմինարներին կից հատուկ խմբակներ ստեղծել Պաշքիմի ակտիվի համար. գյուղի կուլտուրական աշխատավորների հատուկ կոնֆերենցիաներ գումարել Պաշքիմի ագիտպրոպաշխատավորներ նախապատրաստելու համար և այլն:

3. Ագիտպրոպաշխատավորների նոր կադրեր նախապատրաստելու հետ միասին, պակաս կարևոր խնդիր չի հանդիսանում նաև Պաշքիմի ագիտպրոպաշխատավորների յեղած կադրերի լայն վերապատրաստումն ու կատարելագործումը: Այս նպատակներով անհրաժեշտ է գործադրել հետևյալ միջոցները՝ հատուկ կարճատև կուրսեր և կոնֆերենցիաներ գումարել, հեռակա կուրսեր, ամենատեսակ հրահանգչական զեկուցումներ կազմակերպել, մեթոդական նամակներ ուղարկել և այլն: Ընկերության ագիտպրոպսեկցիայի աշխատանքի այս կողմի վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել:



# I ԱԳԻՏՊՐՈՊ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՁԵՎԵՐԸ ՅԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

1. Նշելով, վոր ընդհանուր թուլությունից զատ, ագիտպրոպաշխատանքը Ընկերության մեջ տուժում է նաև այն բանից, վոր դա մինչև այժմ շատ թույլ չափով է իր բնույթով համապատասխանեցված աշխատավորների տարբեր կատեգորիաներին սպասարկելու ձևերին և մեթոդներին՝ համագումարը կենտրոնացնում է Ընկերության բոլոր կազմակերպությունների ուշադրությունն է դարձնում այն հանգամանքի վրա, վոր անհրաժեշտ է ագիտպրոպաշխատանքը դիֆերենցիացիայի յենթարկել ըստ Պաշքիմի անդամների և աշխատավորների տարբեր խմբերի ու կատեգորիաների (սեզոնային բանվորներ, յերիտասարդություն, կանայք, տնայնագործներ, կարմիր բանակայիններ, կոլտնտեսականներ և այլն): Հատուկ ուշադրություն պիտի դարձնել ագիտպրոպաշխատանքի բարձր ձևերի և մեթոդների օգտագործման վրա՝ ինտելիգենցիայի, ԲՈՒՀ-երի, և ԲՏՏՀ-երի ուսանողների և ուսուցիչների ու վորակյալ բանվորների տարբեր խմբավորումներին սպասարկելու ընթացքում:

Մյուս կողմից՝ ամբողջ Ընկերությանն առաջադրվում է աշխատավորների զանազան ազգությունների միջև ագիտպրոպաշխատանքի մեթոդիկան մշակելու խնդիրը:

Հատուկ ուշադրություն պիտի դարձվի ագիտպրոպաշխատանքի վրա՝ Ազգային և Արհեստական, Փարգոռծ..., գյուղյերիտասարդների և այլ դպրոցական հիմնարկությունների մեջ, ուր այդ աշխատանքը մինչև այժմ շատ թույլ է դրված և տարվում է սովորական մեթոդներով ու ձևերով՝ առանց հաշվի առնելու միջավայրը, աուդիտորիան և այլն: Այդ պատճառով Պաշքիմի ագիտպրոպաշխատանքի մեթոդների մշակումը, —ինչպես դպրոցական, այնպես և արտադպրոցական աշխատանքի վերաբերմամբ, —շատ լուրջ խնդիր է հանդիսանում, վորի վրա բոլոր կազմակերպությունները պիտի բացառիկ ու անդադար ուշադրություն դարձնեն:

Դեռ մինչև այժմ Ընկերությունն ընդհուպ չի մոտեցել չկազմակերպված բնակչության միջև ագիտպրոպաշխատանքը կանոնավոր հիմքերի վրա դնելուն: Այս աշխատանքի լավագույն ձևը բնակավարձկոոպերատիվների օգտագործումն է հանդիսանում:

2. Նշելով Ընկերության ամբողջ ագիտպրոպաշխատանքի շատ ցածր մակարդակը, վոր գլխավորապես առաջ է գալիս ԿԽ կողմից մեթոդական միանգամայն անբավարար ղեկավարություն ցույց տալուց՝ համագումարն առաջարկում է ամբողջ Ընկերությանն ու նրա ԿԽ ամենալուրջ ուշադրություն դարձնել ագիտպրոպաշխատանքի այս կողմի վրա: Այս

ընդգրկվում, որպես կարևորագույն ձեռնարկություն, Համագումարն առաջարկում է ԿԽ մեթոդական մշակումների և մեթոդական նամակների սերիական հրատարակության գործը կազմակերպել՝ ըստ զանազան կամպանիաների, դասախոսությունների, զեկուցումների և այլն: Այս նպատակով նաև պետք է զգալիորեն բարելավել և ընդարձակել մեթոդական նյութը Պաշտավիաքիմի ամսագրերում և թերթերում: Համագումարն անհրաժեշտ է համարում, նաև Ընկերության ամսագրերին, որպես հավելված, սերիական գրականություն տալ՝ ստորին ակտիվի համար: Բացի այդ, անհրաժեշտ է ագիտպրոպաշխատանքի հարցերի վերաբերմամբ պարբերաբար համամիութենական, մարզային և գավառական մեթոդական կոնֆերենցիաներ և խորհրդակցություններ գումարել:

Որպես հատուկ խնդիր, Համագումարն առաջարկում է ԿԽ մոտակա ժամանակում դիապոզիտիվ արհեստանոց կազմակերպել՝ պաշտավիաքիմական զանազան նյութերի վերաբերմամբ դիապոզիտիվների սերիական արտադրության համար:

Մեթոդական ղեկավարությունն ու հրատարակչական գործը բարելավելու նպատակներով Համագումարն առաջարկում է ԿԽ ագիտպրոպսեկցիային կից մեթոդական-խմբագրական խորհուրդ, իսկ յերկրային, մարզային և այլ կազմակերպություններին կից՝ մեթոդական բյուրո կազմակերպել՝ ագիտպրոպսեկցիաների ընդհանուր ղեկավարությամբ:

3. Առօրյա, քաղաքական և ռազմական նյութերին նվիրված միտինգների և ընթացիկ քաղաքական ու պաշտավիաքիմական հարցերի շուրջը զրույցների կազմակերպման գործը շատ թույլ է ընթանում Ընկերության ագիտպրոպաշխատանքի պրակտիկայում: Մինչդեռ սոցիալիստական շինարարության արագ տեմպերը և անընդհատի պայմանները առանձնապես պահանջում են, որ կիրառվեն ագիտացիայի այդ մասսայական ճկուն ձևերը: Դրա համար Համագումարն ամբողջ Ընկերության ուշադրությունն է դարձնում այն հանգամանքի վրա, որ ձեռնարկություններում, գյուղում, կոլտնտեսություններում, խորհր. տնտեսություններում և այլն անհրաժեշտ է ամեն օր օգտագործել ագիտացիայի այդ ձևերը:

4. Ագիտպրոպաշխատանքի կարևորագույն ձևերից մեկը, դասախոսական աշխատանքը, համարյա բոլորովին չի տարվում Պաշտավիաքիմի կազմակերպությունների կողմից: Համագումարն ընդգծում է, որ դասախոսական աշխատանքի կազմակերպման մեջ անհրաժեշտ է վճռական բեկում առաջ բերել՝ դասախոսների որակի բարձրացման, յերկրային, իսկ յեթե հնարավոր է, նաև գավառական խորհուրդներին կից դասախոսական բյուրոներ կազմակերպելու, դասախոսների մասնագիտացման, դասախոսներին դիապոզիտիվներ, մեթոդական մշակումներ



մատակարարելու, դասախոսությունների ժամանակ կինոնկարներ և այլ զննական պիտույքներ ցուցադրելու միջոցներով: Անհրաժեշտ է նաև ձգտել, որ մի շարք դեպքերում դասախոսական աշխատանքը միացվի էքսկուրսիոն, գեղարվեստական և այլ աշխատանքներին:

5. Ռադիոյի՝ ագիտացիայի և պրոպագանդի այդ հզոր միջոցի, օգտագործումը բավարար չափով չի կատարվում Ընկերության աշխատանքների ընթացքում: Դրա համար Համագումարն առաջարկում է տեղական բոլոր կազմակերպություններին և բոլոր ագիտպրոպսեկցիաներին, որ նրանք լայն չափով օգտագործեն ռադիոաշխատանքը բջիջների մեջ՝ ռադիոյի միջոցով սիստեմատիկաբար զեկուցումներ, միտինգներ, դասախոսություններ և այլն տալու ու գլխավորապես տեղական ռադիոթերթերում պաշտավիաքիմական տեղական ռադիոքրոնիկան զետեղելով: Մյուս կողմից՝ Ընկերության կազմակերպությունների առջև դրված է Պաշտավիաքիմի անդամների և ակտիվի մեջ կոլեկտիվ ռադիոունկնդրման ու դրանից հետո լսված դասախոսությունների ու զեկուցումների շուրջը մտքերի փոխանակության ձևերն ու մեթոդները արմատավորելու խնդիրը: Ռադիոաշխատանքի շուրջը ակտիվի լայն կադրեր յերևան բերել և աճեցնել — դա Ընկերության բոլոր կազմակերպությունների անհետաձգելի խնդիրն է: Որպես առանձին խնդիր, Համագումարն հանձնարարում է ԿԽ ձեռնարկել «Պաշտավիաքիմը ռադիոյով» ամսագրի հրատարակություն:

6. Ագիտպրոպաշխատանքի այնպիսի ձևերի օգտագործման փորձը, որպիսին ագիտասայլերը, ագիտավտոմոբիլները և այլն են, իրեն միանգամայն արդարացրել է: Համագումարն առաջարկում է բոլոր կազմակերպություններին և ագիտպրոպսեկցիաներին, որ անհրաժեշտ է տեղերում լայն չափով ծավալել ագիտասայլերի, ագիտ-սահնակների, ագիտշոգենավերի, ագիտնավակների և այլն պրակտիկան, ըստ հնարավորության դրանց կցելով հրաձգարաններ, կինոներ, գրադարաններ և այլն, ինչպես և ուղեկցելով դրանց փորձված ու ուժեղ ագիտատորներ և դասախոսներ: Դրա հետ միաժամանակ՝ Պաշտավիաքիմական նյութեր և ագիտատորներ պետք է տալ զանազան կազմակերպությունների կողմից կազմակերպված կուլտարշավներին, ագիտպրոպխմբակներին և այլն:

7. Աշխատավորների լայն մասսաների և Պաշտավիաքիմի անդամների կողմից դեպի մասսայական ռազմա-քաղաքական և ռազմա-տեխնիկական գրականություն ունեցած պահանջների հսկայական աճումն անհամապատասխանություն է առաջ բերել այդ գրականության պահանջի և հրատարակչական կազմակերպությունների և ամենից առաջ Պետհրատի ռազմական բաժնի կողմից արված առաջարկի միջև: Այդ պատճառով համագումարը բոլոր [illegible]

Պետհրատի ռազմական բաժնի ուշադրությունն է դարձնում այն հանգամանքի վրա, որ անհրաժեշտ է ավելացնել մասսայական ռազմա-քաղաքական և ռազմա-տեխնիկական գրականության արտադրանքն այն հաշվով, որ դա բավարարի Պաշտավիաքիմի ակտիվի, խմբակայինների և շարքային անդամների պահանջներին: Դրա հետ միասին Համագումարն անհրաժեշտ է համարում բոլոր հրատարակչական և արհեստակցական ու այլ կազմակերպությունների ուշադրությունը սևեռել այն հանգամանքի վրա, որ անհրաժեշտ է շուտափույթ իրագործել ամենատեսակ դասագրքերի և մասսայական գրականության (արհմիութենական և գեղարվեստական ռազմականացման խնդիրները, այլ և ռազմական բովանդակությամբ մասսայական գեղարվեստական գրականություն հրատարակել: Համագումարը հանձնարարում է ԿԽ այդ խնդիրն իրագործել՝ լայն հասարակայնության մասնակից դարձնելով դրա լուծմանը:

8. Հանրապետական, մարզային և յերկրային մի շարք կազմակերպությունների աճած հնարավորությունները թույլ են տալիս, որ նրանք զգալի չափով ընդլայնեն մասսայական ագիտացիոն և տեղեկատու գրականության հրատարակությունը՝ տեղական առանձնահատկությունները նկատի առնելով ու առաջին հերթին Պաշտավիաքիմի կազմակերպությունների բջիջներին և անդամներին սպասարկելով: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է, որ ԿԽ ճշգրտի տեղական մարմինների կողմից ագիտացիոն և տեղեկատու գրականություն հրատարակելու բոլոր հարցերը և դրանց ու մատակարարման բաժնի հրատարակությունների միջև յեղած փոխադարձ հարաբերությունները: Դրա հետ միասին Ընկերության տեղական կազմակերպությունները պետք է վճռականապես աշխատեն, որ Պետհրատի տեղական բաժանմունքներն ու այլ հրատարակչությունները մասսայական պաշտավիաքիմական գրականություն հրատարակեն:

9. Ընդունելով, որ ազգային փոքրամասնությունների լեզվով Պաշտավիաքիմի մասսայական և տեղեկատու գրականության հրատարակության այժմյան վիճակը միանգամայն անթույլատրելի յե՝ Համագումարն առաջարկում է բոլոր ազգային կազմակերպություններին, որ նրանք զգալի չափով ընդարձակեն վերոհիշյալ գրականության հրատարակությունը՝ ավելի մեծ գումարներ ներդրելու և պարտադիր կերպով տեղական ազգային հրատարակչությունների հրատարակչական պլանների մեջ մտցնելու միջոցով: Դրա հետ միասին Համագումարն անհրաժեշտ է համարում առավել թույլ ազգային կազմակերպություններին զգալի չափով ավելացնել ԿԽ կողմից տրվող դոտացիաները՝ մասսայական ազգային գրականություն հրատարակելու համար: Միաժամանակ՝ պետք է ձգտել, որ Կենտրոնական Հրատարակչությունն ու այլ հրատարակությունները ավելի մեծ չափով պաշտավիաքիմական գրականություն հրատարակեն:



10. Նշելով, որ միանգամայն անբավարար է մասսայական ռազմաքաղաքական և պաշտավիաքիմական գրականության օգտագործման և տարածման վիճակը, այլ և, որ շատ թույլ է Պաշտավիաքիմի բջիջների գրադարանների ռազմական գրականությամբ հագեցածության աստիճանը՝ Համագումարն առաջարկում է Պաշտավիաքիմի բոլոր կազմակերպություններին, որ նրանք ամենալուրջ ուշադրություն դարձնեն ագիտպրոպաշխատանքի այս կարևոր կողմի վրա: Դրա հետ միասին Համագումարը դարձնում է ԿԽ ուշադրությունն այն հանգամանքի վրա, որ հետագայում անհրաժեշտ է ուժեղացնել այդ գործի ղեկավարությունը՝ Ընկերության պարբերականների գրախոսական բաժիններում և այլ հրատարակությունների մեջ լույս տեսած գրքերի ցուցակն ու համառոտ բովանդակությունն ու գնահատականը տալով և այլն:

Բացի այդ, Պաշտավիաքիմի կազմակերպությունները պետք է ուժեղացնեն քաղաքացիական գրադարանների ռազմականացման պատասխանատվությունը և գրադարանների ռազմական պատրաստականությունը:

11. Համագումարը նշում է, որ Ընկերության աշխատանքը շատ թույլ է լուսաբանվում տեղական (ընդհանուր և ռազմական) մամուլի մեջ և համապատասխան մարմինների ուշադրությունն է դարձնում այս անթույլատրելի յերևույթի վրա: Մյուս կողմից՝ Համագումարն ընդգծում է, որ տեղական մի շարք կազմակերպությունների կողմից հարկ յեղած հաստատակամությունը և նախաձեռնությունը հանդես չի բերվում Ընկերության աշխատանքը մամուլում լուսաբանելու գործն ուժեղացնելու վերաբերմամբ: Համագումարը նշում է, նաև, որ Ընկերության հետագա աշխատանքների ընթացքում ագիտպրոպսեկցիաները պետք է ամեն կերպ ուժեղացնեն և ռազմականացնեն պաշտավիաքիմական թղթակիցների կազմը: Պաշտավիաքիմի և տեղական խմբագրությունների ուժերով թղթակիցներին պատրաստելու աշխատանքը պետք է դառնա Պաշտավիաքիմի ագիտացիոն-պրոպագանդիստական գործունեության կարևորագույն կողմերից մեկը:

12. Պաշտավիաքիմի աճած պատասխանատվությունն ու աշխատանքի թափը ստիպողաբար պահանջում են, որ, մի կողմից Ընկերության անդամների և ակտիվի առջև սիստեմատիկորեն և ամեն օր լուսաբանվեն Պաշտավիաքիմի ընթացիկ խնդիրներն ու աշխատանքի փորձի փոխանակություն կատարվի, իսկ մյուս կողմից՝ ագիտացիոն լայն աշխատանք տարվի գյուղի և քաղաքի աշխատավորների լայն մասսաների մեջ՝ Պաշտավիաքիմի պաշտպանության խնդիրների շուրջը: Ընկերության կողմից հրատարակվող պարբերականները թեպետև այս բնագավառում զգալի հաջողություններ ունեն, բայց և այնպես չեն բավարարում վերոհիշյալ պահանջները:

Դրա համար էլ Համագումարն առաջադրում է ԿԽ շուտափույթ կերպով պաշտավիաքիմական մասսայական օրաթերթի հրատարակմանը ձեռնարկել, որով հնարավոր կլինի սպասարկել ինչպես Ընկերության ակտիվին և անդամների մասսային, նույնպես և քաղաքի ու գյուղի աշխատավորների լայն խավերին:

13. Պաշտավիաքիմի բջիջների աշխատանքի լուսաբանումը պատի թերթի էջերում ու վերջին ժամանակներս ուժեղ թափ ստացած բազմատիրաժները բացահայտ անբավարար վիճակի մեջ են գտնվում: Այս բնագավառում մեղքն ամբողջապես ընկնում է տեղական բջիջի և վերադաս կազմակերպությունների վրա, որոնք ագիտացիայի այս կարեվորագույն զենքին հարկ յեղած ուշադրություն չեն մասհանում: Դրա համար համագումարը բոլոր ագիտպրոպսեկցիաների և ստորին բջիջների մոտակա խնդիրն է համարում ամենօրյա լուսաբանման անցնելը՝ պատի թերթերում և բազմատիրաժներում Ընկերության ստորին ողակների կյանքն ու գործունեությունը լայն ինքնաքննադատության յենթարկելով:

14. Ագիտացիայի գեղարվեստական ձևերը համարյա չեն կիրառվում Պաշտավիաքիմի աշխատանքի ընթացքում: Համագումարն Ընկերության բոլոր կազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում այս հանգամանքի վրա, որ ինչպես քաղաքում, նույնպես և սոցիալիստական գյուղում անհրաժեշտ է ամեն կերպ օգտագործել աշխատանքի այնպիսի գեղարվեստական ձևեր, ինչպես կենդանի լրագրերը, բեմադրությունը, լոտոմոնտաժը, պաշտպանության յերեկոները, գեղարվեստական ընթերցումները դիապոզիտիվների հետ և այլն: Անհրաժեշտ է նաև ագիտպրոպաշխատանքի պրակտիկայի ընթացքում ուշադրություն դարձնել գեղարվեստական այլ ձևերի զարգացմանը (խմբական յերգ, պաշտավիաքիմական յերգեր, յերաժշտական համարներ և քայլերգեր, գեղարվեստական պլակատներ, ֆոտոմոնտաժ, ցույցերի և յերկերի գեղարվեստական ձևավորում և այլն): Դրա հետ միասին Պաշտավիաքիմի կազմակերպությունները պետք է աշխատեն, որ թատերական և ակումբային զանազան գրվածքների մեջ մտցվեն պաշտպանության և Պաշտավիաքիմի մասին առանձին մոմենտներ, այլ և աշխատեն, որ համապատասխան քաղլուսավարական կազմակերպությունների և հիմնարկությունների աշխատանքի գեղարվեստական տարբեր ձևերին պաշտավիաքիմական բովանդակություն տրվեն:

15. Համագումարը նշում է, որ կինոկազմակերպությունները չափազանց չնչին արտադրանք ունեն ռազմական և պաշտավիաքիմական կինոֆիլմերի հրատարակության բնագավառում: Այդ կապակցությամբ Համագումարը բոլոր կինոկազմակերպությունների ուշադրությունն է դարձնում այն հանգամանքի վրա, որ նրանք անհրաժեշտաբեն պետք է



միանգամայն ավելացնեն իրենց արտադրանքը վերոհիշյալ կինոֆիլմերի բնագավառում: Մյուս կողմից՝ Համագումարն հանձնարարում է բոլոր տեղական կազմակերպություններին, որ նրանք բոլոր նյութերը սիստեմատիկորեն գեռեզեն տեղական կինոկազմակերպությունների լույս ընծայած կինոամսագրերի և կինոյի տեսությունների մեջ՝ ռազմական կինոարտադրության հարցերի շուրջը պաշտավիաքիմական լայն հասարակայնություն ստեղծելով: Միևնույն ժամանակ պետք է ավելի լայն չափերով կինոն օգտագործել ագիտացիայի և պրոպագանդի նպատակով պաշտավիաքիմական ակտիվի համար հատուկ կինոնկարներ ցույց տալով, կինոցուցադրումների ամենատեսակ մրցություններ կազմակերպելով ու դրանց մասնակցելով՝ ակումբներում, խրճիթ-ընթերցարաններում, կինոթատրոններում, շարժական կինոներում և այլն ռազմական ու պաշտավիաքիմական կինոֆիլմեր ցուցադրելով:

16. Ընդգծելով ագիտթռիչքների, որպես տարիկայական ագիտացիայի ձևի շատ խոշոր ագիտացիոն դերն ու դրա հետ միասին նշելով այս բնագավառի մի շարք բացերը (ծայրերկրային կազմակերպությունները քիչ են ընդգրկված ագիտթռիչքով, տեղական կազմակերպությունները բավարար վարպետությամբ չեն կարողանում օգտագործել ագիտինքնաթիռները, ագիտինքնաթիռների աշխատանքը թույլ է կապված տեղական կազմակերպության հերթական խնդիրների հետ, տեղական մամուլը թույլ է օգտագործվում և այլն) —Համագումարն անհրաժեշտ է համարում նշված բացերը վերացնելուց հետո՝ ամեն կերպ ընդլայնել և վորակով բարելավել ագիտինքնաթիռների աշխատանքը: Բացի այդ, ագիտացիայի և պրոպագանդի նպատակներով՝ անհրաժեշտ է օգտագործել Քաղ.-Ոդային Ուժերի Վարչության և քաղաքացիական ավիացիայի վարժական բոլոր թռիչքները: Տեղական կազմակերպությունների բազմակողմանի ամրապնդումն արդեն ներկայումս հնարավորություն է ընձեռում, որ նրանք իրենց սեփական ինքնաթիռներով խոշոր չափերի ագիտթռիչքներ կատարեն: Դա, այլ դրական արդյունքները մի կողմ թողնելով, խոշոր դեր կխաղա տեղական ավիացիայի զարգացման և ավիաբազաների շինարարության գործում:

17. Ընկերությունների ագիտպրոպաշխատանքի պրակտիկայում բոլորովին չեն օգտագործվում յերկաթուղային և ջրային տրանսպորտի հսկայական հնարավորությունները (ակումբ-վագոնները, մարդատար վագոնները, կայարանները, շոգենավերը, նավահանգիստները և այլն): Մինչդեռ տրանսպորտի օգտագործումը կարող է միանգամայն բացառիկ եֆեկտ տալ, քանի որ նրա միջոցով մարդկային հսկայական մասսաներ են անցնում: Ընկերության բոլոր, և առաջին հերթին տրանսպորտի, կազմակերպությունների ուշադրությունը դարձնելով այդ բո-

նագավառում վճռական բեկում առաջ բերելու անհրաժեշտության վրա,

—Համագումարն հանձնարարում է ԿԿ, վոր նա ամենակարճ ժամանակամիջոցում մի շարք այնպիսի ձեռնարկումներ մշակի, վորոնցով ապահովվի տրանսպորտի լայն հնարավորության օգտագործումը՝ Պաջրավիաքիմի ագիտացիոն աշխատանքը ծավալելու համար:

## IV ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱԳԻՏՊՐՈՊ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ագիտպրոպաշխատանքի բնագավառում Ընկերության առաջադրված պատասխանատու բոլոր խնդիրների հաջող լուծումը հնարավոր չե առանց սոցիալիստական մրցության լայն ծավալման տեղական ագիտպրոպսեկցիաների միջև՝ ագիտպրոպաշխատանքի հարցերի վերաբերմամբ: Ընդգծելով այս հանգամանքը՝ Համագումարը կոչ է անում Պաջրավիաքիմի բոլոր կազմակերպություններին, վոր նրանք ագիտպրոպաշխատանքի բնագավառում ամեն կերպ զարգացնեն սոցիալիստական մրցության, հարվածայնության և ինքնաքննադատության մոմենտները՝ միաժամանակ անողոք պայքար մղելով Ընկերության ագիտպրոպաշխատանքի ընթացքում յերևան յեկած դասակարգային գծի աղավաղումների, ձևական վերաբերմունքի, անպատասխանատվության և բյուրոկրատիզմի դեմ:



# ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պատերազմի վտանգի աճումը՝ Խորհրդային Միության վրա հարձակվելու վտանգի ավելի ու ավելի իրական դառնալը, պահանջում է Պաջրավիաքիմից, վոր նա աշխատավորների լայն մասսաների ուշադրությունը կենտրոնացնի ու սրի պատերազմի վտանգի հարցերի և յերկրը պաշտպանության համար նախապատրաստելու կոնկրետ խնդիրների վրա: Պատերազմի վտանգի աճումը Ընկերության առաջադրում է աշխատավոր կանանց լայն կադրերին յերկրի պաշտպանունակությանն ամրացնելու գործնական աշխատանքին նախապատրաստելու չափազանց լուրջ խնդիրը:

Արդյունաբերության վերակազմության և լայն կոլեկտիվացման մեքենայական տեխնիկայի բազայի վրա գյուղատնտեսության վերակառուցման բնագավառների հսկայական խնդիրները, շինարարության անցումը նոր տեմպերի և մեթոդների,—այդ բոլորը պայմանավորում են աշխատավորների լայն մասսաների նախաձեռնության և ակտիվության առավելագույն մոբիլիզացիայի անհրաժեշտությունը՝ սոցիալիզմի ստեղծագործական շինարարությունն իրագործելու համար: Սոցիալիստական շինարարության բուռն աճումը և կուլակին, վորպես դասակարգ, լիկվիդացիայի յենթարկելու խնդրի վճռականապես դնելն առաջ են բերում դասակարգային թշնամու կատաղի դիմադրությունը, վորին հակահարված պիտի տան հենց իրենք, աշխատավոր մասսաները՝ առավելագույն չափով կազմակերպվելով: Այդ պատճառով էլ ռեկոնստրուկտիվ ներկա ժամանակաշրջանի պայմաններում,— վոր սոցիալիստական շինարարության, կուլակին, վորպես դասակարգ, լիկվիդացիայի յենթարկելու և ԽՍՀՄ մարտական հզորությունն ամեն կերպ ամրապնդելու գործի վրա մասսաների ստեղծագործական նախաձեռնության առավելագույն չափով կենտրոնացնելու և կազմակերպելու ժամանակաշրջան է,—խորհրդային հասարակայնության և առանձնապես Պաջրավիաքիմի, վորպես ավելի լայնածավալ մասսաներ կազմակերպող գործոնի դերն անհամեմատ ավելի բարձրանում է:

Այս պատճառով միանգամայն բացառիկ նշանակություն է ձեռք

բերում աշխատավորների ընդհանուր առմամբ մեծ և առավել հետամնաց մասի՝ բանվորուհիների, գեղջկուհիների և բանվորների կանանց՝ կազմակերպությունն ու դաստիարակությունը ու նրանց աճող ակտիվությունը և ստեղծագործությունը սոցիալիստական շինարարությունն և յերկրի պաշտպանունակությունն ամեն կերպ ամրապնդելուն ուղղելը:

Աշխատավոր կանանց պաշտպանության նախապատրաստելու սեկցիաների յերկամյա աշխատանքը, ինչպես Պաշտավիաքիմի ԿԽ կից, նույնպես և Ընկերության տեղական խորհուրդներին կից, նպաստեց աշխատավոր կանանց լայն մասսաներին պրոպագանդով և ռազմական կոնկրետ նախապատրաստությամբ զգալիորեն ընդգրկելուն:

Նշելով այս դրական դերը և սեկցիաների աշխատանքը՝ Համագումարը սակայն գտնում է, վոր աշխատավոր կանանց պաշտպանության նախապատրաստելու գործում Ընկերության առաջադրված հսկայական խնդիրները կարող են հաջողությամբ լուծվել այն դեպքում միայն, յեթե դրանց լուծման գործին մասնակցության կկոչվեն Ընկերության բոլոր կազմակերպություններն ու սեկցիաներն ընդհանրապես, և յերբ կանանց միջև կատարելիք աշխատանքը կդառնա նրանց ամբողջ աշխատանքի օրգանական, բաղկացուցիչ մասը: Դրան համապատասխան, Համագումարն անհրաժեշտ է համարում:

Ձեռնարկել կին սեկցիաների, վորպես այդպիսիների, լիկվիդացիային, հանձնարարելով ԿԽ նախագահությանը մշակել այդ սեկցիաների լիկվիդացիայի կարգը և առաջիկա տարում աշխատանքի զարգացումն ապահովելու անհրաժեշտության հարցը: Այդ սեկցիաները պետք է պահպանվեն ծայրագավառներում և ազգային հանրապետություններում:

Համագումարը նշում է, վոր Ընկերության կողմից աշխատավոր կանանց միջև տարված աշխատանքի մեջ կան հետևյալ նվաճումները:

ա) Պաշտավիաքիմի շարքերում ավելացել է աշխատավոր կին անդամների թիվը, վոր ներկայումս կազմում է մեկ միլիոն հարյուր հազար հոգի, կամ Ընկերության ամբողջ կազմի 20%-ը:

բ) Զգալի բեկում է առաջացել Ընկերության ղեկավար մարմինների և շահագրգռված գերատեսչությունների վերաբերմունքի մեջ դեպի աշխատանքի տվյալ տեսակը:

գ) Սեկցիաները կազմակերպչորեն ձևակերպվել են մինչև Պաշտավիաքիմի գավառական խորհուրդները, և Ընկերության ստորին օղակներում լիդերների ինստիտուտ է հաստատվել:

դ) Սեկցիաների մշտական աշխատավորների կադր է հաստատվել յերկրային և մարզային մի շարք կազմակերպությունների մեջ (Լենինգրադ, Մոսկվա, Ուկրայնա, Հյուսիսային Կովկաս, Ուրալ և այլն): Անցում է կատարվել դեպի կանանց ռազմականացված կուրսերի կայուն



ցանցը և նոր ձյուղերի վերաբերմամբ գործնական նախապատրաստումը (միլիցիա, ԲԳԿԲ մեջ քաղլուսաշխատանք, կին տրակտորիստների պատրաստում):

զ) Ընկերության խմբակների և կուրսերի ամբողջ ցանցում ավելացել է բանվորուհիների, գեղջկուհիների և բանվորների կանանց մասնակցությունը, վոր կազմում է առ 1 հոկտեմբերի 29 թվի ավելի քան 200.000 հոգի:

ե) 1929—30 թվին սեկցիաների պլաննայնություն և կայուն նախահաշիվներ են հաստատվել ինչպես ԿԽ մեջ, այնպես և տեղերում:

Սակայն, Համագումարն անհրաժեշտ է համարում նշել, վոր մինչև այժմ Ընկերության խորհուրդները և դրանց նախագահությունները բավարար ուշադրություն չեն դարձնում կին սեկցիաների ղեկավարմանը տեղերում՝ դրանց գործնական առօրյա աշխատանքի ընթացքում նույնպես և դրանց նյութական ապահովության խնդրում: Մի շարք դեպքերում սեկցիաներն իրենք իրենց են թողնվում, վորի հետևանքով պետք է արձանագրել, վոր հաճախ այդ ամբողջ աշխատանքը ինքնահոս է ընթանում, առանց խորհուրդների և նախագահությունների կողմից տրված պլանի ու դրա իրագործման ստուգման:

Համագումարն անհրաժեշտ է համարում այսուհետև.

1. Ավելի վճռական կուրս վերցնել աշխատավոր կանանց միջև մասսայական ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի զարգացման ուղղությամբ, վորպեսզի աշխատավոր կանանց լայն մասսաները հաղորդակից դառնան այն ընդհանուր խնդիրների իրագործմանը, վորոնք առաջադրվում են ամբողջ յերկրին և Ընկերությանը արդյունաբերության և գյուղատնտեսության վերակառուցման, այլ և ԽՍՀՄ պաշտպանունակությունը ամեն կերպ բարձրացնելու բնագավառներում:

Դրված խնդրի իրագործումը պիտի կատարվի ինչպես Ընկերության մասսայական աշխատանքի ընդհանուր սիստեմի, նույնպես և հատուկ զեկուցումներ, զրույցներ, բանվորուհիների, գեղջկուհիների և բանվորների կանանց ժողովներ կազմակերպելու միջոցով, կարմիր անկյուններում, ակումբներում, «պաշտպանության տներում» աշխատանք կատարելու միջոցով, այլ և մամուլում այս հարցերի ավելի լայն լուսաբանման միջոցով: Աշխատավոր կանանց միջև ամբողջ մասսայական աշխատանքը պետք է հետապնդի մասսաներին այն խնդիրներն իրագործելու համար կազմակերպելու և դաստիարակելու նպատակին, վորոնք ընդհանուր առմամբ առաջադրվում են Ընկերությանը:

2. Հավանություն տալով այն կուրսին, վոր վերցրել է Պաշտավիաքիմի ԿԽ Ընկերության շարքերը աշխատավոր կանանց առավելագույն չափով ներգրավելու վերաբերմամբ այն հաշվով, վոր առ 1-ն հոկտեմ-

ների 30 թ. նրանց թվական կազմը կազմակերպության մեջ բարձրանա մինչև 25%, իսկ հնգամյակի վերջին — մինչև 32 տոկոս՝ Համագումարը Ընկերության բոլոր կազմակերպություններին կոչ է անում, որ այս բնագավառում առաջադրված խնդիրները շուտափույթ իրագործվեն:

3. Աշխատավոր կանանց կոնկրետ նախապատրաստման ուղիների որոշման և նրանց թվի վերաբերմամբ ԿԽ կողմից հնգամյակում նշված ձեռնարկումները Համագումարը գտնում է, որ ժամանակակից պայմաններում Ընկերության գործունեության տեմպերին և պահանջներին համապատասխան ու հիմնականում հաստատում է՝ հանձնարարելով, որ հնգամյակի հետագա մշակման ժամանակ ապահովվի կին ակտիվ նախապատրաստելու ուժեղացումը:

4. Ընդունելով, որ միանգամայն անբավարար է աշխատավոր կանանց կադրերի առկա նախապատրաստումը և Ընկերության աշխատանքին առաջքաշումն ինչպես նախագահությունների և խորհուրդների, այնպես և Ընկերության հատուկ ճյուղերի գծերով՝ անհրաժեշտ է Ընկերության ուշադրությունը կենտրոնացնել Ընկերության կին ակտիվիստներից նոր կադրեր պատրաստելու և նրանց Պաշտպավիաքիմի ղեկավար աշխատանքի առաջ քաշելու վրա:

5. Սոցիալիստական մրցությունը դեռ չափազանց անբավարար չափով է մտել սեկցիաների և նրանց գործնական կազմակերպությունների առօրյա գործունեության մեջ:

Աշխատավոր կանանց մեջ Ընկերության գործունեության հետագա աճումը, աշխատանքի որակի և տեմպերի բարձրացումը չի կարող տեղի ունենալ առանց սոցիալիստական մրցության մեթոդների, որոնք մասսայականության և հասարակայնության մշտական շարժիչ ուժի աշխատանքի ընթացքում:

Աշխատավոր կանանց միջև Պաշտպավիաքիմի կատարած աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է լայն չափերով կիրառել սոցմրցման մեթոդը՝ սոցիալիստական մրցման մեջ քաշելով Ընկերության անդամների և ակտիվի այն լայն մասսաներին, որոնք աշխատում են Պաշտպավիաքիմի խմբակներում և կուրսերում՝ այս կերպ հատուկ հարվածային բրիգադներ կազմելով՝ հաճախելու աստիճանը բարձրացնելու, դիսցիպլինան պահպանելու և որակը բարելավելու վերաբերմամբ:

6. Կանանց պաշտպավիաքիմական ակտիվի նախապատրաստությունը դեռ հարկ յեղած ուշադրության չի արժանացել Ընկերության բոլոր օղակների կողմից ու չի բավարարում աճած պահանջներին՝ կազմակերպիչների կադրերով չապահովելով Ընկերության աշխատանքը, աշխատավոր կանանց պաշտպանության նախապատրաստելու բնագավառում:

Ընկերության խորհուրդները պետք է իրենց ուշադրությունը կենտրոնացնեն պաշտպավիաքիմական կանանց ակտիվ պատրաստելու աշխատանքի ծավալման վրա՝ Ընկերության կին ակտիվիստներին վճռականապես ներգրավելով պաշտպավիաքիմական ակտիվ պատրաստելու ընդհանուր կուրսերի սիստեմի մեջ:



Պետք է ավելի լայն օգտագործել պատգամավորական ժողովներին կից պաշտպավիաքիմի կին ակտիվիստ պատրաստելու խմբակների աշխատանքի յեղած փորձը և գործնական ձեռնարկումներ մշակել պատգամավորուհիներին Ընկերության ակտիվ աշխատանքներին ներգրավելու ուղղությամբ:

7. Նշելով այն կանանց թվական աճումը, որոնք ներգրավված են գործնական աշխատանքի, ինչպես աշխատանքի ընդհանուր տեսակներում, նույնպես և կանանց հատուկ ռազմականացված խմբակների և կուրսերի ցանցում. (առ 1 հոկտեմբերի 28 թ. 100 հազար հոգի, իսկ առ 29 թ.՝ 200 հազար հոգի), որ ըստ աշխատանքների առանձին տեսակների կազմում է՝ յերկու աստիճանների ՌԳԽ — 14% կամ 60 հազար հոգի, հրաձիգ խմբակներում՝ 18% կամ 55 հազար հոգի, ՌՔՊ ջոկատներում 18% կամ 11 հազար հոգի, գյուղատնտեսական և քիմիական խմբակներում՝ 23% կամ 6 հազար հոգի, հեծելազորային՝ 18% կամ 4500 հոգի և այլն — չնայած այդ բոլորին, այնուամենայնիվ պետք է ընդունել, որ աշխատավոր կանանց ներգրավումը կոնկրետ ռազմական նախապատրաստման գործի մեջ չափազանց անբավարար է: Ընկերությունը իրեն առաջադրում է առաջիկա տարում կանանց թիվը խմբակների ամբողջ ցանցում, միջին թվով ոչ պակաս քան 25% ավելացնելու խնդիրը: Ըստ որում պետք է հատկապես աշխատել, որ կանայք ներգրավվեն քիմիական պաշտպանության, հրաձգային. գյուղատնտեսական և քիմիական խմբակների մեջ:

8. Կապի և վարչատնտեսական ծառայության կուրսերի միջոցով աշխատավոր կանանց նախապատրաստման ունեցած փորձը համարել միանգամայն ինքնարդարացուցիչ ու հետագայում առաջարկել սեկցիաներին, որ նրանք ուժեղացնեն աշխատանքի տեմպերն այս ուղղությամբ՝ բարձրացնելով կուրսերի մեթոդական ղեկավարության որակը, ավելի սերտ կապ ստեղծելով շահագրգռված գերատեսչությունների հետ՝ ԿԽ կայացրած համաձայնության հիմունքով, ըստ որի Փոստհեռժողկոմատը, Միլիցիան և ռազմական գերատեսչությունը պետք է նյութական և կազմակերպչական օգնություն ցույց տան այդ կուրսերին: Միլիցիայի և ԲԳԿԲ-ում քաղլուսաշխատանք տանելու դասընթացները, որ սկսել են գործել ընթացիկ տարում միայն, հաստատում են, որ նպատակահարմար է այդ ճյուղերի համար կանանց կադրեր նախապատրաստելը:

Պաշտպավիաքիմի Կենտրոնական Խորհուրդը շահագրգռված գերա-

տեսչությունների հետ միասին (Փոստհեռժողկոմատ, միլիցիա, ռազմական դերատեսչություն) պետք է ավելի ճշգրիտ ձեռնարկումներ մշակել կանանց ռազմականացված կուրսերն ավարտողներին ըստ ստացած մասնագիտության համապատասխան հիմնարկություններում արդեն իսկ խաղաղ ժամանակ գործի ընդունելու վերաբերմամբ: Պետք է մշակել նաև կանանց ռազմականացված կուրսեր ավարտողների հաշվառման սիստեմը՝ ռազմական դերատեսչության գծով:

Լրացնել առաջիկա յերկու տարում միլիցիայի աշխատավորների կազմի մեջ աշխատավոր կանանց թիվը 10%-ի հասցնելու նորման, վոր հաստատված է Հանրապետության միլիցիայի կողմից:

9. Հաշվի առնելով կին տրակտորիստներ և շոֆերներ նախապատրաստելու խնդրի այն միանգամայն բացառիկ նշանակությունը, վոր դա ստացել է ներկա մոմենտում կոլեկտիվացման և ժողովրդատնտեսության համար բանվորուհիների և գեղջկուհիների վորակյալ կադրերի պատրաստման պրոբլեմի հետևանքով, այլ և հաշվի առնելով այն, վոր տվյալ պրոբլեմը անկարելի յե լուծել միայն Ընկերության միջոցներով և ուժերով՝ բոլոր արհմիութենական և հասարակական կազմակերպություններին և շահագրգռված դերատեսչություններին կազմակերպչական ու նյութական անմիջական մասնակցության կոչել՝ տրակտորիստների և շոֆերների կին կադրեր պատրաստելու խնդիրն իրագործելու համար:

10. Քանի վոր աշխատավոր կանանց ԲԳԿԲ ռազմական դպրոցներն ընդունելու խնդիրը դրական լուծում է ստացել, անհրաժեշտ է այս տարվանից հատուկ խմբակներ ստեղծել՝ բանվորուհիներին ռազմական դպրոցներ մտնելուն նախապատրաստելու համար:

Քաղաքացիական ավիացիայի դպրոցներում բանվորուհիների ուսուցումն ապահովելու նպատակով անհրաժեշտ համարել այդ դպրոցներում կանանց ընդունման նորման հաստատել վո՛չ պակաս քան 20%:

11. Արշավներին և մանյովրներին կանանց մասնակցության դրական փորձը նկատի ունենալով՝ շարունակել հետագայում ևս այն բանվորուհիներին և գեղջկուհիներին արշավներին և մանյովրներին ներգրավելու աշխատանքը, վորոնք ավարտել են խմբակներն ու կուրսերը: Աշխատել, վոր հետագայում ավելի ու ավելի մեծ չափով կանայք մասնակցեն ռազմական աշխատանքի այդ մասսայական կենդանի ձևերին, վորպեսզի այս կերպ ամրապնդվեն այն գիտելիքները, վոր նրանք ստացել են խմբակներում և վարժա-շարքային միավորներում:

12. Պաշտավիաքիմի հատուկ կանանց ճամբարների փորձը խիստ դրական համարելով՝ 1929—30 թ. ընդլայնել կանանց ճամբարների ցանցը առնվազն մինչև 10-ի, այլև միջոցներ ձեռք առնել, վոր այդ



ճամբարներին մասնակցեն մեծ թվով ռազմականապես նախապատրաստված բանվորուհիներ՝ Պաշտավիաքիմի համաճամբարային հավաքների կուրսն անցնելու համար: Կանանց հատուկ ճամբարների խնդրի մեջ պիտի մտնի կին ակտիվիստներ պատրաստելը, կանանց հատուկ ռազմականացված կուրսերն ավարտողների հետ կրկնողական վարժական հավաքներն անցնելը, նաև կոլտնտեսությունների և խորհ. տնտեսությունների համար կին տրակտորիստներ պատրաստելը:

13. Հաշվի առնելով գյուղատնտեսության կոլեկտիվացման բնագավառում առաջադրվող հարցերի ծայրաստիճան լրջությունը, ընդունելով, վոր գեղջկուհիները միանգամայն անբավարար չափով են ներգրավվել Ընկերության աշխատանքի մեջ, այլ և, վոր նրանք քաղաքականապես զգալիորեն հետամնաց են, վորն հաճախ արգելք է հանդիսանում գյուղատնտեսության վերակառուցման վերաբերմամբ կուսակցության և կառավարության նշած ձեռնարկումների կենսագործմանը — ի նկատի ունենալով այս բոլորը՝ գեղջկուհիների չքավոր-միջակային խավերի միջև տարվող աշխատանքի ընթացքում հիմնական ուշադրությունը դարձնել լայն բացատրական աշխատանքի վրա՝ գյուղատնտեսության վերակառուցման, պատերազմի վտանգի, յերկրի պաշտպանունակությունն ամրապնդելու խնդիրների վերաբերմամբ, միաժամանակ գյուղատնտեսության վերակառուցման ստեղծագործական աշխատանքին նրանց ներգրավելով:

Գեղջկուհիներին գործնական աշխատանքի ներգրավումն առաջին հերթին պետք է ընթանա գյուղատնտեսական խմբակների, ապա ռազմական գիտելիքների գծով, վորոնց պիտի մասնակցելու կոչվեն գլխավորապես աղջիկ-պատանիները և չքավոր կանայք: Գեղջկուհիների միջև կատարելիք աշխատանքի հենակետային ցուցադրական բազաները պետք է հանդիսանան խորհրդային տնտեսությունները, կոլտնտեսությունները և մեքենա-տրակտորային կայանները: Գեղջկուհիների միջև աշխատանքը պիտի տարվի պատգամավորական ժողովների հետ համաձայնեցված ու դրանց ակտիվ աջակցությամբ և մասնակցությամբ:

14. Չկազմակերպված կին բնակչության միջև կատարված աշխատանքի վիճակը մինչև այժմ բնորոշվում է Ընկերության կողմից աշխատավոր կանանց և հատկապես բանվորների կանանց շատ թույլ ընդգրկմամբ: Խոշոր նշանակություն տալով ողաքիմիական պաշտպանության և թիկունքի պաշտպանության համար բնակչության նախապատրաստման գործին՝ Ընկերության խորհուրդները և աշխատավոր կանանց պաշտպանության համար նախապատրաստելու սեկցիաները պետք է աշխատանք ծավալեն բանվորների կանանց և չկազմակերպված կանանց միջև՝ զրույցներ և զեկուցումներ կազմակերպելու գծով հետևյալ նյութերի շուրջը՝ ողաքիմիական պաշտպանություն և թիկունքի

պաշտպանություն, քիմիան կենցաղի մեջ, պայքար տնային պարազիտների դեմ և այլն: Դրան զուգընթաց նրանց պետք է ներգրավել ՌՔՊ ջոկատների, օդաքիմիական պաշտպանության, հրաձգային խմբակների և ուրիշների գործնական աշխատանքներին:

Բացատրական աշխատանքի հիմունքով Պաշտավիաքիմի բջիջների ցանցն ընդարձակելու կուրս վերցնել՝ բնակվարձկալներին և տնային վարչություններին կից:

15. Ընդունելով, վոր կոմյերիտուհիների ներգրավումը կանանց ռազմականացված կուրսերում անբավարար է՝ Պաշտավիաքիմի ԿԽ Համ-ԼԿՅԵՄ ԿԿ հետ միասին պիտի կոնկրետ ձեռնարկումներ մշակի աղջիկների ռազմական նախապատրաստման ու նրանց կանանց ռազմականացված կուրսերը ներգրավելու վերաբերմամբ:

16. ԿԽ սեկցիան Լուսաշխի ԿԿ և Լուսժողկոմատի հետ միասին պետք է ձեռնարկումներ մշակի ուսուցչուհիներին ռազմական աշխատանքի ներգրավելու և դպրոցներում աղջիկների միջև ռազմական աշխատանք կատարելու վերաբերմամբ, այլ և պետք է ստուգի ԲՈՒՀ ուսանողների նախազինակոչային բարձրագույն նախապատրաստման վերապատրաստության արդյունքները:

17. ԿԽ պետք է կազմակերպի նյութերի սիստեմատիկ ուսումնասիրություն՝ կապիտալիստական յերկրներում կանանց ռազմական նախապատրաստման վերաբերմամբ:

18. Բանվորների և գեղջկուհիների համար աշխատավոր կանանց պաշտպանության նախապատրաստելու վերաբերմամբ հանրամատչելի բրոշյուրների սերիայի հրատարակությունը լայն ծավալել ինչպես Պաշտավիաքիմի հրատարակության, նույնպես և Պետհրատի ռազմական բաժնի գծով՝ առաջին հերթին կոլտնտեսություններում կատարելիք աշխատանքների մասին:

19. Նշելով, վոր աշխատավոր կանանց պաշտպանության նախապատրաստման հարցերը թույլ են անդրադառնում ինչպես ընդհանուր, նույնպես և կանանց մամուլի մեջ, համաձայնության գալ Ընկերության աշխատանքի այս ճյուղը մամուլում սիստեմատիկաբար լուսաբանելու վերաբերմամբ, այլ և հատուկ աշխատանք տանել կին բանթղթակիցների միջև այս ուղղությամբ կոնֆերենցիաներ գումարելով և հրահանգչական զեկուցումներ կազմակերպելով՝ աշխատավոր կանանց պաշտպանության նախապատրաստման հարցերին նվիրված:

20. Ի նկատի ունենալով, վոր ազգային կազմակերպությունների աշխատավոր կանանց միջև Պաշտավիաքիմի աշխատանքը թույլ է գործում՝ մոտակա ժամանակներում ԿԽ կից հատուկ խորհրդակցություն հրավիրել ազգային շրջաններում կանանց մեջ աշխատանք կատարելու վերաբերմամբ:



# ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Լսելով ընկ. Մուկլեվիչի զեկուցումը կանոնադրական հարցերի մասին՝ Պաշտավիաքիմի յերկրորդ Համամիութենական համագումարը վորոշում է.—

1. ԽՍՀՄ Պաշտավիաքիմի միության կանոնադրության նախագիծը հաստատել նրան կցված խմբագրությամբ՝ գլխավոր քարտուղարի իրավունքների ճշգրտմամբ՝ փաստորեն նրա ունեցած իրավունքներն ամրապնդելու իմաստով: Հաստատել նաև դաշնակից հանրապետությունների «Պաշտավիաքիմ» Ընկերությունների օրինակելի կանոնադրության նախագիծը կցված խմբագրությամբ, վորչափ արված է ՌՍՖԽՀ Պաշտավիաքիմի Ընկերության վերաբերմամբ: Համագումարը հանձնարարում է Կենտրոնական Խորհրդի նախագահության և դաշնակից հանրապետությունների ընկերությունների խորհուրդներին այդ նախագծերը ներկայացնել ի հաստատություն կառավարական մարմիններին՝ վորոշված կարգով:

2. Անդամակցական մուտքի վճարները 1930 թ. հունվարի 1-ից աշխատողների բոլոր կատեգորիաների համար հաստատել 20 կոպեկի չափով:

1930 թ. հունվարի 1-ից Պաշտավիաքիմի անդամների համար անդամավճար հաստատել Պաշտավիաքիմի յուրաքանչյուր անդամի նյութական ապահովության համեմատ:

1) 3 ռուբլու չափով անդամավճար են մուծում այն աշխատավորները, վորոնք ամսական 150 ռուբլուց ավելի աշխատավարձ ունեն:

2) 2 ռուբլու չափով անդամավճար են մուծում այն աշխատավորները, վորոնք ամսական 75-ից 150 ռուբլի աշխատավարձ ունեն:

3) 1 ռուբլու չափով անդամավճար են մուծում այն աշխատավորները, վորոնք ամսական 35-ից 75 ռ. աշխատավարձ ունեն:

4) 60 կոպեկի չափով անդամավճար են մուծում այն աշխատավորները, վորոնք ամսական 35 ռուբլուց պակաս աշխատավարձ ունեն:

Բացառություն են կազմում աշխատավորների հետևյալ կատեգորիաները, վորոնցից անդամավճար է վերցվում հետևյալ չափով:

ա) Կարմիր բանակայինները, կարմիր նավատորմայինները, զոր—

ծազուրկները, աշխատանքի բորսայում ցուցակագրվածները և «ԽՍՀՄ պաշտպանության և ավիացիոն-քիմիական շինարարության պասանի բարեկամները» վճարում են 20 կոպեկ:

բ) Սովորական կարգով գյուղմիասհարկ վճարող գյուղացիները (միջակները)՝ 1 ռուբլի:

գ) Գյուղմիասհարկից ազատված գյուղացիները (չքավորները) և նորմայի յենթարկված աշխատավարձ չստացող կոլտնտեսականները՝ 20 կոպեկ:

դ) Տնտեսուհիները և ուրիշի խնամքի տակ գտնվողները, այն անձի անդամավճարի 50 %-ը, վորի խնամքի տակ տնտեսուհին կամ խնամակալվողն ապրում է:

Կենտրոնական Խորհրդի նախագահությանն հանձնարարել, վոր նա կոլտնտեսականների անդամավճարի չափերը ճշդրտի:

Տարեկան անդամավճարների մուծման ժամկետը բոլոր կատեգորիաների համար հաստատվում է ըստ տարվա յեռամսյակների:

Կենտրոնական Խորհրդի նախագահությանը հանձնարարել, վոր նա ավելացնելու անդամավճարների չափը՝ Ընկերությունների միության աշխատանքի հնգամյա պլանի վերաբերմամբ համագումարի կողմից ընդունված առաջարկներին համապատասխան:

3. Իրավական անդամների անդամավճարները 1930 թ. հունվարի 1-ից ավելացնել՝ հետևյալ չկալան հաստատելով:

1) Համամիութենական և միության հանրապետական նշանակություն ունեցող այն բոլոր կազմակերպությունները, հիմնարկությունները, ձեռնարկությունները և կոոպերատիվ միավորությունները, այլ և ձեռնարկությունները, ֆաբրիկաներն ու գործարանները, վորոնք տարեկան 1.000.000 ռուբլուց ավելի արժեքով ընդհանուր արտադրանք ունեն, հետևյալ անդամավճարներ են տալիս:

Մուտքի՝ 300 ռուբլուց վո՛չ պակաս:

Տարեկան 200 ռուբլուց վո՛չ պակաս:

2) Մարզային, յերկրային և ինքնավար հանրապետական նշանակություն ունեցող այն կազմակերպությունները, հիմնարկություններն ու ձեռնարկությունները, այլ և ձեռնարկությունները, ֆաբրիկաներն ու գործարանները, վորոնք տարեկան 500.000-ից մինչև մեկ միլիոն ռուբլու արժեքով ընդհանուր արտադրանք ունեն, հետևյալ անդամավճարներն են տալիս:

Մուտքի՝ 200 ռուբլուց վո՛չ պակաս:

Տարեկան 100 ռուբլուց վո՛չ պակաս:

3) Գավառական և ինքնավար մարզային նշանակություն ունեցող այն կազմակերպությունները, հիմնարկությունները, ձեռնարկությունները և կոոպերատիվ միավորությունները, այլ և ձեռնարկությունները, ֆաբրիկաները, գործարանները, և արհեստանոցները, վորոնք տարեկան 100.000-ից մինչև 500.000 ռուբլի արժեքով ընդհանուր արտադրանք ունեն, հետևյալ անդամավճարներն են տալիս:



Մուտքի՝ 100 ռուբլուց վո՛չ պակաս:

Տարեկան՝ 50 ռուբլուց վո՛չ պակաս:

4) Ռայոնական նշանակություն ունեցող այն կազմակերպությունները, հիմնարկությունները, ձեռնարկություններն ու կոոպերատիվ միավորությունները, այլ և ձեռնարկությունները, ֆաբրիկաները, գործարանները և արհեստանոցները, վորոնք տարեկան 25.000-ից մինչև 100 հազար ռուբլի արժեքով ընդհանուր արտադրանք ունեն, հետևյալ անդամավճարներն են տալիս:

Մուտքի՝ 50 ռուբլուց վո՛չ պակաս:

Տարեկան՝ 25 ռուբլուց վո՛չ պակաս:

5) Քաղաքային և գյուղական նշանակություն ունեցող այն կազմակերպությունները, հիմնարկությունները և ձեռնարկությունները, կոոպերատիվները, արհեստանոցները և այլն, վորոնց տարեկան ընդհանուր արտադրանքի արժեքը 25.000 ռուբլուց ավելի չէ, հետևյալ անդամավճարներն են տալիս:

Մուտքի՝ վո՛չ պակաս 25 ռուբլի:

Տարեկան՝ վո՛չ պակաս 10 ռուբլի:

ԿԽ նախագահության հանձնարարել, վոր նա այդ չկալան կիրառելու վերաբերմամբ կանոնադրություն հրատարակի:

Կենտրոնական Խորհրդին իրավունք վերապահել իրավական անձանց անդամավճարների չափերը հետագայում ավելացնելու՝ ընկերությունների միության աշխատանքի հնգամյա պլանի վերաբերմամբ համագումարի կողմից ընդունված առաջարկներին համապատասխան:

4. Կենտրոնական Խորհրդի նախագահությանը հանձնարարել կազմելու՝ Պաշրավիաքիմի ընկերությունների ստորին բջիջների, խորհուրդների և միջին կազմակերպությունների կանոնադրությունները ու ներկայացնել դրանք Կենտրոնական Խորհրդի առաջիկա պլենումին ի քննություն և ի հաստատություն —տեղական կազմակերպությունների նախնական քննարկությամբ

5. Կենտրոնական Խորհրդի նախագահությանը հանձնարարել, վոր նա միջնորդի ԽՍՀ Միության Կառավարության առջև՝ ԽՍՀՄ Պաշրավիաքիմի Ընկերությունների Միությանը, նրա մեջ միավորված ընկերություններն ու դրանց տեղական կազմակերպությունները, ինչպես նաև դրանց պատկանող ձեռնարկություններն ազատել արհեստավարա-

կան տուրքից՝ նրանց կանոնադրությամբ նախատեսված գործունեության հետ կապված բոլոր օպերացիաների վերաբերմամբ:

6. Կենտրոնական Խորհրդի նախագահությանը հանձնարարել, վոր նա տարեկան անդամավճարներից ստացված գումարների բաշխման տոկոսային սկալան վերաքննի՝ Պաշքավիաքիմի Ընկերությունների միջին և բարձրագույն օղակների ամրապնդման ուղղությամբ՝ նոր սկալան 1930 թվի ապրիլի 1-ից գործադրության մեջ դնելով:



# ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Խորհրդային Միության պաշտպանության ամրապնդմանն աջակցելու գործում Պաշքավիաքիմի բարդացած խնդիրները, Միության աշխատավորների նոր միլիոնավոր մասսաների լայն ընդգրկումը Ընկերության կողմից, Ընկերության աշխատանքի լարված ու բարձր տեմպերը, վոր թելադրվում են նրա հնգամյա պլանի կողմից,— այդ բոլորը պահանջում են, վոր Պաշքավիաքիմի վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքի ձևերն ու մեթոդները վճռականապես վերակառուցվեն և ամրապնդվեն:

2. Պաշքավիաքիմի յերկրորդ համագումարն առաջարկում է Ընկերության կենտրոնական և տեղական վերստուգիչ հանձնաժողովներին, վոր նրանք մի շարք ձեռնարկումներ իրագործեն: Վերջիններս պետք է առաջին հերթին ապահովեն պլանային խնդիրներին վերաբերող վորոշումների ժամանակին և ճշգրիտ իրագործման սիստեմատիկ վերստուգումը, առանձնապես պետք է հետևեն ա՛յն ծրագրի ճշգրիտ իրագործմանը, վոր նշված է Ընկերության հնգամյակով: Այս այդ ձեռնարկումներով պետք է ուժեղացվի ակտիվիստների և Ընկերության անդամների լայն մասսաների ներգրավումը դեպի հետազոտական աշխատանքը, պետք է Ընկերության վերստուգիչ հանձնաժողովներին մասնակցեն Ընկերության ղեկավար մարմինների ամբողջ աշխատանքին ու հենց դրանով աջակցեն վերջիններիս, վոր նրանք ավելի հաջող իրագործեն համագումարի կողմից իրենց առաջադրված խնդիրները:

3. Կազմակերպության աշխատանքի ընթացքում դասակարգային գծի աղավաղում թույլ չտալով, վերստուգիչ հանձնաժողովները միաժամանակ պիտի ապահովեն Ընկերության ֆինանսական-տնտեսական և մատակարարման աշխատանքի նորմալ զարգացումը՝ իրենց հատուկ վերահսկողության տակ առնելով այն աշխատակիցների անձնական կազմը, վորոնք աշխատում են Ընկերության տնտեսական, մատակարարման և առևտրական կազմակերպությունների մեջ: Այս կերպ չպիտի թույլ տրվի, վոր Ընկերության աշխատանքների մեջ մտնեն անհարազատ, մանավոր-կապիտալիստական, կորզողական (рваческий) տար–

ջեր, վորոնք վարկաբեկում են Ընկերությանն ու փորձում են օգտագործել նրան իրենց խմբական նպատակների համար:

4. Յերկրորդ համագումարը հանձնարարում է վերստուգիչ հանձնաժողովներին, վոր նրանք հետևվեն Ընկերության ապարատների վորակական բարելավմանը, դրանց ռացիոնալիզացիային և այդ ապարատների աշխատունակության և պատասխանատվության ուժեղացմանը: Այս բոլորը պետք է արվի Ընկերության ղեկավար մարմինների ակտիվ աջակցելով այնպիսի անձնական կազմ ընտրելու գործում, վորը լրիվին համապատասխանի աշխատանքի նոր տեմպերին և ղեկավարության բարդացած խնդիրներին: Ընկերության ապարատների և առանձին օպերատիվ աշխատողների աշխատանքը պետք է ընթանա այնպես, վոր դրանում առավելագույն չափով ապահովվի հասարակայնության և ըստորին ակտիվի մասնակցությունը, վորի համար պետք է համապատասխան պայմաններ ստեղծվեն, վորոնք ապահովեն այդ հասարակայնության իսկական մասնակցությունը՝ Ընկերության ապարատների աշխատանքներին:

5. Համագումարը հանձնարարում է վերստուգիչ հանձնաժողովին, վոր նա աշխատանքի առավելագույն չափով պարզեցնել Պաշավիաքիմի բոլոր կազմակերպությունների ապարատների աշխատանքը՝ վարչատնտեսական և վերադիր ծախսերը կրճատելու ուղղությամբ վճռական գիծ բռնելով և առավելագույն չափերով ավելացնելով օպերատիվ ծախսերի այն մասը, վոր կապված է Պաշավիաքիմի մասսայական աշխատանքների, գործնական հիմնարկների և ձեռնարկությունների զարգացման և ընդլայնման հետ: Ապարատների աշխատանքի հիմնական սկզբունքները պետք է կայանան ստորին կազմակերպությունների կենդանի ղեկավարության բոլոր ձևերի ուժեղացման մեջ: Վերստուգիչ հանձնաժողովները պետք է վճռական պայքար ծավալեն ընդդեմ բյուրոկրատական ղեկավարության ձևերի, ավելորդ գրագրության, սրտացավ վերաբերմունք չունենալու, ձևականությունների հետևվից ընկնելու, նույնպես և անհող ու անպատասխանատու հրահանգներ տալու:

6. Պաշավիաքիմի յերկրորդ համագումարը հանձնարարում է կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովին, վոր նա պարբերաբար ստուգի խորհուրդների աշխատանքը սոցմրցման պայմանագրերի կնքում կազմակերպելու և իրագործելու վերաբերմամբ, ու Պաշավիաքիմի անդամներին արտադրական հարվածային բանվորական բրիգադների մեջ ներգրավելու ասպարեզում:

7. Վերստուգիչ հանձնաժողովները պետք է համապատասխան վերահսկողություն հաստատեն՝ Ընկերության շարքերում ինքնաքննադատության ու ինքնաստուգման զարգացմանը հետևելու համար: Ինչպես կենտրոնում, նույնպես և տեղերում առավելագույն չափերով պետք է օգտագործվեն կենտրոնական և տեղական մամուլի դիտողությունները Ընկերության աշխատանքի բոլոր ճյուղերի թերությունների և բարելավման ձևերի մասին, այլ և պետք է ամեն կերպ աջակցել, վոր մամուլն զբաղվի այդ խնդիրներով:

8. Համագումարը հանձնարարում է Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովին, վոր նա վճռական միջոցներ ձեռք առնի տեղական վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքի ղեկավարությունը բարելավելու ուղղությամբ՝ ընդամին առանձին ուշադրություն դարձնելով վեր– թյան վրա: Վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքներին պետք է ստուգիչ հանձնաժողովների աշխատանքների փորձերի փոխանակու– առավելագույն հնարավորություն ապահովել մասնակցելու Ընկերության բոլոր ղեկավար մարմինների՝ նրա խորհուրդների, նախագահությունների, հանձնաժողովների և այլն, աշխատանքներին, վորով կապահովվի ղեկավարության միասնությունն ու աշխատանքի լիակատար կոնտակտը:

9. Յելնելով Ընկերության բուռն աճման հեռանկարից, պաշտպանության աջակցության բնագավառի բարդացած խնդիրներից, Պաշավիաքիմի աշխատանքին առաջադրված ավելի մեծ պահանջներից, նոր յարված տեմպերից՝ վերստուգիչ հանձնաժողովները պետք է Պաշավիաքիմի իսկական մարտական մարմինները դառնան, վճռականապես վերակառուցեն և բարելավեն իրենց աշխատանքի զանազան կողմերն ու մեթոդները՝ դրանք միանգամայն համապատասխան դարձնելով նոր պահանջներին ու խնդիրներին:

Վերստուգիչ հաձնաժողովների աշխատանքներն ակտիվացնելու նպատակով, Համագումարն առաջարկում է ԿԿ և տեղական բոլոր կազմակերպություններին, վոր նրանք ավելի մեծ ուշադրություն դարձնեն Ընկերության ակտիվից աշխատունակ աշխատավորներ ընտրելու ու դրանց վերստուգիչ հանձնաժողովների կազմի մեջ մտցնելու խնդրին. դա պետք է անեն կենտրոնական կազմակերպություններից սկսած մինչև տեղական, ստորին կազմակերպությունները: Վերստուգիչ հանձնաժողովների կազմի մեջ մտցվելիք աշխատավորները պետք է ընտրվեն այնպիսիք, վորոնք ստուգված և գործնական աշխատանքներում առաջ քաշված են ու կարող են կազմակերպության գործնական աշխատանքի բազմակողմանի կոնտրոլի և վերստուգման աշխատանքին մասնակցել:

# ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

I

Ապագա զինված ընդհարումների չափերն ու բնույթն այնպես են, վոր դրանք ակտիվ կռվի կներգրավեն յերկրի ամբողջ բնակչությանը: Դրա համար և Խորհրդային Միության ակտիվ պաշտպանության գործում պատանի պիոներների, դպրոցականների ու ընդհանրապես բոլոր յերեխաների դերի և տեղի ճշգրիտ վորոշման անհրաժեշտությունը առաջնակարգ խնդիր է հանդիսանում:

II.

Պատերազմի գործիքների մեխանիզացիայի և մեծ չափերով զարգացած տեխնիկայի պայմաններում՝ մարտիկի դաստիարակության ժամանակակից պահանջները և կռվին մասնակցողի անձնական հատկությունների յերկարատև դաստիարակության անհրաժեշտությունը առաջ են քաշում ու հերթական խնդիր դարձնում ապագա բանակայիններին արդեն պիոներական հասակից ռազմական, քաղաքական, տեխնիկական և ֆիզիկական դաստիարակություն տալու հարցը, վոր պետք է հարկ յեղած եֆֆեկտը տա նախակոչային նախապատրաստման և ԲԳԿԲ կոմպլեկտավորման գործում:

III.

Յերրորդ սերնդի ռազմական դաստիարակության գործում Պաշտավիաքիմի, կոմյերիտմիության և պիոներների բյուրոյի աշխատանքը մինչև այժմ չափազանց թույլ, անսիստեմ է տարվել և մի շարք թերություններ է ունեցել, վորոնցից առավել կարևորն են հետևյալները.

1. Միասնական մարմնի բացակայությունը, վորը ղեկավարեր և ուսումնասիրեր յերեխաների ռազմա-քաղաքական դաստիարակության գործը:

2. Ժողովրդական եժան գրականության բացակայությունը և զինական պիտույքների ու փոքր կալիբրի հրացանների թանկությունը:

3. Միջոցների անբավարարությունը՝ խմբակների, ճամբարների (լագերների) աշխատանքը և պատանի պիոներների զինվորական խաղեր կազմակերպելու համար:

4. Յերեխաներին Պաշտավիաքիմի մասսայական ձեռնարկումներին



(մանյովրներ, խաղեր, փորձնական տագնապներ և այլն) վոչ բավարար չափով մասնակից դարձնելը:

IV

Յերեխաների ռազմական, ռազմաքաղաքական և ֆիզկուլտ աշխատանքի աշխուժացման համար վորպես գործնական առաջարկներ անհրաժեշտ համարել հետևյալ ձեռնարկումների ի կատար ածումը.

1. Պաշտավիաքիմին կից կազմակերպել «Պաշտավիաքիմի պատանի բարեկամների Ինստիտուտ»՝ տարեկան 20 կոպեկ մուծումով:

Ծանոթություն.— «Պաշտավիաքիմի պատանի բարեկամների կազմակերպման» հարցը մտցնել Պաշտավիաքիմի կանոնադրության մեջ:

2. «Պաշտավիաքիմի պատանի բարեկամների» աշխատանքը ղեկավարելու համար կենտրոնում և տեղերում Պաշտավիաքիմի խորհուրդներին կից կազմակերպել յերեխաների մեջ աշխատելու խորհրդակցություններ, վորոնց աշխատանքների մեջ մտնում է հետևյալը.

ա) յերեխաների ռազմական նախապատրաստման միասնական ծրագիր-սիստեմի մշակումը.

բ) պատանի բարեկամների խմբակների ու արհեստանոցների ղեկավարումը.

գ) յերեխաների մեջ աշխատելու մասսայական ձեռնարկումների կազմակերպումը և այլն:

3. Պաշտավիաքիմի և պատանի պիոներների կազմակերպության աշխատանքի ծրագրի մեջ մտցնել հետևյալ կոնկրետ ձեռնարկումները՝ յերեխաների մեջ աշխատելու վերաբերմամբ.

ա) յերեխաների ամբողջ մասսայի և առաջին հերթին պատանի պիոներների կոլեկտիվների մեջ կազմակերպված յերեխաների ներգրավումը Պաշտավիաքիմի աշխատանքի այն հիմնական տեսակների և ձևերի մեջ, վորոնցում թույլատրված է յերեխաների մասնակցությունը:

բ) ինչպես քաղաքի, այնպես և գյուղի առաջին աստիճանի դպրոցում ռազմական նախապատրաստության հարցի լայն արմատավորումը:

գ) Պաշտավիաքիմի ոգնությամբ, պատանի պիոներների միջոցներով, ռազմականացված ճամբարների ցանցի կազմակերպում՝ պիոներական հասակի յերեխաների համար:

դ) պատանի պիոներների ռազմական նախապատրաստման համար ղեկավարների կադրերի նախապատրաստում Պաշտավիաքիմի միջոցներով՝ առավելապես պիոներական և կոմյերիտական զորացրված աշխատավորների կազմից:

յե) եժան և յերեխաներին հասկանալի ռազմական գրականության

մի շարք սերիաների հրատարակություն, այլ և գննական պլակատների մշակում՝ Պետհրատի, «Молодая Гвардия»-ի և այլ հրատարակությունների միջոցներով:

դ) յերեխաների ռազմական աշխատանքի գործում Պաշտավիաքիմի կազմակերպությունների նյութական մասնակցություն ու այդ նպատակով պրոֆմիութենական, տնտեսական և այլ կազմակերպություններից նյութական միջոցների ներգրավում:



# ԳԻՏԱԿԱՆ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ռազմական-գիտական-հետազոտական աշխատանքն Ընկերության առանցքային խնդիրներից մեկը համարելով՝ համագումարն անհրաժեշտ է գտնում այս ուղղությամբ վճռական բեկում առաջ բերել Պաշտավիաքիմի Միության բոլոր կազմակերպությունների գործունեյության մեջ: Համագումարն անհրաժեշտ է համարում սույն թվի մարտին Համամիութենական հատուկ խորհրդակցություն հրավիրել՝ գիտական հետազոտական բնագավառում աշխատանքի դրման և կազմակերպման հարցի վերաբերմամբ:

Խորհրդակցության քննարկմանը յենթակա կարեվորագույն խնդիրներից մեկը պետք է լինի Պաշտավիաքիմի կողմից բանակային կազմակերպությունների մեջ գիտական-հետազոտական աշխատանք դնելու հարցը:

Կենտրոնական խորհրդի նախագահությունը և Ընկերության տեղական կազմակերպություններն անհապաղ պետք է ձեռնարկեն խորհրդակցության նախապատրաստմանը, վորպեսզի ապահովեն այն խնդիրների սպառիչ լուծումը, վորոնք առաջադրվում են Ընկերության ռազմական-գիտական հետազոտական աշխատանքի բնագավառում՝ այդ աշխատանքի խոշոր թերությունները շտապ կերպով վերացնելու ու այդ աշխատանքը պատշաճ բարձրության վրա դնելու ուղղությամբ:

## «Տեխմասի» մասին

Լսելով «Տեխմաս» Ընկերության վողջույնը, Պաշտավիաքիմի յերկրորդ համագումարը վորոշում է Ընկերության հետագա աշխատանքի ընթացքում սերտ կապ պահպանել «Տեխմասսի» հետ՝ ռազմա-տեխնիկական և քիմիական աշխատանքի բնագավառում գործողությունները համաձայնեցնելու և միավորելու համար:

Հավելված № 1.

# ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Բանաձևի 1-ին կետի համապատասխան՝ գլխավոր քարտուղարի իրավունքները ճշգրտելու վերաբերմամբ, նրա փաստորեն ունեցած իրավունքներն ամրապնդելու իմաստով՝ ԽՍՀՄ Պաշքավիաքիմի Միության կանոնադրության §§ 27, 28 և 29 ընդունվում են հետևյալ խմբագրությամբ:

§27. Նախագահության նիստերի միջև ընկած ժամանակամիջոցում ընկերությունների միության գործունեությունը ղեկավարում են նախագահը և նախագահի տեղակալը՝ Ընկերությունների Միության գլխավոր քարտուղարի հետ միասին: Կարևորագույն ղեկավար դիրեկտիվները, նույնպես և կարևորագույն հավատարմագրերը Ընկերությունների Միության անունից ստորագրվում են Ընկերությունների Միության նախագահի կամ նրա տեղակալներից մեկի և գլխավոր քարտուղարի կողմից: Նախագահը, նրա տեղակալը և գլխավոր քարտուղարը բոլոր դեպքերում իրավունք ունեն հանդես գալ ԽՍՀՄ Պաշքավիաքիմի Ընկերությունների Միության, նրա Կենտրոնական Խորհրդի և նրա նախագահության անունից:

§ 28. Գլխավոր քարտուղարը վարում է Ընկերությունների Միության գործունեության առօրյա ղեկավարությունը, նախագահության ցուցումների և վորոշումների համաձայն, առավել սկզբունքային խնդիրների վերաբերմամբ դիմելով նախագահին և նրա տեղակալներին: Գլխավոր քարտուղարը պատասխանատու յե հանդիսանում նախագահության վորոշումների ժամանակին իրագործման համար, նաև նյութեր է նախապատրաստում նախագահության և Կենտրոնական Խորհրդի նիստերի համար:

§ 29. Բանաձևի կետ 6-ի հիման վրա՝ տարեկան անդամավճարների գումարը բաշխելու տոկոսային սկալայի փոփոխման մասին հարցը Պաշքավիաքիմի Ընկերությունների միջին և վերին ողակների ամրապնդման, նաև նկատի ունենալով, վոր Պաշքավիաքիմի բջիջների յեկամուտներն ավելացել են՝ շնորհիվ արհմիությունների կուլտֆոնդային հատկացումների և Պաշքավիաքիմի համամիութենական վիճակախաղերի շահումների հաշվողական ավելացման, այլ և այն պատճառով, վոր



Պաշքավիաքիմի գործնական աշխատանքների զգալի մասը բջիջի գործունեության սահմանից դուրս է յեկել, — նկատի ունենալով այս բոլորը, 1930 թվի ապրիլի 1-ից մտցնել հավաքված տարեկան անդամավճարների տոկոսական բաշխման հետևյալ սկալան:

- Ընկերության բջիջին 35 տոկոս առաջվա 50 տոկոսի փոխարեն.
- Ռայոն. ընկ-յան 20 տոկոս առաջվա 15—20 տոկոսի փոխարեն.
- Գավառ. ընկ.-յան 20 տոկոս առաջվա 15 տոկոսի փոխարեն.
- Մարզային և Յերկ. ընկ. 10 տոկ. առաջվա 5 տոկոսի փոխարեն.
- Միութենական հանրապ. ընկ-յան 10 տոկ. առաջվա 5 տոկոսի փոխ.
- Պաշքավիաքիմի Միության 5 տոկոս առաջվա 5 տոկոսի փոխարեն:

Ծանոթություն.— Այն կոլտնտեսականները, վորոնց աշխատավարձը չափավորված է, վճարում են ստացած աշխատավարձի համապատասխան չափերով, վոր հաստատված է աշխատավորների մնացյալ կատեգորիաների համար:

Ծանոթություն.— Այն դեպքերում, յերբ տվյալ վայրում վորևէ ողակ բացակայում է, դրան հասնող տոկոսները հավասարաչափ վերաբաշխվում են անմիջական ստորադաս ողակի և անմիջական վերադաս ողակի միջև: Այսպես, որինակ՝ մարզային և յերկրային կենտրոնների քաղաքային ռայոնական ընկերությունները, վորոնք անմիջականորեն միավորվում են մարզային կամ յերկրային ընկերությունների միջոցով, գավառական ընկերությունների բացակայության պատճառով, ստանում են վոչ թե 20 տոկոս, այլ 30 տոկոս, իսկ մարզային և յերկրային ընկերությունները այդ դեպքերում ստանում են վոչ թե 10 տոկ., այլ 20 տոկոս: Դաշնակից հանրապետությունների այն ընկերությունների մեջ (ՌՍՖՍՀ, ԲՍԽՀ, ԹՍԽՀ, ՈՒԶՍԽՀ, ՏԱՃՍԽՀ), վորոնցում բացակայում են մարզային, յերկրային և ինքնավար հանրապետական ընկերությունները, այն 10 տոկոսը, վոր պիտի հասներ բացակա ընկերություններին, հավասարաչափ բաշխվում է գավառական և միութենական-հանրապետական համապատասխան ընկերությունների միջև, վորոնք այդպիսով համապատասխան չափերով ստանում են վոչ թե 20 տոկոս և 10 տոկոս, այլ 25 տոկոս և 15 տոկոս:

ԱՐԽԻՎ
ԳՐԱԴԱՐԱՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | Էջ |
|---|---|
| 1. Առաջաբան | 3 |
| 2. Պաշըավիաքիմի հերթական խնդիրները | 4 |
| 3. Ընկերության աշխատանքների հնգամյա պլանի մասին | 15 |
| 4. Աշխատավորների ռազմական նախապատրաստումը | 21 |
| 5. Քիմիզացիան և ԽՍՀՄ-ի ռդաքիմիական պաշտպանությունը | 31 |
| 6. Ավիացիոն աշխատանքի մասին | 40 |
| 7. Ագիտպրոպաշխատանքի հերթական խնդիրները | 45 |
| 8. Աշխատավոր կանանց պաշտպանության նախապատրաստելու հերթական խնդիրները | 63 |
| 9. Կանոնադրական հարցեր | 71 |
| 10. Վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքի մասին | 75 |
| 11. Պլեներների նախապատրաստումը | 78 |
| 12. Ֆինանսական-հաշվապահական աշխատանքի մասին | 81 |
| 13. Կենտրոնական խորհրդի նախագահության վորոշումը | 82 |


## ՀՍԽՀ ՊԱՁԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

| | ԿՈՊ. |
|---|---|
| 1. Ա. Բաղդասարյան.—«Սովորիր ռազմական գործը» | 25 |
| 2. Ա. Բաղդասարյան.—«Հայկական դիվիզիայի անցյալից» | 20 |
| 3. Լիտովցև.—«Տեխնիկան պատերազմում» | 10 |
| 4. ՊԱՁԸ-Ավիաքիմի բջիջներին կից ոդա-քիմիական պաշտպանության խմբակներ (ծրագրեր և կազմակերպչական մեթոդական խնդիրներ) | 10 |
| 5. Բանաձևեր ՀՍԽՀ ՊԱՁԸ-Ավիաքիմի Հայաստանյան 2-րդ համագումարի | 5 |
| 6. Ռոզանով.—«Ի՞նչ և ինչպե՞ս պետք է անել մոդելիստների խմբակներում» | 10 |
| 7. Վ. Ցեյտլին.— «Աղավնիները ռազմական ծառայության մեջ» | 10 |
| 8. Ս. Բելով.—«Ինչպես սովորել հրացանով ճիշտ կրակել» | 10 |
| 9. Վ. Ցագիկով.—«Շունը ռազմական ծառայության մեջ» | 15 |
| 10. Բժիշկ դոկտոր Յա. Ֆիշման.—«Քիմիան ժողովրդական տնտեսության և պաշտպանության մեջ» | 15 |
| 11. Ծրագիր հետևակի I աստիճանի ռազմական գիտելիքների խմբակների | 10 |
| 12. Հրահանգ ՊԱՁԸ-Ավիաքիմի 4-րդ վիճակախաղն անցկացնելու համար | — |
| 13. Վ. Լեոնտև.—«Հրաձգային խմբակը և նրա կառուցվածքը» | 12 |
| 14. Լ. Բեկլովսեփյան.—«Կարտոզրինայի թրթուռը և պայքարը նրա դեմ» | 10 |
| 15. Ռ. Խոսրոյեվ.—«Հրդեհաշեջ գործի համառոտ ձեռնարկ ողաքիմիական պաշտպանության հրահանգիչների համար» | 8 |
| 16. Ի. Կուպրեյև.—«Փոստային աղավնապահության համառոտ ձեռնարկ սկսնակ սիրողների համար» | 15 |
| 17. Ցև. Մովսիսյան.—«Քիմիան գյուղատնտեսության մեջ» | 15 |
| 18. ՊԱՁԸ-Ավիաքիմի օրինակելի ծրագիր պիոներների մեջ ռազմական աշխատանք կատարելու համար | 15 |
| 19. Դ. Բաբայան.—«Ի՞նչ է մրիկը և ինչպես նրա դեմ կռվել» | 2 |
| 20. Մ. Չայլախյան.—«Ինչպես փորձեր դնել հանքային պարարտանյութերով» | 25 |
| 21. Ա. և Դ. Բաբայան.—«Խաղողի վազի ոիդիում հիվանդությունը և նրա դեմ պայքարելու միջոցները» | 1 |
| 22. Ա. և Դ. Բաբայան.—«Խաղողի վազի միլդիու հիվանդությունը և նրա դեմ պայքարելու միջոցները» | 1 |
| 23. Ա. և Դ. Բաբայան.—«Խաղողի վազի անտրակնոզ կամ «սև ծաղիկ» հիվանդությունը և նրա դեմ պայքարելու միջոցները» | 1 |
| 24. Ա. և Դ. Բաբայան.—«Կարտոֆիլի հիվանդությունը և նրա դեմ պայքարելու միջոցները» | 1 |
| 25. Միջատաբան Մ. Մակարյան.— «Կեղևավակեր միջատները պտղատու այգիներում և նրանց դեմ մղվելիք կռվի միջոցները» | 7 |
| 26. Նույնի.— «Այգեգործության վնասատուների դեմ գործադրվող գլխավոր քիմիական նյութերը» | [illegible] |

ՀՀ Ազգային գրադարան
NL0766571

II
24452

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.